

ՇԵՔՍՊԻՐ

ՄԱԿԲԵԹ

ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՀԻՆԳ ԱՐԱՐՎԱԾՈՎ

- ԴՈՒՆԿԱՆ – թագավոր Սկոտլիայի,
- ՄԱԼԿՈՄ, ԴՈՆԱԼԲԵՅՆ – նրա որդիք,
- ՄԱԿԲԵԹ, ԲԱՆՔՈ – գորավարներ,
- ՄԱԿԴՈՒՖ, ԼԵՆՈՔՍ, ՌՈՍ, ՄԵՆՏԵԹ, ԱՆԳՈՒՍ, ԿԱԹՆԵՍ – սկոտլիական ազնվականներ,
- ՖԼԻՆՍ – Բանքոյի որդին,
- ՄԻՎԱՐԴ – կոմս Նորթումբերլանդ, գորավար, անգլ. գորքի,
- ԿՐՏՍԵՐ ՄԻՎԱՐԴ – նրա որդին,
- ՍԵՅՏՈՆ – Մակբեթի թիկնապահ մի սպա,
- ՄԱԿԴՈՒՖԻ ՓՈՔՐ ՏՂԱՆ,
- ՄԻ ԱՆԳԼԻԱՅԻ ԲԺԻՇԿ,
- ՄԻ ՍԿՈՎՏԻԱՅԻ ԲԺԻՇԿ,
- ՄԻ ԶԻՆՎՈՐ,
- ՄԻ ԴՈՆԱՊԱՆ,
- ՄԻ ԾԵՐՈՒԿ,
- ԼԵԴԻ ՄԱԿԲԵԹ,
- ԼԵԴԻ ՄԱԿԴՈՒՖ
- ՄԻ ԱԶՆՎԱԿԱՆ ԿԻՆ՝ լեդի Մակբեթին սպասարկու:
- Լորդեր, ազնվականներ, սպաներ, զինվորներ, մարդասպաններ, սպասավորներ, սուրհանդակներ:
- Հեկատե, երեք վիուկ, տեսիլներ:

Տեսարան, Սկոտլիա և Անգլիա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- [Արարված առաջին](#)
- [1.1 Տեսարան առաջին](#)

- [1.2 Տեսարան երկրորդ](#)
- [1.3 Տեսարան երրորդ](#)
- [1.4 Տեսարան չորրորդ](#)
- [1.5 Տեսարան հինգերորդ](#)
- [1.6 Տեսարան վեցերորդ](#)
- [1.7 Տեսարան յոթերորդ](#)

- [Արարված երկրորդ](#)

- [2.1 Տեսարան առաջին](#)
- [2.2 Տեսարան երկրորդ](#)
- [2.3 Տեսարան երրորդ](#)
- [2.4 Տեսարան չորրորդ](#)
- [Արարված երրորդ](#)
- [3.1 Տեսարան առաջին](#)
- [3.2 Տեսարան երկրորդ](#)
- [3.3 Տեսարան երրորդ](#)
- [3.4 Տեսարան չորրորդ](#)
- [3.5 Տեսարան հինգերորդ](#)
- [3.6 Տեսարան վեցերորդ](#)
- [Արարված Չորրորդ](#)
- [4.1 Տեսարան առաջին](#)
- [4.2 Տեսարան երկրորդ](#)
- [4.3 Տեսարան երրորդ](#)
- [Արարված հինգերորդ](#)
- [5.1 Տեսարան առաջին](#)
- [5.2 Տեսարան երկրորդ](#)
- [5.3 Տեսարան երրորդ](#)
- [5.4 Տեսարան չորրորդ](#)
- [5.5 Տեսարան հինգերորդ](#)
- [5.6 Տեսարան վեցերորդ](#)
- [5.7 Տեսարան յոթերորդ](#)

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Բացօդյա մի տեղ: Որոտ և կայծակ:

Գալիս են երեք վհուկ:

Ա. ՎՀՈՒԿ

Ե՞րբ պիտի մենք կրկին խմբվենք երեքով՝
Որոտով ու կայծակով կամ անձրևով:

Բ. ՎՀՈՒԿ

Երբ թոհուրոհն ավարտվի,
Մեկը հաղթի, մյուսն հաղթվի:

Գ. ՎՀՈՒԿ

Դա կլինի, անկասկած,
Դեռ արևը չմտած:

Ա. ՎՀՈՒԿ

Եվ տեղն ո՞ւր:

Բ. ՎՀՈՒԿ

Ցախուտը:

Գ. ՎՀՈՒԿ

Այնտեղ տեսնենք Մակբեթին:

Ա. ՎՀՈՒԿ

Եկա, եկա, Գրեյմալքին:

ԱՄԵՆՔԸ

Պաղոկն, ահա կանչում է:– Գալիս ենք:
Լավը վատ է, վատը՝ լավ:

Եկեք ճախրենք մեզի մեջ
Եվ ժանտահոտ օդի մեջ:

Վհուկները չքանում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Ֆորեսի մոտ մի բանակ: Ժխոր:

*Գալիս են արքա Դունկանը, Սալկոմը, Դոնալբեյնը, Լոնքոսը,
սպասավորներ՝ հանդիպելով մի արյունաթաթախ սպայի:*

ԴՈՒՆԿԱՆ

Ո՞վ է դա այդպես արյունաթաթախ, գուցե կարող է,
Ինչպես թվամ է իր արտաքինից,
Ապստամբության նորագույն ելքից տեղեկություն տալ:

ՄԱԼԿՈՄ

Մա այն սպան է, որ, իբրև կարիճ զինվոր կռվելով,
Ինձ գերությունից ազտաեց:– Բարև, դու քաջ բարեկամ.
Պատմիր արքային կառվի վիճակը, երբ որ հեռացար:

ՄՊԱ

Անորոշ վիճակ, ինչպես երբ երկու ուժասպառ լողորդ
Իրար կանչելով՝ իրենք են խեղդում իրենց արվեստը:
Ժանտ Մակդոնվալդը, որին վայել էր ապստամբ լինել,
Քանզի նրա մեջ մարդկային բնության գարշությունները
Անդադար վիստում, բազմանում էին, նոր ուժ էր առել
Գալլոուգլասների և այն քերների հրոսակներով,
Որ արևմտյան կղզիներն իրեն հայթայթել էին.
Բախտն էլ, ժպտալով նրա գարշելի կռվազանության,
Մի ապստամբի պոռնիկն էր դարձել, բայց բոլորն իզո՛ւր.
Կտրիճ Մակբեթը, իրավ արժանի այդպես կոչվելու,
Արհամարհելով բախտը և սուրբ շողշողացնելով,
Որ դեռ ծխում էր իր արյունահեղ պատժագործումից,

Որպես քաջության փայփայած սանր, կտրեց և անցավ.
Մինչև որ կանգնեց այն ստրուկի դեմ:
Ո՛չ ձեռքը թոթվեց և ո՛չ էլ նրան գնաս-բարով ասաց,
Այլ ճեղքեց պորտից մինչև ծնոտը
Եվ գլուխը տնկեց պատնեշի վրա:

ԴՈՒՆԿԱՆ

Ա՛հ, քա՛ջ ազգական, արժանի՛ սեպուհ:

ՄՊԱ

Ինչպես այնտեղից, որ սկսում է արևը ծագել.
Պոռթկում են որոտն ու նավակործան փոթորիկները:
Հենց նույն աղբյուրից, որից օրհնություն պիտի միշտ բխեր,
Աղետ է, հորդում: Ուշ դիր ինձ, ուշ դիր, Սկովտիո արքա.
Արդարությունը, արիությանբ զինված,
Նոր էր ստիպել ցատկող քերներին փաուստի դիմել,
Երբ նորվեգացին, որ ակնդետ էր պատեհ առիթի.
Շողուն զենքերով և նոր ուժերով հարձակում գործեց:

ԴՈՒՆԿԱՆ

Դա չվախեցրե՞ց Մակբեթ և Բանքո գորավարներին:

ՄՊԱ

Հենց այնքան, որքան ճագարն՝ առյուծին կամ ճնճղուկն՝ արծվին:
Եթե ճիշտն ասեմ, պետք է ես նրանց նմանեցնեմ
Չափազանց լցրած թնդանոթների՝ կրկնակի ճայթով,
Որոնք կրկնակի կրկին հարվածներ տեղացնում էին
Թշնամու գլխին. թե՞ արդյոք նրանք որոշել էին
Ծխուն վերքերի արյան մեջ լողալ,
Կամ հավերժացնել մի նոր Գողգոթա . չեմ կարող ասել,
Բայց թալկանում եմ. վերքերս օգնությո՛ւն աղաղակում են:

ԴՈՒՆԿԱՆ

Խոսքերդ նույնչափ վայելում են քեզ, որչափ վերքերդ,
Երկունսն էլ նույնչափ պատվի բույր ունեն:
– Գնացեք իսկույն և վիրաբույժներ բերեք իր համար:

Մպային դուրս են տանում: Գալիս է Ռոսը:

Այս ո՞վ է գալիս:

ՄԱԼԿՈՍ

Ռոսի քաջ թենը:

ԼԵՆՈՔՍ

Որպիսի՜ շտապ արտափայլում կա նրա աչքերում.
Մի մարդու դեմք է, որ անեղ բաներ ունի պատմելու:

ՌՈՍ

Աստված պահապան մեր թագավորին:

ԴՈՒՆԿԱՆ

Որտեղի՞ց եկար դու. հարգելի թեն:

ՌՈՍ

Ֆայֆից, մեծ արքա,
Ուր նորվեգական վես դրոշակները երկինքն են ծաղրում
Եվ մերոնց վրա պաղ հով են փչում:
Նորվեգն ինքը, ահագին թվով,
Նաև դավաճան Կավդորի թենի օժանդակությամբ,
Մի սարսափելի պայքար սկսեց,
Երբ բելլոնայի այն սիրեցյալը, անթափանց գրահով,
Ելավ նրա վեմ չափվելու համար.
Սուրն ընդդեմ նրա ապստամբ սրի, բազուկը՝ բազկի
Հաղթահարելով նրա լիրբ ոգին և վերջ ի վերջո,
Հաղթության բախտը մեզ բաժին ընկավ:

ԴՈՒՆԿԱՆ

Մե՛ծ երջանկություն:

ՌՈՍ

Եվ հիմա Ավենոն՝ Նորվեգիո արքան,
Ինքն է մեզանից հաշտություն հայցում:
Բայց մենք չուզեցինք թույլաարել, որ նա իր մարդկանց թաղի,
Մինչև որ համրեց, սուրբ Կոլոմբ կղզում,
Տասն հազար դոլլար հոգուտ ընդհանուր մեր գործածության:

ԴՈՒՆԿԱՆ

Կավդոսի թենը չի խաբի մեկ էլ սրտագին սերս:
– Գնա, հրապարակիր այդ մարդու մահը,
Հետո Մակբեթին ողջունիր նրա նախկին տիտղոսով:

ՌՈՍ

Գնում եմ, տեր իմ:

ԴՈՒՆԿԱՆ

Ինչ որ նա տուժեց, Մակբեթը շահեց:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Մի ցախուտ: Որոտ:

Գալիս են երեք վհուկները:

Ա. ՎՀՈՒԿ

Ո՞ր էիր, քույր:

Բ. ՎՀՈՒԿ

Խոզ մորթելու:

Գ. ՎՀՈՒԿ

Քույր, դո՞ւ որտեղ:

Ա. ՎՀՈՒԿ

Մի նավաստու կին շագանակ ուներ իր գոգնոցի մեջ.
Ծամում էր, ծամում էր, ծամում: «Տուր ինձ»,– ասացի:
«Կորի՛ր, չար վհուկ»,– գոռաց հասաափոր քոսոտ պառավը,
Նրա ամուսինն Ալեպպո է այժմ
Եվ նավապետ է Տիգրիսի վրա:
Բայց նավի մեջ կնստեմ
Եվ մի պոչատ մկան պես
Մինչև այնտեղ կնավեմ.
Կանեմ, կանեմ, կանեմ ես:

Բ. ՎՀՈՒԿ

Ես էլ կտամ մի քամի:

Ա. ՎՀՈՒԿ

Շատ բարի:

Գ. ՎՀՈՒԿ

Մեկն էլ ես:

Ա. ՎՀՈՒԿ

Բոլոր մյուսներն ունեմ ես
Եվ լավ գիտեմ այն կողմերը,
Ուր փչում են հողմերը,
Նավապետի գարտեզի մեջ
Նշանակված կետերը:
Այնպես հյուծեմ ես նրան,
Որ խոտի պես չորանա,
Ոչ գիշերը, ոչ ցերեկ
Քունը աչքին մոտենա:
Եվ նա կապրի նգովված

Եվ հալումաշ կլինի,
Ինը յոթնյակ, ինը հերթ
Կչարչարվի, կտքնի:
Նավն ընկղմել կարող չեմ,
Բայց ալեկոծ կտանջեմ:
– Տեսեք, տեսեք ի՞նչ ունեմ:

Բ. ՎՀՈՒԿ

Ցույց տուր, ցույց տար մեզ:

Ա. ՎՀՈՒԿ

Մի նավասառու սա բութն է,
Որ տուն գալիս ընկղմվեց:

Թմբուկի ձայն:

Գ. ՎՀՈՒԿ

Թմբո՞ւկ, թմբո՞ւկ, Մակբեթն է:

ԱՄԵՆՔԸ

Վհուկ քույրեր, սուրհանդակներ
Ծովերի ու ցամաքի,
Այսպես կազմում են շրջան,
Պտույտ գործում ձեռք-ձեռքի:
Երեք անգամ քեզ համար, Երեք անգամ ինձ համար,
Մեկ էլ երեք թող դասնա,
Ինը պտույտ լրանա:
Մուս, դյութանքը կատարվեց:

Գալիս են Մակբեթը և Բանքոն:

ՄԱԿԲԵԹ

Երբեք այսպիսի լավ և վատ մի օր դեռ տեսած չկամ:

ԲԱՆՔՈ

Որքա՞ն է մնացել դեռ մինչև Ֆորես:
Վա՛հ, սրանք ի՞նչ են այսպես խորշումած,
Այսպես այլանդակ զգեստներ հագած:
Նման չեն երկի բնակիչների, բայց երկրի վրա են:
Կենդանի՞ եք դուք, կամ թե այնպիսի՞ արարածներ եք,
Որոնց կարող է մարդ հարցում անել:
Դուք հասկանում եք, ինչպես տեսնում եմ, իմ ասածները,
Քանի որ այդպես ամենքդ մեկեն ճաքած մատներդ
Դրիք ձեր կաշի շրթունքի վրա: Կին պետք է լինեք,
Բայց ձեր մորուքը արգելում է ինձ, որ այդպես կարծեմ:

ՄԱԿԲԵԹ

Եթե կարող եք, խոսեցեք, ի՞նչ եք:

Ա. ՎՀՈՒԿ

Ողջո՛ւյն քեզ, Մակբե՛թ, ողջունում ենք քեզ, ո՛վ թեն Գլամիսի:

Բ. ՎՀՈՒԿ

Ողջո՛ւյն քեզ, Մակբե՛թ, ողջունում ենք քեզ, ո՛վ թեն Կավդորի:

Գ. ՎՀՈՒԿ

Որջո՛ւյն քեզ, Մակբեթ, որ ապագայում արքա կլինես:

ԲԱՆՔՈ

Միրելի տեր իմ, ինչո՞ւ եք ցնցվում
Եվ այսքան հաճո հնչող բաներից սարսափած թվում:
– Հանուն ճշմարտության, պատրա՞նք եք արդյոք,
Թե՞ այն եք իրոք, ինչ որ արտաքուստ երևում եք մեզ:
Ազնիվ ընկերներիս դուք ողջունեցիք ներկա շնորհով
Եվ գուշակությամբ մե՞ծ ստացվածքի:
Նույնիսկ հույս տվիք թագավորության,
Որով նա կարծես հափշտակված է, իսկ ինձ չեք խոսում:
Եթե կարող եք դուք ժամանակի սերմերին նայել

Եվ ասել, ի՞նչ սերմ պտուղ պիտի տա և ի՞նչ սերմը՝ ոչ,
Խոսեցեք ինձ էլ, ի՛նձ, որ ոչ ձեզանից շնորհ եմ հայցում,
Ոչ էլ վախենում ձեր չարիքներից:

Ա. ՎՀՈՒԿ

Ողջո՛ւյն:

Բ. ՎՀՈՒԿ

Ողջո՛ւյն:

Գ. ՎՀՈՒԿ

Ողջո՛ւյն:

Ա. ՎՀՈՒԿ

Պակաս քան Մակբեթ, բայց ավելի մեծ:

Բ. ՎՀՈՒԿ

Պակաս երջանիկ, բայց շատ ավելի:

Գ. ՎՀՈՒԿ

Թագավորների ծնող կղառնաս, բայց ոչ թագավոր:

Ուրեմն, ողջո՛ւյն, Մակբե՛թ և Բանքո՛ւ :

Ա. ՎՀՈՒԿ

Բանքո՛ւ և Մակբե՛թ, ողջո՛ւյն ձեզ, ողջո՛ւյն:

ՍԱԿԲԵԹ

Սպասեցեք դեռ, թերի՛ գուշակներ:

Դեռ ուրիշ բան էլ պետք է հայտնեք ինձ:

Մինելի մահով՝ գիտեմ, թե ես եմ Գլամիսի թենը,

Բայց ինչպե՞ս Կավդոր, Կավդորի թենը դեռ կենդանի է

Եվ փառք ու պատիվ ազնվական է:

Իսկ արքա լինել՝ դուրս է հավատքիս հեռապատկերից,

Որչափ որ դուրս է Կավդոր լինելու: Ասացեք դուք ինձ,

Որտեղի՞ց առաք այդ տարօրինակ տեղեկությունը:
Կամ թե ինչո՞ւ եք այս խորշակահար ցեխաստանի մեջ
Մարգարեական ձեր ողջույններով մեր ճամփան կտրում:
Խոսեցեք, ուրեմն, պարտադրում եմ ձեզ:

Վհուկներն անհետանում են:

ԲԱՆՔՈ

Երկիրն էլ, ուրեմն, պղպջակ ունի, ինչպես որ ջուրը.
Սրանք էլ երկրի պղպջակներն են: Որտե՞ղ չքացան:

ՄԱԿԲԵԹ

Ցնդեցին օդում, ինչ որ մարմնեղեն երևում էր մեզ,
Հավվեց, ինչպես որ շունչը հողմի մեջ:
Կուզեի՝ նրանք կեցած լինեին:

ԲԱՆՔՈ

Կայի՞ն իսկապես այդպիսի բաներ,
Թե՞ մենք խենթացնող արմատ ենք կերել.
Որ առողջ միտքը գերի է դարձնում:

ՄԱԿԲԵԹ

Ձեր գավակները կթագավորեն:

ԲԱՆՔՈ

Իսկ դուք ինքներդ կթագավորեք:

ՄԱԿԲԵԹ

Եվ թեն Կավդորի. այդպես չասացի՞ն:

ԲԱՆՔՈ

Միևնույն շեշտով և նույն բառերով: Այս ո՞վ է գալիս:

Գալիս են Ռոսը և Անգուսը:

ՌՈՍ

Մակրեթ, թագավորն հրճվանքով լսեց քո հաղթությունը,
Եվ երբ նա կարդաց, թե ինչպես կյանքդ վտանգի դրիր
Ապստամբի դեմ մենամարաելիս,
Նրա հիացումն ու գովեստները պայքարի մտան,
Թե ո՛րն է քոնը, որն է նրանը, այս բանից լռած՝
Աչքից անցնելով միևնույն օրվա մնացորդ մասը,
Նա քեզ գտնում է այն նորվեգական վես շարքերի մեջ,
Աներկյուղ կանգնած՝ քո ձեռքով սարքված
Մահու սուկալի պատկերների դեմ:
Հո՞ծ, ինչպես կարկուտ, եկավ սուրհանդակ սուրհանդակի վրա,
Եվ ամեն մեկը բերեց գովեստներդ,
Թե ինչպես նրա թագավորության պաշտպան կանգնեցիր,
Եվ թափեց այնտեղ արքայի առաջ:

ԱՆԳՈՒՍ

Մենք ուղարկված ենք, որ արքայական մեր տիրոջ կողմից
Շնորհակալություն միայն հայտնենք քեզ:
Եվ նրա դիմաց առաջնորդենք քեզ, ոչ թե վարձատրենք:

ՌՈՍ

Եվ, իբրև կանխույթ մեծագույն պատվի,
Նա ինձ հրամայեց իր կողմից կանչել քեզ «թեն Կավդորի»
Եվ այդ տիտղոսով՝ ողջո՛ւյն, ազնիվ թեն,
Քո տիտղոսն է այդ:

ԲԱՆՔՈ

Ի՞նչ, սատանա՞ն էլ գիտե ճիշտ խոսել:

ՄԱԿՐԵԹ

Կավդորի թենը դեռ կենդանի է:
Ինչո՞ւ էք դուք ինձ ուրիշի զգեստով հանդերձավորում:

ԱՆԳՈՒՄ

Նա, որ Կավդորի թենն էր, դեռ ողջ է,
Բայց ծանր վճիռ կախված կա արդեն այդ կյանքի վրա,
Որից զրկվելու արժանացել է:
Նորվեգիո հետ դավակի՛ց էր նա,
Կամ թե գաղտնապես ապստամբներին օժանդակում էր,
Կամ երկուսի հետ իր հայրենիքի կործանման համար
Դավե՞ր էր նյութում, – դա անհայտ է ինձ:
Մակայն մահապարտ դավադրություններ,
Թե խոստովանված, թե ապացուցված՝ նրան տապալեցին:

ՄԱԿԲԵԹ (Առանձին)

Գլամիս եմ արդեն և թեն Կավդորի...
Եվ դեռ պիտի գա ամենից մեծը:

Ռոսին և Անգուսին:

– Շնորհակալություն ձեր քաջած բոլոր նեղության համար:

Բանքոյին

Չէ՞ որ հույս ունեք, որ ձեր որդիքը կթագավորեն,
Երբ նրանք, որ ինձ Կավդոր կանչեցին,
Նրանց է՛լ նայնպես այդ խոստումն արին:

ԲԱՆՔՈ

Եթե լրջորեն հավատաք դրան,
Դա ձեր սրտի մեջ դեռ թագի տենչ էլ կարող է վառել,
Բացի Կավդորի թենը դառնալուց:
Զարմանալի՛ է, հաճախ խավարի գարծարարները
Մեզ դեպի կորուստ գրավելու համար ճիշտ խոսք են ասում.
Գրավում են փոքրիկ իսկություններով,
Որ մեզ կործանեն ավելի խորունկ հետևանքներով:
– Մի բառ ասեմ ձեզ, իմ ազգականներ:

ՄԱԿԲԵԹ (Առանձին)

Երկու գուշակում իրականացան

Որպես նախերգանք թագավորության պերճ արարվածին:

– Շնորհակալություն, ավնիվ պարոններ:

Առանձին

Այս գերբնական դրդումը չար բան չի կարող լինել

Եվ ոչ էլ բարի: Եթե չար բան է,

Ինչո՞ւ ինձ տվեց իմ հաջողության մի կանխավճար,

Սկիզբ դնելով մի ճշմարտությամբ. թենն եմ Կավդորի:

Իսկ եթե բարի, ինչո՞ւ եմ զիջում այն չար փորձության,

Որի ահռելի մտապատկերը մազերս է ցցում,

Եվ հանդարտ սիրտս՝ հակառակ բնության,

Բախել է տալիս կողքերիս ընդդեմ: Ներկա վախերը

Նվազ ահեղ են, բան թե սուկալի բանդագուշանքներ:

Խորհուրդս, որի մարդասպանությունն անրջանք է դեռ,

Այնպես ցնցում է իմ մարդ էակի խեղճ պետությունը,

Որ խեղդվում է ամեն գործոն ուժ կարծումների մեջ:

Եվ ոչինչ չկա, եթե ոչ միայն մի բան, որ չկա:

ԲԱՆՔՈ

Նայեցեք, այնտեղ, ինչպե՛ս մեր ընկերն հափշտակված է:

ՄԱԿԲԵԹ

Եթե բերմունքը ուզում է, որ ես թագավոր դառնամ,

Շատ լավ, բերմունքը ինքնին կարող է թագ ընծայել ինձ

Առանց իմ ջանքի:

ԲԱՆՔՈ

Նոր պատիվները գալիս են վրան, ինչպես նոր հագուստ,

Որ կաղապարին այնժամ է փակչում, երբ գործ է ածվում:

ՄԱԿԲԵԹ

Ի՛նչ գալու է, գա. ժամանակ ու ժամ
Ամենից դաժան օրերին անգամ գալիս անցնում են:

ԲԱՆՔՈ

Հարգելի Մակբեթ, մենք սպասում ենք ձեր հաճությանը:

ՄԱԿԲԵԹ

Ա՛հ, ներեցեք ինձ, մոռացված բաներ չարչարում էին
Իմ բուր ուղեղը: Ազնի՛ վ պարոններ,
Ձեր նեղությունը արձանագրել եմ այնպիսի մի տեղ,
Ուր ես ամեն օր թուղթը շուռ կտամ կարդալու համար:
Դե՛հ, եկեք գնանք թագավորի մոտ:
(*Բանքոյին*) Լավ մտածեցեք պատահածի վրա:
Եվ երբ, չափելուց, կշռելուց հետո, ժամանակ գտնենք,
Թող իրարու հետ խոսենք սրտաբաց:

ԲԱՆՔՈ

Մեծ ուրախությամբ:

ՄԱԿԲԵԹ

Առայժմ լավ է:– Գնանք, բարեկամներ:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Ֆորես: Մի սենյակ պալատում:

*Փողեր: Գալիս են Դունկանը, Սալկունը, Դոնալդեյնը, Լենոքսը և
սպասավորներ:*

ԴՈՒՆԿԱՆ

Արդյոք Կավդորի մահվան վճիռը գործադրվա՛ծ է,
Եվ այդ պաշտոնով ուղարկված մարդիկ վերադարձել են:

ՄԱԼԿՈՍ

Ո՛չ, իմ վեհապետ, դեռ ետ չեն եկել:
Բայց մի մարդ տեսա, որ նրա մահվան ներկա է եղել:
Ասում էր, թե նա անկեղծ հանձն առավ իր մատնությունը
Եվ ձեր բարձրության ներումն աղերսեց,
Ցույց տալով խորին, սրտագին գղջում:
Ոչինչ իր կյանքում, ասում էր, այնպես վայել չի եղել,
Ինչպես այդ կյանքին տված հրաժեշտը:
Եվ նա մեռել է մի մարդու նման,
Որ վարժությունով սովորած լինի մահվան բռաբեկին
Նետել ամենից թանկագին բանը, որ ունեցել է,
Որպես սին մի բան:

ԴՈՒՆԿԱՆ

Չկա մի արվեստ,
Որ կարողանա հոգու շինվածքը տեսնել դեմքի մեջ:
Այնպիսի մարդ էր, որին բացարձակ վստահում էի:

Գալիս են Մակրեթը, Բանքոն, Ռոսը և Անգուստը:

Ազնի՛ վ ազգական, ապերախտության մեղքը հենց հիմա
Ճնշում էր հոգիս: Բայց դու այնքան ես առաջ արշավել,
Որ վարձատրության նույնիսկ ամենից սրաթոռիչ թևը
Դարձյալ դանդաղ է քեզ հասնելու մեջ:
Ավելի լավ է արժանիքներդ պակաս լինեին.
Որ կարենայի համեմատ չափով շնորհակալիք
Եվ հատուցում տալ: Այժմ մնում է ինձ միայն ասել.
Շատ ավելի է քո իրավունքը,
Քան հատուցելի որևէ բանով:

ՄԱԿԲԵԹ

Այն հավատարիմ ծառայությունը, որ ես պարտ եմ ձեզ,
Իր մատուցման մեջ գտնում է վարձը:
Զերդ մեծության դերն է ընդունել մեր պարտիքները
Եվ մեր պարտիքը հանդեպ ձեր գահին և իշխանության:

Երեխաներ են և ծառայողներ,
Որոնք անում են սոսկ ինչ որ պարտ են,
Երբ որ անում են ինչ որ կարող են՝
Միայն ձեր սիրո ու փառքի համար:

ԴՈՒՆԿԱՆ

Գալուստոյ բարի՛ , քեզ նոր եմ ցանում
Եվ պիտի խնամեմ մինչև լիովին ծլես ու աճես:
– Իմ ազնի՛վ Բանքո, դու էլ ո՛չ պակաս արժանավոր ե,
Եվ ոչ էլ պակաս պիտի ճանաչվեն քո արածները:
Եկ, որ քեզ գրկեմ և սեղմեմ սրտիս:

ԲԱՆՔՈ

Թե այնտեղ աճեմ, ձե՛րն է և հունձքը:

ԴՈՒՆԿԱՆ

Հորդ հրճվանքներս, առատությունից արտագեղվելով,
Փորձում են հիմա թաքչել տրտմության կաթիլների տակ:
Զավակնե՛ր, թենե՛ր և ազգականնե՛ր:
Եվ դո՛ւք, իմ գահի մերձավորները, ձեզ հայտնի լինի,
Որ կամենում ենք մեր պետությունը թողնել մեղնից ետ
Մեր անդրանիկին, իշխան Մակկոմին,
Որին այս օրից մենք անվանում ենք իշխան Կումբերլանդի:
Բայց պետք չէ միայն նրա՛ն շնորհվի այդպիսի պատիվ,
Այլ ազնվության պես պես նշաններ, աստղերի նման,
Պետք է շողշողան ամենքի վրա, որոնք արժան են:
– Եկեք, այստեղից Ինվերնես գնանք
Եվ ավելի սերտ կապենք մեզ քեզ հետ:

ՄԱԿԲԵԹ

Որևէ հանգիստ, որ նվիրված չէ ձեր ծառայության,
Տաժանելի է: Ինքս կլինեմ ավետաբերը

Եվ կուրախացնեմ կնոջս ականջը ձեր գալու լուրով:
Թույլ տվեք, ուրեմն, արձակուրդ խնդրեմ:

ԴՈՒՆԿԱՆ

Իմ ազնի՛վ Կավդոր:

ՄԱԿԲԵԹ (Առանձին)

Իշխան Կումբերլանդի... քա՛ր գայթակղության,
Որի վրայից կա՛մ պետք է ցատկեմ, կա՛մ վար տապալվեմ,
Քանի որ ուղիդ ճամփիս վրա է:
Աստղե՛ր, ծածկեցեք ձեր վառ բոցերը,
Լույսը չտեսնի՛ սև ու խոր իղձերս,
Թող աչքը փակվի ձեռքի վրա, սակայն թող կատարվի այն,
Որ երբ կատարվի, աչքը կսոսկա վրան նայելուց:

Գնում է:

ԴՈՒՆԿԱՆ

Ճի՛շտ, ազնիվ Բանքո, նա այդչափ քաջ է,
Նրան գովելը ինձ համար սնունդ, տոն ու խնջույք է:
Հետևենք նրան, որ առաջ ընկավ
Մեզ բարի գալուստ ասելու համար:
Ի՛նչ անգուգական մի ազգական է:

Փողեր, գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ինձերնես: Մի սենյակ Մակբեթի դրյակում:

Գալիս է լեդի Մակբեթը՝ մի նամակ կարդալով:

ԼԵԴԻ ՄԱԿՐԵԹ

«Հաղթության օրը դուրս եկան իմ առաջ, և նրանց տված տեղեկությունը
այնպես ճշմարիտ դուրս եկավ, որ ես համոզված եմ, թե նրանց

գիտությունը գերմարդկային մի բան է: Երբ ես այրվում էի փափագից, որ ուրիշ հարցումներ էլ անեի, նրանք օդ դարձան, որի մեջ անհայտացան: Այնինչ զարմանքից ապշած՝ կանգնած էի, թագավորի կողմից պատգամաբերներ եկան և ինձ ողջունեցին որպես թե՛ն Կավդորի, մի տիտղոս, որով քիչ առաջ վիուկ քույրերն ինձ ողջունել էին և ապագան ակնարկելով ասել. «Ողջուն քեզ, որ արքա կլինես»: Այս բանը հարմար դասեցի հաղորդել քեզ, ո՛վ դու սիրելի ընկերուհի իմ մեծության, որ ուրախության քո բաժնից անմաս չմնաս՝ անգետ լինելով, թե որպիսի՛ մեծություն է խոսաացված քեզ: Պահիր այս սրտիդ մեջ և ողջ մնա»:

Գլամիս ես, Կաավդո և դեռ կլինես ինչ որ խոստացան,
Բայց վախենում եմ քո բնությանից,
Քանզի նա այնպես լի է մարդկային բարության կաթով,
Որ նա չի բռնի կարճ ճանապարհը:
Կուզես մեծ լինել, քո մեջ կա նաև փառասիրություն,
Բայց քեզ պակաս է այն շարությունը,
Որ պետք է նրան օժանդակ լինի:
Ինչ որ սրագին կփափագեիր,
Դա այն սրբագին կփափագեիր,
Չէիր ուզենա խաղում խարդախել
Բայց կուզենայիր անիրավ շահել:
Կուզեիր շահել այն, որ, մեծ Գլամիս, աղաղակում է,
«Թե ինձ ուզում ես, ա՛յս պիտի անես»:
Եվ այն, ավելի երկյուղ ես կրում ինքդ անելու,
Քան թե ցանկանում, որ չկատարվի: Եկ, փութա այստեղ,
Որ կարողանամ ներս թափել ոգիս քո ականջի մեջ
Եվ պախարակել լեզվիս քաջությամբ:
Ամեն բան, ինչ որ քեզ ետ է պահում այն ոսկի թագից,
Որով գերբնական աջակցությունը և բախտն ուզում են գլուխդ պսակել:

Գաիս է մի սպասավոր:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Ի՞նչ է, քո լուրը:

ՄՊԱՍՍԱՎՈՐ

Արքան այս գիշեր գալիս է այստեղ:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Խելագարվե՞լ ես: Մի՞ թե քո տերը արքայի մոտ չէ:
Եթե ճիշտ լիներ, մեզ իմաց կտար, որ պատրասավեինք:

ԱՊԱՍՍԱՎՈՐ

Ներեցեք, ճիշտ է, թենն էլ գալիս է:
Իմ մի ընկերը առաջ է ընկել և, գրեթե մեռած,
Հազիվ թե այնքան շունչ միայն ուներ,
Որ կարողացավ իր լուրն հաղորդել:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Հոգ տարեք վրան, մե՛ծ լուր է բերել:

Մպասավորը դուրս է գնում:

Այն ազոավն անգամ կերկերաձայն է,
Որ հաղորդում է անբախտ Դունկանի օրհասական մուտքն
Իմ ամբոցի մեջ: Եկեք, ոգիներ:
Դուք, որ մահադավ մտածումներին սպասարկում եք,
Անսեռեցեք ինձ. լցրեք ինձ այստեղ, գանգից գարշապար,
Ամենավայրագ անողորմությամբ: Թանձրացրեք արյունս:
Փակեցեք իմ մեջ ամեն անցք ու մուտք դեպի գրություն,
Որպեսզի խղճի ոչ մի վերադարձ
Չխախտի իմ ժանտ մտադրությունը,
Եվ գործադրության, և նրա միջև պատվար չդառնա:
Եկե՛ք կանացի իմ ստինքներիս
Եվ փոխարկեցեք իմ կաթը մաղձի,
Ո՛վ սպանության դուք պաշտոնյաներ,
Ուր էլ որ լինեք, անտեսանելի ձեր էությունով,
Մարդասպանության սպասարկելիս: Ե՛կ, թանձր գիշեր,
Եվ պատատիր քեզ ամենամթին դժոխքի ծխով,

Որ սուր դանակս ինքն էլ չտեսնի իր տալիք վերքը,
Ոչ էլ երկինքը խավարի քողից արտահայելով՝
Որոտա. «Կա՛նգ առ»:

Գալիս է Մակրեթը:

– Ո՛վ դու մեծ Գլամիս, արժանի՛ Կավդոր,
Եվ ավելի մեծ, քան այդ երկուսը գալիք ողջույնով:
Քո նամակը ինձ տեղափոխել է
Այս անգիտակից ներկայից այն կողմ,
Եվ ես զգում եմ արդեն ապառնին ներկա ընկալում:

ՄԱԿՐԵԹ

Անգի՛ն սիրելիս, Դունկանն այս գիշեր գալիս է մեզ մոտ:

ԼԵՂԻ ՄԱԿՐԵԹ

Եվ ե՞րբ է մեկնում:

ՄԱԿՐԵԹ

Վաղը... միտք ունի:

ԼԵՂԻ ՄԱԿՐԵԹ

Արևն այդ վաղը չի՛ տեսնի երբեք:
Դեմքդ նման է, իմ թեն, մի գրքի,
Ուր մարդ կարող է վատ բաներ կարդալ:
Եթե ուզում ես պատրել աշխարհը, նմանվիր նրան:
Մեծարիր աչքով, ձեռքով ու լեզվով,
Երևա, ինչպես անմեղ ծաղիկը,
Բայց եղիր նրա ներքևի օձը:
Եկվորի գործը պետք է կարգադրել,
Իսկ այս գիշերվա մեծ անելիքը պետք է ինձ հանձնես:
Դա կտա գալիք մեր ցերեկներին և գիշերներին
Վեհապետական ինքնակալություն և իշխանություն:

ՄԱԿՐԵԹ

Նորից կխոսենք:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Բայց զվարթ եղիր:

Դեմքը փոխելը վախի նշան է, մնացածն ինձ թող:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Նույն տեղը դոյակի առաջ: Երաժշտություն, ջահակիրներ:

*Գալիս են Դունկանը, Մալկոմը, Դոնալդեյնը, Բանքոն, Լենոքսը,
Մակդուֆը, Ռոսը, Անգուստը և սպասավորներ:*

ԴՈՒՆԿԱՆ

Այս դոյակի դիրքն սքանչելի է,

Օդը՝ մեղմ ու նոսր, զգվում է մեր նուրբ զգայարանքը:

ԲԱՆՔՈ

Ամառվա հյուրը, տճաարաթոխ այս այս ծիծեռնակը,

Իր սիրակառույց բնակարանով ապացուցում է,

Թե երկնքի շունչն իր անուշ բույրով գրավիչ է այստեղ:

Չկա մի ցցվածք, մի սյունի գլուխ, մի հարմար անկյան,

Ուր այս թռչունը շինած չլինի ճոճուն անկողին

Եվ բազմասերունդ իր օրորոցը:

Այնտեղ, ուր նրանք շատ են հաճախում և ձագ են բերում,

Ես նկատել եմ, օդն այնտեղ նուրբ է:

Գալիս է լեղի Մակբեթը:

Ահա հարգելի մեր տանտիրուհին:

Այն սերը, որ մեզ հետապնդում է,

Հաճախ մեզ համար գլխացավանք է,

Բայց դարձյալ նրան շնորհապարտ ենք, քանի որ սեր է:

Սրանով ես ձեզ սովորեցնում եմ աստծուց խնդրել,

Որ ձե՛ր իսկ քաշած նեղության համար մեզ փոխարինի
Եվ այսպես դեռ մեզ շնորհակալ լինել:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Եթե մեր բոլոր ծառայությունը ամեն մի կետում
Երկպատիկ լիներ և հետո նորից կրկնապատկվեր,
Դարձյալ շատ չնչին և շատ աղքատիկ մի բան կլիներ
Այնքան բարձր ու լայն պատիվների մոտ,
Որոնցով դուք միշտ մեր խոնարհ հարկը ծանրաբեռնում եք:
Թե՛ բոլոր ձեր հին շնորհների համար,
Թե՛ այն բոլորի, որ նոր եք դիզել հների վրա,
Մնում ենք ընդմիշտ ձեր ճգնավորը:

ԴՈՒՆԿԱՆ

Բայց ո՞ր է արդյոք Կավդորի թենը:
Մենք անմիջապես նրա ետևից ճանապարհ ընկանք
Եվ միտք ունեինք մենք լինել նրա մատակարարը:
Բայց նա իսկապես լավ ձիավոր է, և նրա մեծ սերն,
Իր խթանից սուր, մեզանից առաջ տուն բերեց նրան:
Միրուն և ազնիվ հյուրընկալունի,
Այս գիշեր ձեզ մոտ հյուր ենք լինելու:

ԼԱՂԻ ՄԱԿԲԵԹ

Ձեր ծառաները թե՛ իրենց անձր, թե՛ ինչ որ ունեն,
Իրենց մոտ դրված ավանդ են սեպում,
Որ երբ կամենա ձեր մեծությանը հաշիվ պահանջել,
Ետ տան ձեզ ձերը:

ԴՈՒՆԿԱՆ

Տվեք ձեր ձեռքը
Եվ տարեք խնդրեմ հյուրընկալիս մոտ:
Մենք բոլոր սրտով սիրում ենք նրան

Եվ մեր շնորհը կշարունակենք միշտ նրա վրա:
Թույլ տվեք, տիկին:

Գնում են:

ՏԵՍԱԴԱՆ ՅՈՒԹԵՐՈՐԴ

Մի սրահ մակբեթի դոյակում:

Երաժշտություն, ջահեր: Բեմի վրա գալիս անցնում են սեղանապետը և այլևայլ սպասավորներ՝ պնակներ և սեղանի սպաս բերելով: Հետո գալիս է Մակբեթը:

ՄԱԿԲԵԹ

Եթե երբ արվեր, իսկույն ավարտվեր, լավ էր՝ շուտ արվեր:
Եթե սպանությունն իր հետևանքը ցանցել կարենար
Եվ իր դադարով արդյունք ստանար,
Եթե այս հարվածն ամբողջը լիներ, և՛ սկիզբ, և՛ վերջ,
Գեթ այստեղ միայն, հենց ժամանակի ա՛յս ծանձաղուտի
Եվ ափի վրա՝ հանդերձյալ կյանքը փույթ չէինք անի:
Բայց միշտ այսպիսի պարագաներում
Մենք արյունահեղ դասեր ենք տալիս,
Որ ուրիշները, երբ սովորում են, ետ են տալիս մեզ
Եվ հնարողի գլխին են բերում:
Հավասարաձեռն արդարությունը
Մեր թունավորած բաժակի դեղը մատուցանում է
Մեր իսկ շրթունքին: Այստեղ կրկնակի պաշտպանված է նա.
Նախ՝ որովհետև նրա ազգականն ու հպատակն են,–
Երկու գորեղ ձայն այն գործի ընդդեմ: Երկրորդ՝ նա հյուրս է:
Եվ պետք է նրա սպանողի դեմ դուռս փակեի,
Ոչ թե ես ինքս դանակ վերցնեի:
Հետո, այս Դունկանն այնպես մեղմորեն գործի է դրել
Իր արքայական իշխանությունը,
Այնպես անբասիր եղել է նա միշտ իր մեծ պաշտոնում,

Որ նրա այնքան բարությունները
Ձայն կբարձրացնեն, ինչպես հրեշտակներ, շեփորաբարբառ
Նրա սպանման խոր ժանտության դեմ,
Եվ գթությունը, որպես մորեմերկ նորածին մանուկ,
Փոթորկի վրա աշտանակելով,
Կամ թե երկնքի ահեղ քերովբեն
Հեծնելով օդի անտեսանելի երիվարները,
Այնպես կփչեն ահռելի գործը ամեն մի աչքի,
Որ արցունքները կխեղդեն հողմը:
Ես խթան չունեմ, որ նպատակիս կողերը խթի,
Եթե ոչ միայն մի վերև ցատկող փառասիրություն,
Որ չափադանց մեծ ուստյուն գործելով՝ մյուս կողմն է ընկնում:

Գալիս է լեդի Մակբեթը:

Հը, ի՞նչ կա, ի՞նչ լուր:

ԼԵԴԻ ՄԱԿԲԵԹ

Քիչ է մնացել ընթրիքն ավարտվի:
Ինչո՞ւ դուրս եկար սեղանատնից:

ՄԱԿԲԵԹ

Հարցրե՞ց իմ մասին:

ԼԵԴԻ ՄԱԿԲԵԹ

Այո՛, չգիտե՞ս:

ՄԱԿԲԵԹ

Մենք այս գործի մեջ ավելի հեռու չպետք է գնանք:
Դեռ նոր է նա ինձ պատիվներ ավել,
Եվ ես գնել եմ ոսկեղեն անուն ամեն մարդկանցից,
Որ պետք է կրեմ նոր և շողշողուն,
Ոչ թե այսպես շուտ արդեն դուրս նետեմ:

ԼԵԴԻ ՄԱԿԲԵԹ

Հարբա՞ծ էր, ուրեմն, այն հույսը, որով զարդարվել էիր:
Թե՞ այնուհետև նա քուն էր մտել և այժմ զարթնելով՝
Կանաչ ու դալուկ դեմքով է նայում այն բանի վրա,
Ինչ որ ինքնակամ ուզում էր գործել:
Այս բոպեից ետ ես էլ այդ չափով կչափեմ սերդ:
Վախենո՞ւմ ես դու լինել քո գործով և արհուրթամբ,
Ինչ որ կաս արդեն փափագներիդ մեջ:
Կուզեի՞ր շահել ինչ որ սեպում ես կյանքի մեծ զարդը,
Եվ ապրել երկչոտ ինքդ քո աչքին,
Իսկույն հարելով, «Չեմ համարձակվում», «Կուզեի» խոսքիդ,
Առակում հիշված խեղճ կատվի նման:

ՄԱԿԲԵԹ

Լսիր, խնդրում եմ:
Ինչ որ վայել է մի տղամարդի, կարող եմ և ես:
Ով որ հանդգնի ավելին անել, նա մարդ չէ այլևս:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Ուրեմն՝ ինչպիսի՞ մի անասուն էր,
Որ քեզ թելադրեց խոսք բանալ ինձ հետ այդ ձեռնարկի վրա
Երբ սիրտ ունեիր այդ բանն անելու, այնժամ մարդ էիր:
Որքան ավելի լինես, քան էիր,
Այնքան ավելի մեծ մարդ կլինես:
Այնժամ ոչ տեղն էր քեզ նպաստավոր, ոչ ժամանակը,
Դու ուզում էիր երկուսն էլ սարքել:
Նրանք այժմ ինքնին գոյությունն առան,
Եվ սակայն նրանց ձեռնտվությունը ջլատում է քեզ:
Ես ծի՛ծ եմ տվել և շատ լավ գիտեմ, թե որչա՛փ քաղցր է.
Միրել մանկանս, որ ծծում է ինձ,
Բայց ես, այնինչ նա երեսիս խայտար,
Նրա անատամ լնդերքից ծիծս դուրս կքաշեի,
Ուղեղը գլխից ցրիվ կտայի,

Եթե ես այնպես երդված լինեի,
Ինչպես դու արիր այս բանի վրա:

ՄԱԿԲԵԹ

Իսկ եթե վրիպեմք:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Վրիպե՞մք:

Դու լարիր միայն արիությունդ մինչև պիրկ կետը,
Եվ չենք վրիպի: Երբ որ Դունկանը քուն մտած լինի
(Եվ օրվա իր խիստ ճամփորդությունը խոր քուն կբերի),
Ես նրա երկու սենեկապահներին
Այնպես գինիով և խմիչքներով կհարբեցնեմ,
Որ ուշքը՝ խելքի այդ պահապանը, գոլորշի դառնա,
Եվ դատողության անոթն՝ ալամբիկ:
Եվ երբ այդ մարդկանց գինեթուրմ ոգին
Խոզային քնով անզգայանա, ինչպես մահվան մեջ,
Ի՞նչ բան չենք կարող դու և ես անել
Անպաշտպան ընկած Դանկանի վրա:
Եվ ի՞նչ չենք կարող բարդել իր սպունգ սպաների վրա,
Որոնք կկրեն այն սպանության բոլոր հանցանքը:

ՄԱԿԲԵԹ

Արու զավակներ ծնիր դու միայն,
Այդ անսասա ոգիդ արուններ միայն պետք է բաղադրի:
Երբ երկու, քնած սենեկապահներին արյունոտ անենք,
Եվ երբ որ նրանց բուն դաշույններով գործը կատարենք,
Չե՞ որ կկարծվի, թե նրանց գործն է:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Ո՞վ կհանդգնի այլապես կարծել,
Մանավանդ, երբ մենք մեր լացն ու կոծը
Կթնդացնենք մեռյալի վրա:

ՄԱԿԲԵԹ

Վճռեցի և այժմ լարում եմ ամեն մարմնական գործոն
Այդ զարհուրելի խիզախման համար:
Գնանք, ուրեմն, և սիրուն ցույցով ծաղրենք աշխարհը:
Խարդախ երեսը պետք է դիմակի
Այն, որին խարդախ սիրտը գիտակ է:

Գնում են:

ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Մի բակ մակբեթի դոյակում:

Գալիս են Բանքոն, Ֆլինսը, վերջինը մի ջահ կրելով առջևից:

ԲԱՆՔՈ

Տղա՛, գիշերից որբա՞ն է անցել:

ՖԼԻՆՍ

Լուսինը մտավ, բայց ժամացույցի գանգը չեմ լսել:

ԲԱՆՔՈ

Եվ նա մտնում է տասներկու ժամին:

ՖԼԻՆՍ

Կարծում եմ, տեր իմ, ավելի ուշ է:

ԲԱՆՔՈ

Եկ, առ այս սուրբ: Կարծես երկնքում տնտեսություն կա.
Նրանց ճրագներն ամբողջ մարած են: Այս էլ առ, որդիս:
Մի ծանր թմբիր կապարի նման ընկել է վրաս,
Եվ սակայն քնել չէի կամենա: Մո՛ւրբ գորություններ,

Զսպեցեք իմ մեջ այն ժանտ խոհերը,
Որոնց բնությունը տեղի է տալիս քնի ժամանակ:
Գալիս է Մակբեթը, հետը մի ծառա՝ ջահը ձեռքին:
– Սարս տուր:– Ո՞վ է:

ՄԱԿԲԵԹ

Բարեկամ:

ԲԱՆՔՈ

Այս ի՞նչ է, դեռևս չե՞ք հանգստացել:
Թագավորն արդեն անկողնի մեջ է:
Արտաքո կարգի զվարճացած էր
Եվ շատ պարզհենք ուղարկեց ձեր տան պաշտոնյաներին:
Իսկ ձեր կնոջը ողջունյա առաքեց այս աղամանդով,
Կոչելով նրան ամենաբարի հյուրընկալածի:
Եվ առանձնացավ անբավ գոհությամբ:

ՄԱԿԲԵԹ

Անպատրաստ գալով,
Մեր կամքը դարձավ թերության ծառան,
Այլապես՝ ազատ գործած կլիներ:

ԲԱՆՔՈ

Ամեն քան լավ է:
Ես անցած գիշեր երազում տեսա հարցուկ քույրերին:
Ձեզ համար մասամբ ճիշտ գուշակեցին:

ՄԱԿԲԵԹ

Ես նրանց մասին չեմ իսկ մտածում:
Բայց երբ ձեռնտու, մի ժամ ունենանք,
Պիտի ուզեի մի քիչ խոսակցել այդ նյութի վրա,
Եթե դուք հաճեք ժամանակ շնորհել:

ԲԱՆՔՈՒ

Երբ որ դուք հաճեք:

ՄԱԿԲԵԹ

Եվ եթե ինձ հետ համախոհ մնաք, երբ դա գլուխ գա,
Ձեզ համար նույնպես պատիվ կրերի:

ԲԱՆՔՈՒ

Եթե ձգտելով պատիվս ավելացնել, իմս էլ չտուժեմ,
Այլ անկեղծ պահեմ հպարտությունս և կուրծքս՝ ազատ,
Պատրաստ եմ լսել:

ՄԱԿԲԵԹ

Ձեզ բարի հանգիստ:

ԲԱՆՔՈՒ

Շնորհակալ եմ, նույնը ձեզ, տեր իմ:

Բանքոն գնում է դուրս:

ՄԱԿԲԵԹ

Ասա տիրուհուդ, որ ըմպելիքս երբ պատրաստ լինի,
Թող զանգը զարկի: Գնա անկողին:

Ծառան դուրս է գնում:

Դաշն՝ ինչ է առջևս, այս, որ տեսնում եմ,

Կոթը դեպի ձեռքս:– Եկ, թող բռնեմ քեզ:

Դու ձեռք չես գալիս, բայց տեսնում եմ քեզ:

Չե՞ս դու զգալի, չարաբաստ տեսիլ,

Շոշափելիքի ինչպես տեսության,

Թե՞ մտացածին մի դաշույն ես լոկ, մի սուտ ստեղծվածք

Մի ջերմաչարչար ուղեղից ելած:

Տեսնում եմ քեզ դեռ ձևով նույնպես պարզ ու շոշափելի,

Ինչպես այդ մեկը, որ դուրս եմ քաշում:

Դու ինձ ուղղում ես դեպի այն ճամփան, ուր գնում էի
Եվ հենց այդպիսի մի գործիք էի գործի դնելու:
Աչքերս իմ մյուս զգայարանքից մոլորեցված են,
Կամ իրենք մենակ բոլորին արժեն:– Տեսնում եմ քեղ դեռ,
Տեսնում եմ շեղբիդ և կոթիդ վրա արյան կաթիլներ,
Որոնք մինչև այժմ չկային այնտեղ:
Ո՛չ, այդպիսի բան դոյություն չունի:
Արյունոտ գործն է, որ այսպես աչքիս ձև է ստանում:
Այժմ, աշխարհի մեկ կեսի վրա
Բնությանը համայն մեռած է թվում,
Եվ չար անուրջներ սխալեցնում են վարագուրած քունը:
Կախարդությունը գոհ է ընծայում դժգույն Հեկատին,
Եվ խորշումադեմ սպանությունը,
Ի զեն կոչվելով իր պահակ գայլից,
Որի ոռնոցը իր պահակոչն է,
Այսպես, գողունի և առևանգիչ Տարկվինի քայլով,
Շարժվում է դեպի իր չար խորհուրդը ուրվականի պես:
Ո՛վ դու հաստատուն և ամուր երկիր,
Մի՛ լսիր քայլերս, թե ուր են գնում,
Մի՞գուցե նայնիսկ քարերդ հայտնեն իմ ուր լինելը,
Եվ ժամանակից խլեն այս ներկա ահ ու զարգանդը,
Որ հիմա նրան հարմար է գալիս:
Եվ սպառնում եմ, իսկ նա ապրում է:
Բառերը գործի տաքության վրա պաղ շունչ են փչում:

Լսվում է մի զանգի ձայն:

Գնում եմ, եղա՛վ: Զանգն ինձ կոչում է:
Մի՛ լսիր, Դունկան, մի մահազանգ է,
Որ կանչում է քեզ երկինք... կամ դժո՛խք:

Գնում է դուրս:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Նույն տեղը:

Գալիս է լեղի Մակրեթը:

ԼԵՂԻ ՄԱԿՐԵԹ

Այն, ինչ որ նրանց գինովացրեց, սրտապնդեց ինձ:
Այն, ինչ որ մարեց նրանց կրակը, ինձ կրակ տվեց:
Սը՛ս... այս ի՞նչ ձայն է, բուն էր, որ վայեց, գուժկան ժամկոչը,
Որ կոնչում է ամենից դժխեմ բարի գիշերը:
Գործի է նա այժմ: Դռները բաց են,
Եվ այն հղփացած պահապանները
Ծաղրում են իրենց խոմփոցներով իրենց պաշտոնը:
Նրանց գիշերվա ըմպելիքի մեջ ես դեղ խառնեցի,
Եվ մահն ու կյանքը վիճում են հիմա,
Թե արդյոք նրանք ո՞ղջ են, թե՞ մեռած:

ՄԱԿՐԵԹ

Ո՞վ է, հե՛յ, ո՞վ է:

ԼԵՂԻ ՄԱԿՐԵԹ

Օ՛հ, վախենում եմ, որ զարթնած լինեն,
Գործը դեռ չարված: Փորձը, ոչ գործը, մեզ կկործանի:
Սը՛ս... դաշույնները դրել եմ պատրաստ:
Անկարելի է գտած չլինի:
Եթե նա հորս նման չլիներ քնած ժամանակ,
Ինքս կանեի:– Ամուսինս...

Գալիս է Մակրեթը:

ՄԱԿՐԵԹ

Գործեցի գործը: Ձայն չլսեցի՞ ր:

ԼԵՂԻ ՄԱԿՐԵԹ

Բուի կոհինչ էր և ճպուռի ձայն:

Դո՞ւ էիր խոսում:

ՄԱԿԲԵԹ

Ե՞րբ:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Այս րոպեիս:

ՄԱԿԲԵԹ

Երբ իջնո՞ւմ էի:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Այո:

ՄԱԿԲԵԹ

Սը՛ւ... Ո՞վ է պառկած կողքի սենյակում:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Ո՞վ... Դո՞նալդեյնը:

ՄԱԿԲԵԹ (Նայելով իր ձեռքերին)

Դժպի՛հ տեսարան:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Փո՞ւչ խոսք է՝ ասել. «Դժպիհ տեսարան»:

ՄԱԿԲԵԹ

Մեկը քնի մեջ բարձր ծիծաղեց,

Եվ մյուսը գոչեց՝ «Մարդասպանություն՝ ւն»:

Այնպես որ նրանք ըհար զարթեցրին,

Իսկ ես կանգնեցի և ականջ դրի,

Բայց նրանք իրենց աղոթքն ասելով՝ նորից քուն մտան:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Երկուսը մեկտեղ տեղավորված են:

ՄԱԿԲԵԹ

Մեկն աղաղակեց. «Տեր, ողորմյա մեզ», իսկ մյուսը՝ «Ամեն՝»:
Կարծես թե նրանք ինձ տեսնում են դահճի ձեռքերով:
Բայց ես լսելով նրանց սարսելը և «տերողորմյան»,
Չկարողացա ինքս ասել՝ «Ամեն՝»:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Այդ բանի վրա խոր մի՛ մտածիր:

ՄԱԿԲԵԹ

Բայց պատճառն ի՞նչ էր, որ «Ամեն՝» ասել չկարողացա,
Երբ ամենքից շատ ե՛ս էի կարոտ այդ օրհնությանը:
«Ամենը» մնաց իմ կոկորդի մեջ:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Այդ մաների վրա չպետք է այդպես երկար մտմտալ,
Մարդ կխենթանա:

ՄԱԿԲԵԹ

Ինձ այնպես թվաց, որ մի ձայն գոչեց. «Հերի՛ք է քնեք.
Մակբեթը հիմա քունն սպանում է, խեղճ, անմե՛ղ քունը»:
Ոք ետ է անում ցավ ու հոգսերի խճճված կծիկը,
Քունը, որ մահն է առօրյա կյանքի
Եվ բաղանիքը դառն աշխատանքի,
Որ բալասանն է խոցոտ սրտերի
Եվ մեծ բնության երկրորդ սպասը,
Կյանքի խնջույքի բուն սնուցիչը:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Ինչե՛ր ես ասում:

ՄԱԿԲԵԹ

Նա բոլոր տանը աղաղակում էր. «Հերի՞ք է քնեք,
Գլամիսն սպանեց, սպանեց քունը,
Ուրեմն՝ Կավդորն էլ քուն չի տեսնի:
Մակբեթն այլևս չպիտի քնի»:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Բայց ո՞վ էր այդպես աղաղակողը:
Վա՛յ, սիրելի թեն, դու ջլատում ես արդ ազնիվ ուժդ
Խելահեղորեն խորհելով այդպես իրերի վրա:
Գնա ջուր վերցրու և ձեռքիդ վրայից
Լվա այդ գազիր վկայությունը:
Ինչո՞ւ ես բերել այդ դաշույնները,
Այնտեղ պետք է մնան:
Գնա, տար այնտեղ
Եվ քնաթաթախ ծառաների վրա քիչ արյուն քսիր:

ՄԱԿՐԵԹ

Չե՛մ գնա նորից: Սկսում եմ խորհել արածիս վրա:
Կրկին վրան նայել ես չեմ հանդգնի:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Դու, կամքի՛ անկար, դաշույններն ինձ տուր:
Քնածն ու մեռածը պատկերի պես են:
Մանկության աչքն է, որ վախենում է նկարված դևից:
Եթե նրանից արյուն է հոսում,
Իր ծառաների երեսը մի քիչ կարյունագոծեմ,
Որ նրանց վրա դրվի հանցանքը:

Գնում է: Հեռվից դուռը բախում են:

ՄԱԿԲԵԹ

Ի՞նչ բախյուն է այս:
Այս ի՛նչ եմ դարձել, որ ամեն շշուկ սարսեցնում է ինձ:
Այս ի՛նչ ձեռքեր են, աչքներս են հանում:

Կարո՞ղ է արդյոք Նեպտունի ամբողջ մեծ օվկիանոսը
Լվալ այս արյունն անհետ մի ձեռքից: Ո՛չ, ավելի շուտ
Իմ ձեռքն է կարող անթիվ ծովերը բոսորաներկել
Եվ միապաղաղ կարմիր դարձնել ամբողջ կանաչը:

Գալիս է լեղի Մակբեթը:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Իմ ձեռքերն ահա քո ձեռքի գույնն են, բայց կամաչեի,
Եթե իմ սիրտն էլ քո սրտի նման սպիտակ լիներ:

Դրսից դռան բախյուն:

Հա՛, ձայն եմ լսում, դուռը թակում են հարավի մուտքից:
Եկ գնանք, քաշվենք մեր ննջարանը:
Մի քիչ ջուր բավ է, որ մեզ այս գործից լվա և մաքրի:
Ինչ դյուրին բան է: Անսասան կամքդ քեզ լքեց կարծես:

Բախյուն:

Դարձյալ զարկում են: Գնա, հագիր շուտ գիշերազգեստդ:
Գուցե ստիպվենք դուրս գալ սենյակից:
Եվ մարդիկ տեսնեն, որ քնած չեինք:
Այդպես մի կանգնիր խղճալի կերպով մտապաշարված:

ՄԱԿԲԵԹ

Գիտակցե՛լ գործս, երանի՛ ինքս ինձ չգիտակցեի:

Բախյուն:

Զարկի՛ր, Դունկանին զարթնեցնելու չափ:
Ա՛խ, երանի՛ թե կարողանայիր:

Գնում են դուրս:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Նույն տեղը, դրսից դուռը զարկելու ձայն:

Մի դոնապան:

ԴՌՆԱՊԱՆ

Ա՛յ քեզ դուռ զարկել: Եթե մարդ դժոխքի դասնապանը լիներ, պետք է անդադար բանալին շուռ տար: (*Բախյուն*): Թա՛խկ-թա՛խկ, թա՛խկ: Ո՞վ է, հանուն Բեհեդգեբուդի: Երևի մի ազարակատեր է, որ հունձքի առատության վախից գնացել, կախվել է: Ժամանակին ես եկել, բավական շատ երեսսրբիչներ բեր հետդ, էստեղ լա՛վ քրտնելու, ես: (*Բախյուն*): Թա՛խկ, թա՛խկ: Ո՞վ է, հանուն մյուս սատանի: Ահա մի երկդիմախոս, որ կշեռքի ամեն մի թաթի մեջ կարող էր երդվել մյուս թաթի հակառակ, որը բավական շատ դավաճանություններ է արել ի փառս աստծո, բայց և այնպես չի կարողացել երկնքի հետ երկդիմախոսել: Օ՛, համեցեք ներս, երկդիմախոս: (*Բախյուն*): Թա՛խկ, թա՛խկ, թա՛խկ: Ո՞վ է: Հավատքս վկա, մի անգլիացի դերձակ է, որ ա՛յն պատճառով եկած կլինի, որ մի ֆրանսիական տապաստի կերպասից ցողացել է: Ներս եկ, դերձա՛կ, այսաեղ կարող ես արդուկդ լավ տաքացնել: (*Բախյուն*): Թա՛խկ, թա՛խկ: Մի բոպե հանգստություն չկա: Դու ի՞նչ ես: Էսպես էլ ցուրտ դժո՞խք կլինի. ես հրաժարվում եմ դժոխքի դոնապանությունից: Միտք ունեի մեկ-մեկ հոգի ներս ընդունել էն բոլոր արհեստավորներից, որոնք ծաղկազարդ ճամփով գնում են դեպի հավիտենական հրախաղությունը: (*Բախյուն*): Իսկույն, իսկույն, դոնապանին չմոռանաք, խնդրեմ:

Գալիս են Մակդուֆը և Լենոքսը:

ՄԱԿՐՈՒՖ

Որքա՞ն ուշ ես պառկել, բարեկամ, որ այսքան ուշ ես վեր կենում:

ԴՌՆԱՊԱՆ

Ճիշտը, պարոն, մենք կոնծաբանում էինք մինչև երկրորդ աքլորականչը: Խմիչքը, պարոն, մեծ գրգռիչ է երեք բանի:

ՄԱԿՐՈՒՖ

Որո՞նք են այդ երեք բաները, որ խմիչքը հատկապես գրգռում է:

ԴՌՆԱՊԱՆ

Ահա որոնք են, պարոն, քթի կարմրություն, քուն և մեզ: Ինչ վերաբերում է անառակության, պարոն, խմիչքը թե՛ գրգռում է, թե՛ նա է պահում, ցանկությանը գրգռում է, բայց կատարումն արգելում է: Ուրեմն՝ կարելի է ասել, թե խմիչքը անառակության հետ երկերեսանություն է անում, ստեղծում է և փչացնում, զարթեցնում է և քնեցնում, դրդում է և վիատեցնում: Մեկ խոսքով, քնի մեջ նրա հետ երկերեսանություն է անում ն գլխին խաղ խաղալուց հետո բաց է թողնում:

ՄԱԿԴՈՒՖ

Կարծեմ խմիչքը երեկ գիշեր քո գլխին էլ խաղ է խաղացել:

ԴՌՆԱՊԱՆ

Այո, պարոն, հենց կոկորդիցս էր բռնել: Ես էլ վարձը ձեռք դրի: Եվ, կարծեմ, նրանից ավելի ուժեղ լինելով, թեև նա մի քանի անգամ ոտքերս ցնցեց, բայց ես ճարպիկ դուրս եկա և նրան դեն նետեցի:

ՄԱԿԴՈՒՖ

Տերդ վե՞ր է կացել: Այնքան դուռը զարկեցինք, որ զարթնած կլինի: Ահա գալիս է:

Գալիս է Մակբեթը:

ԼԵՆՈՔՍ

Բարի լույս, ազնիվ տեր:

ՄԱԿԲԵԹ

Բարի լույս, պարոններ:

ՄԱԿԴՈՒՖ

Արքան զարթնե՞լ է, ազնիվ թեև:

ՄԱԿԲԵԹ

Դեռ ոչ:

ՄԱԿԴՈՒՖ

Հրամայել է ինձ, որ այսօր կանուխ իր սպասին գամ:
Դեռ ժամանակից քիչ էլ անցել է:

ՄԱԿԲԵԹ

Եկեք տանեմ ձեզ:

ՄԱԿԴՈՒՖ

Գիտեմ, ձեզ համար դա շատ հաճելի մի նեղություն է,
Բայց նեղություն է:

ՄԱԿԲԵԹ

Այն տաժանումը, որ բերկրանք է մեզ,
Ինքն է բուժիչը կրած նեղության:
Ահա ձեզ դուռը:

ՄԱԿԴՈՒՖ

Համարձակվում եմ ներս մտնել, տեր իմ:
Դա իմ որոշված ծառայությունն է:

Մտնում է ներս:

ԼԵՆՈՔՍ

Արքան այստեղից մեկն^ում է այսօր:

ՄԱԿԲԵԹ

Այո, մեկնում է, այդպես կարգադրեց:

ԼԵՆՈՔՍ

Այս գիշերն ինչպե՛ս փոթորկալից էր:
Այնտեղ, ուր կայինք, ծխնելույզները հողմից վար ընկան:
Ասում են, օդում ողբալու ճիչեր լսել էին
Եվ տարօրինակ մահվան գոչուններ,
Եվ գուշակումներ՝ սոսկալի ձայնով՝

Մասանումների և խառնակությանց,
Որ աղետալից այս դարի թուխսից նոր են դուրս գալու:
Խավարի թռչունն ամբողջ գիշեր վայեց անդադար:
Ասում են, երկիրն ինքն էլ ջերմ ուներ և դողդողում էր:

ՄԱԿԲԵԹ

Ահեղ գիշեր էր:

ԼԵՆՈՔՍ

Իմ մատաղահաս հիշողությունը
Չի կարող նրան զուգակից գտնել:

Գալիս է Մակդուֆը:

ՄԱԿՂՈՒՖ

Սուկալի՛, սուկողի՛, սուկալի՛, ոչ լեզու, ոչ սիրտ,
Կարող են երբեք երևակայել կամ անուն տալ քեզ:

ՄԱԿԲԵԹ ԵՎ ԼԵՆՈՔՍ

Ի՞նչ է պատահել:

ՄԱԿՂՈՒՖ

Աշխարհանցումը կատարել է այժմ իր գլուխ գործոցը:
Մաստիկ սրբապիղծ սպանությունը
Դուռը ջարդել է և մաել տիրոջ օծյալ տաճարը
Եվ շենքի կյանքը միջից գողացել:

ՄԱԿԲԵԹ

Ի՞նչ ես ասում, կյա՞նք:

ԼԵՆՈՔՍ

Ո՞ւմ վրա եք խոսում, նորին մեծությա՞ն:

ՄԱԿՂՈՒՖ

Մտե՛ք սենյակը և կուրացրեք ձեզ մի նոր Գորգոնով...
Մի՛ ստիպեք խոսեմ... Տեսեք և հետո ինքներդ խոսեցեք:
–Զարթնեցե՛ք, էհե՛յ, զանգը զարկեցեք, մարդասպանությո՛ւն,
Դավաճանությո՛ւն, Բանքո՛ւ, Դոնալբե՛յն, Մալկո՛ւմ, զարթնեցե՛ք:
Թա՛փ տվեք ձեզնից փետրանուշ քունը՝ մահվան կեղծիքը,
Եվ եկեք տեսեք իսկական մահը: Վե՛ր կացեք, եկե՛ք
Եվ դատաստանի պատկերը տեսեք:
Մալկո՛ւմ և Բանքո՛ւ, վե՛ր կացեք որպես ձեր գերեզմանից
Եվ առաջ եկեք որպես ոգիներ,
Իբրև նոր սուկանք այս սուկանքի վրա: (*Զանգի ձայն*):

Գալիս է լեղի Մակբեթը:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Ի՞նչ է պատահել, որ մի այսպիսի զարհուրելի կոչ
Ժողով է կանչում քնացողներին: Խոսեցե՛ք, ասե՛ք:

ՄԱԿԴՈՒՑ

Օ՛հ, քնքուշ տիկին, չե՛ք կարող լսել իմ ասելիքը:
Ամեն մի բառը մի կնոջ ականջի սպանությունն է:

Գալիս է Բանքուն:

Օ՛հ, Բանքո՛ւ, Բանքո՛ւ, սպանված է մեր վեհափառ տերը:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Վա՛յ ինձ, օ՛հ, վա՛յ ինձ, ինչպե՞ս, մե՞ր տան մեջ:

ԲԱՆՔՈ

Մարսափելի գործ, ուր էլ որ լիներ:

Օ՛հ, սիրելի՛ Դուֆ, հակասիր դու քեզ և ասա՛՛ սո՛ւտ է:

Գալիս են Մակբեթը և Լենորսը:

ՄԱԿԲԵԹ

Եթե այս դեպքից լուր մի ժամ առաջ մեռած լինեի,
Կյանքս երջանիկ եղած կլիներ:
Այս բուստից դեն չկա ոչինչ լուրջ մահացության մեջ:
Երկնային շնորհ և համբավ, մեռա՛վ...
Իմ կյանքի գինին քաշվեց տակառից,
Եվ այս մառանին դիրտ միայն մնաց, որով պարծենա:

Գալիս են Մալկոմը և Դոնալդեյնը:

ԴՈՆԱԼԲԵՅՆ

Ի՞նչ է պատահել:

ՄԱԿԲԵԹ

Ձե՛զ է, պատահել և անտեղյա՞կ եք:
Ձեր արյան ծագումն, ակունքն են գոցվել, աղբյուրն է փակվել:

ՄԱԿԴՈՒՖ

Ձեր վեհափառ հայրն սպանված է:

ՄԱԼԿՈՍ

Օ՛հ, ո՞ր մեկի ձեռքով:

ԼԵՆՈՔՍ

Մենեկապահներն արած կլինեն: Նրանց ձեռքերը
Եվ երեսները արյունով ամողջ շաղախված էին:
Նույնպես դաշույններն, որ դեռ չմաքրած,
Գտանք վար ընկած բարձերի վրա:
Աչքները հառել և շշմել էին,
Ոչ մի մարդու կյանք պետք չէր վստահել այդպիսի մարդկանց:

ՄԱԿԲԵԹ

Բայց խիստ զոջում եմ, որ բարկության մեջ նրանց սպանեցի:

ՄԱԿԴՈՒՖ

Ինչո՞ւ սպանեցիք:

ՄԱԿԲԵԹ

Վա՛հ, ո՞վ է կարող միաժամանակ
Թե՛ խոհեմ լինել, թե՛ սարսափահար, մեղմ ու կատաղի,
Թե՛ հավատարիմ, թե՛ չեզոք: Ոչ ոք:
Իմ բուռն սիրո արագությունը
Արշավեց անցավ ավելի դանդաղ դատողությունից:
Այստեղ Դանկանը ընկած էր գետնին՝
Իր արծաթ մորթը ոսկի արյունով երիզավորած,
Եվ իր լայն վերքերն, ինչպես մի խրամատ կյանքի բերդի մեջ,
Ավերման քանդիչ ներմուտքի համար: Իսկ այնտեղ էին
Մարդասպանները՝ իրենց արհեստի գույնով թաթախված
Եվ դաշույնները արյան մեջ մեխված:
Լավ, ո՞վ էր կարող ինքն իրեն զսպել,
Ո՞վ, որ սիրազգաց մի սիրտ ունենար,
Եվ այդ սրտի մեջ քաջություն՝ իր սերն ապացուցելու:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ (Ուշաթափվելով)

Օ՛հ, դուրս տարեք ինձ:

ՄԱԿԲԵԹ

Հոգ տարեք վրան:

ՄԱԼԿՈՍ

Ինչո՞ւ ենք լռել, երբ ամենից շատ մերն է խնդիրը:

ԴՈՆԱԼԲԵՅՆ

Ի՞նչ ասենք այստեղ, ուր մեր չար բախտը
Մի աննշմարելի ծակում թաքնված՝
Կարող է գրոհ տալ և մեզ ձեռք գցել: Գնանք այստեղից,
Մեր արցունքը դեռ չի հասունացել:

ՄԱԼԿՈՍ

Ոչ էլ մեր ցավը ոտքի է կանգնել գործելու համար:

ԲԱՆՔՈ

Օգնե՛ք տիկնոջը:

Լեդի Մակբեթին դուրս են տանում:

Գնանք և ծածկենք մերկ մարմիններս,
Որոնք կարող են օղից վնասվել, հետո ժողովվենք
Եվ նորից քննենք այս սարասփելի արյունոտ գործը:
Խոլ կասկածանքներ և տարակույսներ չարչարում են մեզ:
Կանգնած աստծո ահեղ աջի մեջ, պիտի մաքառեմ
Դավաճանության տակավին անհայտ դիտումների դեմ:

ՄԱԿԴՈՒՖ

Նույնպես կանեմ ես:

ԱՄԵՆՔԸ

Նույնպես ամենքս:

ՄԱԿԲԵԹ

Գնանք և փութով հագնենք տոնական մեր դգեստները,
Հետո գավթի մեջ հանդիպենք իրար:

ԱՄԵՆՔԸ

Լավ, այդպես անենք:

Ամենքը դուրս են գնում, բացի Մակնուից և Դոնալդեյնից:

ՄԱԼԿՈՄ

Ի՞նչ ես անելու: Չպետք է մենք էլ սրանց միանանք:

Չզգացված մի վիշտ արտահայտելը

Շատ դյուրին գործ է կեղծ մարդու համար: Ես Անգլիա կերթամ:

ԴՈՆԱԼԲԵՅՆ

Իսկ ես՝ Իռլանդիա: Եթե մեր բախտը իրարուց զատենք,
Թերևս ավելի ապահով լինենք:
Մի տեղ ենք հիմա, ուր դաշույններ կան ժպիտների տակ՝
Որչափ ավելի արյունով մոտիկ,
Այնչափ ավելի արյունի մոտիկ:

ՄԱԼԿՈՄ

Մահացու նետը, որ արձակված է, դեռ վար չի ընկել:
Մեզ համար լավ է խույս տալ թիրախից:
Ձի նստենք, ուրեմն, ուշ չդարձնենք մնաս-բարովի,
Այլ իսկույն փախչենք: Պետք է գողունի փախչել այն տեղից,
Ուրկից ամեն գուրթ անհետացել է:

Դուրս են գնում:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Դոյակի դուրսը:

Գալիս են Ռոսը և մի ձերուկ:

ԾԵՐՈՒԿ

Ես երեք քսան և տասը տարի շատ լավ հիշում եմ
Եվ ժամանակի այդ ընթացքի մեջ հաճախ տեսել եմ
Սոսկալի ժամեր և ահեղ բաներ,
Բայց զարհուրելի այս գիշերվա մոտ
Բոլոր մինչև այժմ գիտեցածներս խաղալիք էին:

ՌՈՍ

Ա՛հ, բարի՛ հայրիկ, նայիր, երկինքը,
Կարծես վրդովված մարդու արարքից,
Սպասնում է նրա արյունոտ բեմին:
Ժամացույցի վրա ցերեկ է արդեն,
Բայց մութ գիշերը խեղդում է դեռևս ճամփորդ լապտերը:
Արդյոք գիշերվա հաղթանա՞կն է այս,

Թե՞ ամաչում է օրը երևալ,
Որ խավարն այսպես գերեզմանել է երկրի երեսը,
Երբ պետք է արդեն կենդանի լույսը համբույր ասեր նրան:

ԾԵՐՈՒԿ

Հակաբնակա՛ն, ինչպես այն գործը, որ կատարվել է:
Երեքշաբթի օր այնինչ մի բազե ճախրում էր հպարտ՝
Հասած իր թոփչքի բարձրագույն կետին,
Մուկ ուտող մի բու հարձակվեց վրան և խեղդեց նրան:

ՌՈՍ

Դունկանի ձիերը, շատ տարօրինակ, բայց հաստատ մի բան,
Գեղեցիկ, արագ և իրենց ցեղի գոհարիկները,
Վայրենի դարձան, իրենց ախտոը քարուքանդ արին
Եվ դուրս խուժեցին՝ ըմբոստանալով հնազանդության դեմ,
Կարծես ուզեին պատերազմ մղել մարդկության ընդդեմ:

ԾԵՐՈՒԿ

Շատերն ասում են, թե իրար կերան:

ՌՈՍ

Այո, այդպես է:
Հենց իմ ապշահար աչքերի առաջ:

Գալիս է Մակդուֆը:

Ահա գալիս է ազնիվ Մակդուֆը:
Ի՞նչ լուր աշխարհից:

ՄԱԿԴՈՒՖ

Չե՞ք տեսնում միթե:

ՌՈՍ

Արդյոք իմացվե՞ց, թե այն սոսկալի արյունոտ գործը
Որի՛ արածն էր:

ՄԱԿԴՈՒՖ

Այն մարդկանց, որոնց Մակբեթն սպանեց:

ՌՈՍ

Ավա՛ղ, և նրանք ի՞նչ շահ ունեին:

ՄԱԿԴՈՒՖ

Կաշառված էին: Իսկ թագավորի երկու որդիքը,
Իշխան Մակկոմը և Դոնալդեյնը, գաղտնի փախել են:
Եվ դա կասկածի տեղիք է տալիս, որ նրանց գործն է:

ՌՈՍ

Այդ էլ բնության դեմ: Ո՛վ դու խիստ շոայլ փառասիրություն,
Որ քո սեփական կյանքի միջոցներն ինքդ լափում ես: Հավանական է,
ուրեմն, որ գահը Մահբեթին հասնի:

ՄԱԿԴՈՒՖ

Արդեն թագավոր հրապարակված է,
Եվ գնաց Սկոն թագադրվելու:

ՌՈՍ

Դունկանի մարմինն ո՞ւր է:

ՄԱԿԴՈՒՖ

Կոմս-Քիլ,
Իր նախորդների սուրբ դամբարանը,
Նրանց ոսկերքի ավանդատեղին:

ՌՈՍ

Գալո՞ւ ես Սկոն:

ՄԱԿԴՈՒՖ

Ո՛չ, սիրելի Ռոս, ես Ֆայֆ եմ գնում:

ՌՈՍ

Իսկ ես՝ դեպի Սկոն:

ՄԱԿԴՈՒՖ

Մաղթենք՝ ամեն բան լավ անցնի այնտեղ:
Բարի ճանապարհ, միգուցե տեսնենք,
Թե մեր հին հազուստն ավելի լավ էր, քան թե այս նորը:

ՌՈՍ

Հա՛յր, մնաս բարով:

ԾԵՐՈՒԿ

Աստված օրհնի քեզ և բոլոր նրանց,
Որոնք ձգտում են վատը լավացնել
Եվ չարակամին բարեկամ դարձնել:

Գնում են:

ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Մի սենյակ պալատի մեջ:

Գալիս է Բանքոն:

ԲԱՆՔՈ

Ամեն բան եղար, թագավոր, Կավդոր, Գլամիս, բոլորը,
Ինչպես խոստացան այն վիուկ կանայք: Եվ վախենում եմ,
Որ դրա համար շատ կեղտոտ մի խաղ խաղացած լինես:
Բայց և ասացին, թե դա չի մնա քո սերնդի մեջ,
Այլ ես կլինեմ արմատ ու ծնող շատ արքաների:
Եթե կարող է ճշմարտություն գալ այն վիուկներից,
Ինչպես քեզ վրա, Մակբեթ, փայլում են նրանց խոսքերը,
Ինչո՞ւ չեն կարող քեզ վրա հաստաաված ճշտություններով

Նաև ինձ համար մարգարե լինել ու հույսեր տալ ինձ:
Բայց հո՛ւշ, չխոսենք:

*Փողերի հնչյուն, գալիս է Մակբեթը՝ որպես թագավոր, լեղի Մակբեթը՝
որպես թագուհի, Լենոքսը, Ռոսը, լորդեր, լեղիներ և սպասավորներ:*

ՄԱԿԲԵԹ

Ահա այստեղ է մեր ավագ հյուրը:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Եթե մոռացած լինեինք նրան,
Դա մեր խնջույքում մի բաց կլիներ ու բոլորն անշուք:

ՄԱԿԲԵԹ

Տեր իմ, այս գիշեր մի հանդիասվոր հացկերույթ ունենք,
Եվ պիտի խնդրեմ, որ ներկա լինեք:

ԲԱՆՔՈ

Թող հրամայի ինձ ձեր բարձրությունը,
Որի հետ պարտքերս անլույծ կապերով կապված են ընդմիշտ:

ՄԱԿԲԵԹ

Ձի՞ տք հեծնելու կեսօրից հետո:

ԲԱՆՔՈ

Այո, տեր արքա:

ՄԱԿԲԵԹ

Այլապես այսօր մեր ժողովի մեջ պիտի խնդրեինք
Ձեր լավ խորհուրդը, որ միշտ եղել է թե՛ լուրջ, թե՛ հաջող:
Բայց վաղը կառնենք: Հեռո՞ւ եք գնում:

ԲԱՆՔՈ

Այնքան, որ, տեր իմ, կարող է տևել մինչև ընթրիքը:
Նույնիսկ եթե ձիս շատ լավ չքայլի,
Դեռ գիշերից էլ մեկ-երկու մութ ժամ պետք է փոխ առնեմ:

ՄԱԿԲԵԹ

Բայց ետ չմնաք մեր հացկերույթից:

ԲԱՆՔՈ

Չեմ մնա, տեր իմ:

ՄԱԿԲԵԹ

Ինչպես լսում ենք, մեր արյունախանձ ազգականները
Ապավիհնել են Անգլիա և Իռլանդ
Եվ իրենց անգութ հայրասպանությունը չեն խոստովանում,
Այդ տարօրինակ առասպելներով
Խաբում են իրենց ունկնդիրներին: Այդ մասին վաղը,
Երբ որ դրա հետ ուրիշ պետական կարևոր գործեր
Մեզ կհրավիրեն խորհրդակցության: Ձի նստեք շուտով
Եվ երթաք բարով մինչև այս գիշեր: Ֆլի^ոնսն էլ ձեզ հետ է:

ԲԱՆՔՈ

Այո, ազնիվ տեր: Մեր ժամանակը փութացնում է մեզ:

ՄԱԿԲԵԹ

Ցանկանում եմ ձեզ հաստատասմբակ և արագ ձիեր
Եվ հանձնում եմ ձեզ նրանց թիկունքին: Բարի ճանապարհ:

Բանքոն գնում է:

Յուրաքանչյուր մարդ այժմ տեր լինի իր ժամանակին
Մինչև գիշերվա ճիշտ յոթը ժամը:
Իսկ մենք հյուրերին ավելի սիրով պատվելու համար
Ուզում ենք մինչև ընթրիքի ատեն առանձին մնալ:
Մինչ այն, տեր ընդ ձեզ:

Բոլորը դուրս են գնում, բացի Մակբեթից և մի ծառայից:

Տղա՛, քեզ հետ եմ:

Արդյոք այն մարդիկ սպասո՞ւմ են մեզ:

ԾԱՌԱ

Այո, տեր արքա, դրսումն են նրանք, պալատի դռանը:

ՄԱԿԲԵԹ

Բեր նրանց այստեղ:

Ծառան դուրս է գնում:

Լինել այս ոչի՛նչ է. Ապահով կերպով լինելն է բանը:

Վախս Բանքոյից խոր արմատ ունի,

Եվ արքայական այն բնության մեջ մի բան է իշխում,

Որից երկյուղ կա: Շատ խիզախ է նա

Եվ հոգու անսաստ խառնվածքի հետ

Ունի այնպիսի իսելամտություն,

Որ հավետ նրա արիությունը խորհուրդ է տալիս

Ապահով գործել: Չկա ոչ մի մարդ, բացի նրանից,

Որի գոյությունն ինձ երկյուղ ազդի:

Ոգիս նրա մոտ այնպես նկուն է,

Ինչպես, ասում են, Անտոնիոսինը՝ Կեսարի առաջ:

Նա հանդիմանեց գուշակ քույրերին,

Երբ առաջին հեղ արքա անունը դրին ինձ վրա,

Հրամայեց նրանց, որ իր հետ խոսեն,

Ապա քույրերը, մարգարեի պես,

Նրան կանչեցին հայր արքաների մի ամբողջ շարքի,

Իմ գլխին դրին անպտուղ մի թագ

Եվ իմ բռան մեջ՝ ամուլ գայիսուն,

Որ կորզելու է անտոհմիկ մի ձեռք,

Քանի որ ոչ մեկն իմ որդիներից չի ժառանգելու:

Ուրեմն Բանքոյի՞ սերնդի համար պղծեցի հոգիս:

Նրա՞նց համար է, որ սպանեցի բարի Դունկանին
Եվ խաղաղության իմ բաժակի մեջ լեղի խառնեցի,
Լոկ նրա՞նց համար: Իմ անմահական գոհարը տվի
Մարդկային ցեղի հանուր թշնամուն,
Նրա՞նց թագավոր դարձնելու համար:
Բանքոյի սերմը զա՛րմ արքաների:
Ո՛չ, ավելի՛ շուտ ասպարեզ եկ, բա՛խտ,
Մարտի կանչիր ինձ, կովե՛նք մինչև վերջ:
– Ո՞վ կա այստեղ, հե՛յ:

Ծառան գալիս է երկու մարդասպանների ձեռ:

Կաց դռան առաջ և կանգնիր այնտեղ, մինչև որ կանչենք:

Ծառան դուրս է գնում:

Երեկ չէ՞ր, որ մենք խոսեցինք ձեզ հետ:

Ա. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Այո, երեկ էր, ձերդ բարձրություն:

ՄԱԿԲԵԹ

Լավ մտածեցի՞ք ասածներիս վրա: Իմացեք, նա էր,
Որ անցյալի մեջ ձեզ այնպես սաստիկ անբախտացրել էր,
Եվ կարծում էիք՝ ես անմեղ էի:
Բայց այդ մեր վերջին տեսակցության մեջ ապացուցեցի
Եվ փաստեր տվի, թե նա ինչ կերպով ձեզ ձեռք էր առել,
Ինչպես էր ձեր դեմ արգելք հարուցում,
Ի՞նչ գործիքներով, ո՞վ էր բանեցնում այդ գործիքները
Եվ ամեն ուրիշ պարագաները,
Որոնք կես-խենթին, խելագուրկին էլ ասել կաային.
«Ահա թե ինչպես գործում էր Բանքոն»:

Ա. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Հայտնեցիք մեզ այդ:

ՄԱԿԲԵԹ

Այո, հայտնեցի և դեռ ավելի առաջ գնացի,
Ինչ որ այս երկրորդ մեր տեսակցության նյութն է լինելու:
Արդյոք իսկապե՞ս ձեր համբերությանն այնպես իշխող է
Ձեր հոգու վրա, որ թույլ պիտի տաք այս բոլորն անցնի:
Կամ թե այնքան լավ ավետարանի աշակերտներ եք,
Որ աղոթք անեք այս բարի մարդու
Եվ նրա գալիք սերնդի համար,
Որ ծանր ձեռքով կորացրել է ձեզ մինչև գերեզման
Եվ զավակներիդ մուրացկան շինել հար ու հավիտյան:

Ա. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Մենք մարդ ենք, տեր իմ:

ՄԱԿԲԵԹ

Այո, ցուցակում մարդկանց շարքումն եք,
Ինչպես ամեն շուն, բարակ, խառնածին, քերծե, սպանյոլ,
Բրդոտ ջրի շուն, գամփո, գայլաշուն,
Ամենքն անխտիր շուն են հորջորջվում:
Գնացուցակն է, որ տարբերում է արագը, ծանրը,
Ուշիմը, որսկանն ու տուն պահողը, նայած այն ձիրքին,
Որ ամփոփել է բարի բնությունն ամեն մեկի մեջ,
Որից ամկն մեկն առնում է հատուկ իր մականունը,
Զատ այն ցուցակից, որ բոլորին էլ արձանագրում է
Նույն անունի տակ: Նույնպես և մարդիկ:
Արդ, եթե դուք էլ հատուկ տեղ ունեք արժեքների մեջ,
Ոչ թե մարդկության ամենաստորը, ասացեք ինձ այդ,
Եվ ես ձեզ գաղտնի մի գործ կհանձնեմ,
Որի կատարումն իսպառ կջնջի ձեր մեծ թշնամուն
Եվ ձեզ կպրկի ընդմիշտ մեր սրտի և մեր սիրո հետ,
Մեր, որ հիվանդ ենք, քանի ողջ է նա,
Եվ որ կատարյալ առողջ կլինենք, երբ նա չլինի:

Բ. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Ես մի մարդ եմ, տեր, որին աշխարհի պիղծ հարվածները
Այնպես բորբոքեք և զայրացրել են, որ, ինչ էլ լինի,
Պատրաստ եմ անել աշխարհի քենից:

Ա. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Ես էլ մի այլը, ձախորդությունից այնպես տաղտկացած,
Բախտից քաշկոտված, որ հոժար եմ կյանքս արկածի դնեք,
Որ կամ բարվոքեմ և կամ ինձ փրկեմ:

ՄԱԿԲԵԹ

Երկուսդ էլ հիմա գիտեք, որ Բանքոն ձեր թշնամին էր:

ԵՐԿՈՒՍԸ

Ճիշտ է, տեր արքա:

ՄԱԿԲԵԹ

Նույնպես և իմը:

Եվ այն աստիճան արյունախնդիր ռիսակալությամբ,

Որ նրա կյանքի ամեն մի րոպեն մի հարձակում է

Կյանքիս ծուծի դեմ: Եվ թեպետ ինքս լավ կարող էի

Ի տես աշխարհի, իմ իշխանությամբ

Աչքիս առջևից չքացնել նրան,

Եվ խոստովանել, թե կամքս այդպես էր,

Բայց ի սեր որոշ բարեկամների,

Որոնք թե՛ իմն են և թե՛ նրանը,

Եվ որոնց սերը չեմ ուզում կորցնել, չպետք է անեմ. . .

Այլ պետք է ողբամ այն մտրդու վրա,

Որին ես ինքս տապալած լինեմ:

Ահա թե ինչո՛ւ դիմում եմ այսպես ձեր օգնությանը,

Ծածկելով գործը հանրության աչքից

Զանազան ծանր նկատումներով:

Բ. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Մենք կանենք, տեր իմ, ինչ որ հրամայեք:

Ա. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Թեկուզ մեր կյանքն էլ...

ՄԱԿԲԵԹ

Գիտեմ, ձեր ոգին փայլատակում է ձեր աչքերի մեջ:
Մեկ ժամից առաջ, ամենաուշը, ձեզ իմաց կտամ,
Թե որտեղ բռնեք, և ձեզ կհայտնեմ ճիշտ ժամանակը
Եվ նույնիսկ բռայեն: Պետք է ա՛յս գիշեր գործը կատարվի
Եվ մեր պալատից մի փոքր հեռու: Բայց միշտ հիշեցեք,
Որ պահանջում եմ մաքուր երևալ: Մի բան էլ դեռ կա:
Որպեսզի գործը ոչ փոնթ ունենա և ոչ կարկատան,
Ֆլինս, նրա որդին, որ նրա հետն է,
Եվ որի ջնջումն ինձ նույնչափ պեաք է, որչափ հոր մահը,
Պետք է ընդգրկի այդ մթին ժամի ճակատագիրը:
Ինքներդ առանձին որոշում տվեք: Ես շուտով կգամ:

Բ. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Վճռել ենք, տեր իմ:

ՄԱԿԲԵԹ

Իսկույն գալիս եմ, ներսում սպասեցեք:

Մարդասպանները գնում են դուրս:

Վերջացա՛վ,– Բանքո, եթե քո հոգին երկինք պիտի գնա,
Այս գիշեր նեթ պետք է սլանա:

Գնում է:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Նույն տեղը, մի ուրիշ սենյակ:

Գալիս է լեղի Մակբեթը մի ծառայի հետ:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Բանքոն պալատից դո՞ւրս է գնացել:

ԾԱՌԱ

Այո, տիրուհի, բայց երեկոյան կվերադառնա:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Ասա արքային, թե կցանկանայի երկու բառ ասել,
Երբ բարեհաճի:

ԾԱՌԱ

Իսկույն, տիրուհի:

Ծառան դուրս է գնում:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Ոչինչ չի շահվել, ամեն ինչ տուժվել,
Երբ մեր փափագը, թեն կատարված, մեզ չի գոհացրել
Ավելի լավ է կործանված լինել, քան թե կործանել
Եվ ապրել հավետ տարակուսելի ուրախության մեջ:

Գալիս է Մակբեթը:

Ինչպե՞ս ես, տերս, ինչո՞ւ ես այդպես միշտ մենակ մնում,
Տրտում ցնորքներ քեզ ընկեր դարձրած
Եվ որոճալով մտքեր, որ պետք է մեռած լինեին
Այն անձերի հետ, որոնց հիշում են:
Անճար բաներին մոռանալն է ճար: Արվածն արված է:

ՄԱԿԲԵԹ

Օձին չանգոեղ ենք, ոչ թե սպանել
Վերքը կկպչի, և նա կլինի ինչ որ կար առաջ:
Այնինչ ապիկար մեր չարաթյունը

Կմնա ենթարկված նույն ժանիքներին:
Բայց թող քայքայվի իրերի կազմը,
Երկու աշխարհն էլ քարուքանդ լինեն,
Քան թե երկյուղով ուտենք մեր հացը
Եվ քնենք տանջված այս սարսափելի մղձավանջներով,
Որ ցնցում են մեզ գիշերից գիշեր:
Լավ է լինեինք այն մեռյալի մոտ,
Որին մենք, հանգիստ շահելու համար,
Ճանապարհ դրինք դեպ իր հանգիստը,
Քան թե հոգեկան տանջարանի վրա պրկված մնալ
Անդուլ անդադար ցնորքների մեջ:
Դունկանը հիմա գերեզմանումն է,
Կյանքի տենդահույզ տազնապից հետո ննջում է անդորր:
Դավաճանությունն արեց այն ամենն, ինչ որ կարող էր:
Ոչ պողպատ, ոչ թույն, ոչ դավ առտնին, ոչ զորք արտաքին,
Ոչինչ չի կարող վնասել նրան:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Ե՛կ, բարի տերս,
Ողորկիր դեմքիդ այն կնճիռները,
Այս գիշեր ուրախ և զվարթ եղիր հյուրերից առաջ:

ՄԱԿԲԵԹ

Կլինեմ, քաղցրիկ, բայց դու էլ, խնդրեմ, ուրախ պահիր քեզ,
Ուշադրությունդ թող լարված մնա Բանքոյի վրա:
Մեծարիր նրան լեզվով ու աչքով,
Մեղ համար չկա ապահովություն,
Քանի դեռ պետք է մեր փառքը լվանք
Շողոքորթության այս գետերի մեջ
Եվ մեր երեսը սրտերիս համար դիմակ դարձնենք,
Ծածկելով աչքից, թե նրանք ինչ են:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Թող այդ բաները:

ՄԱԿԲԵԹ

Օ՛հ, կարիճներով լցված է հոգիս, սիրելի կինս:
Գիտես, որ Բանքոն դեռ կենդանի է, նույնպես և Ֆլինսը:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Սակայն նրանց մեջ կյանքի վարձագիրն հավերժական չէ:

ՄԱԿԲԵԹ

Այո, դեռ հույս կա, անխոցելի չեն: Ուրեմն՝ ուրախ կաց:
Նախքան թե չղջիկս իր թռիչքն անի վանատան շուրջը,
Եվ նախքան կոչից սև Հեկատեի
Ոսկեթև բզեզն իր խուլ բզզոցով
Իր հորանջաբեր գիշերազանգը հնչեցրած լինի,
Ահավոր մի գործ կատարվելու է:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Կատարվելո՞ւ, ի՞նչ:

ՄԱԿԲԵԹ

Դու անմեղ մնա տեղեկությունից, սիրելի ճուտիկ,
Մինչև որ ծափես ավարտված գործը: Աչքակապ գիշեր,
Եկ և պինդ կապիր գթոտ ցերեկվա կաթոգին աչքը
Եվ քո արյունոտ ու անտես ձեռքով
Ետ առ և ճղիր ու պատառոտիր այն մեծ մուրհակը,
Որ պահում է ինձ այսպես գունաթափ:– Թխպում է լույսը,
Թռչում է ագռավն իր թառատեղին մութ անտառի մեջ:
Ցերեկվա բոլոր բարի բաները սմբում են, թմբում,
Այնինչ գիշերվա սև գործիչները ոտքի են կանգնում
Եվ խլրտվում են դեպ իրենց որսը:
Շվարել էս դու խոսքերիս վրա, բայց հանգիստ մնա:

Վատ սկսվածը չարով կամրանա:

Եկ ինձ հետ, գնանք:

Դուրս են գնում:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Մի այգի, որի միջից մի ծառուղի տանում է դեպի պալատը:

Գալիս են երեք մարդասպան:

Ա. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Ո՞վ քեզ պատվիրեց, որ մեզ միանաս:

Գ. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Մակբեթը:

Բ. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Այս մարդու վրա պետք չէ կասկածենք,

Քանի որ հայտնեց մեր անելիքը,

Ճիշտ մեր ստացած հրահանգի նման:

Ա. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Սպասիր մեզ հետ:

Դեռ արևմուտքում փայլում են օրվա մի քանի շողեր:

Ուշացած ճամփորդն այժմ շտապով խթանում է ձին,

Որ կանուխ հասնի իր հյուրանոցը,

Եվ մոտենում է նա, որի համար հսկում ենք այստեղ:

Գ. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Մը՛ս, ձի է գալիս:

ԲԱՆՔՈ (Դրսից)

Էհե՛յ, մեզ համար մի ճրագ բերեք:

Բ. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Ուրեմն՝ նա է: Բոլոր մյուսները,
Որոնք հրավերի ցուցակի մեջ են, արդեն պալատն են:

Ա. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Նրա ձիերը շեղվում են ճամփից:

Գ. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Մեկ մղոնի չափ: Նա էլ այտեղից մինչև պալատը
Ոտքով է գնում ուրիշների պես:

*Գալիս էն Բանքոն, Ֆլինսը և մի ծառա, որ ջահը ձեռքին նրանց առջևից է
գնում:*

Բ. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Ջա՞հ է, ջա՞հ:

Դ. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Ի՛նքն է:

Ա. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Հայդե՛: Հարձակվի՛ր:

ԲԱՆՔՈ

Անձրև է գալու այս գիշեր:

Ա. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Թող գա: Հարձակվում է Բանքոյի վրա:

ԲԱՆՔՈ

Դավաճանություն, փախի՛ր, Ֆլինս, փախի՛ր, փախի՛ր, գավակս
Եվ վրեժս հանիր:– Օ՛հ, դու սրիկա՛ ...

Մեռնում է: Ֆլինսը և ծառան փախչում են:

Գ. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Այն ջահն ո՞վ մարեց:

Ա. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Լավ չարի՞ միթե:

Գ. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Մեկն է վար ընկել, որդին փախել է:

Բ. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Գործի լավ կեսը ձեռքից փախցրինք:

Ա. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Լավ, դնանք հայտնենք որչափն է արվել:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Մեծ դահլիճ պալատում: Խնջույքի սեղան:

Գալիս են Մակբեթը, լեդի Մակբեթը, Ռոսսը, Լենոքսը, լորդեր և սպասավորներ:

ՄԱԿԲԵԹ

Ինքներդ գիտեք աստիճաններդ,

Նստեք: Առաջին և վերջին անգամ, ձեզ բարի գլուստ:

ԼՈՐԴԵՐ

Շնորհակալություն ձերդ բարձրության:

ՄԱԿԲԵԹ

Իսկ մենք ինքներս ուզում ենք խառնվել ձեր հյուրերի հետ

Եվ խաղալ դերը խոնարհ տանտիրոջ:

Մեր տանտիրուհին իր արքունական տեղը կբազմի,

Բայց հարմար ժամին կխնդրենք, որ ձեզ իր բարևն ասի:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Ինքներդ իմ կողմից, տեր իմ, ասացեք բարեկամներին,
Քանի որ սիրտս ասում է նրանց՝ բարով եք եկել:

Գալիս է Ա. մարդասպանը՝ դռան առաջ:

ՄԱԿԲԵԹ

Նրանք էլ իրենց շնորհակալությամբ, հանդիպում են քեզ:
Երկու կողմերը հավասար են այժմ:
Այստեղ կնստենք ուղիղ մեջտեղը:
Լավ զվարճացեք: Շուտով կխմենք բոլորահերթը:

Մոտենալով դռանը:

Արյուն կա դեմքիդ:

ՄԱՐԴԱՍՊԱՆ

Բանքոյինն է այդ:

ՄԱԿԲԵԹ

Լավ է քեզ վրա, քան թե նրա մեջ:
Ճամփեցի՞ ք նրան:

ՄԱՐԴԱՍՊԱՆ

Ես ինքս, տեր իմ, վիզը կտրեցի:

ՄԱԿԲԵԹ

Վիզ կտրողներից ամենալավն ես,
Բայց նա էլ լավ է, ով որ Ֆլինսի հետ նույնն արած լինի,
Թե այն էլ դու ես, անդուզական ես:

ՄԱՐԴԱՍՊԱՆ

Ա՛խ, վեհափառ տեր, Ֆլինսը խույս տվեց:

ՄԱԿԲԵԹ

Ուրեմն՝ ախտս գալիս է կրկին,
Թե ոչ, կատարյալ պիտի լինեի,
Ողջ, ինչպես մարմար, հաստատ, ինչպես ժայռ
Եվ համատարած ու ազատ, ինչպես պտրփակող օդը:
Իսկ այժմ կապված եմ, կաշկանդված, գոցված,
Պատած ստահակ տարակույսներով և երկյուղներով...
– Բայց Բանքոյի գործն ապահովվա՞ծ է:

ՄԱՐԴԱՍՊԱՆ

Այո, տեր արքա, ապահով է նա մի խոր փոսի մեջ,
Քսան ճեղք բացված իր գլխի վրա,
Ամենից վաքրը սպանիչ կյանքի:

ՄԱԿԲԵԹ

Այդ մեկի համար շնորհակալ եմ:
(*Առանձին*): Մեծ օձն ընկել է, բայց փախած որթը այն բնույթն ունի,
Որ այժմ անատամ, բայց ժամանակին թույն է թորելու:
– Գնա՛, մենք վաղը նորից կխոսենք:

Մարդասպանը գնում է:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Վեհափառ տեր իմ, դուք չեք խրախուսում:
Վաճառված բան է այն հացկերույթը,
Երբ հյուրընկալը չի կրկնում հաճախ խնջույքի ժամին,
Թե հոժարասիրտ տրված հարգանք է:
Ուտելը տան մեջ ավելի լավ է,
Տնից դուրս ճաշի բոլոր համեմը պատվասիրումն է:
Համախմբումը, առանց այդ բանի, անզարդ կլիներ:

ՄԱԿԲԵԹ

Քաղցրի՛կ հուշարար: Այժմ թող բարի մարտողությունը
Հետևորդ դառնա լավ ախորժակին,
Եվ այն երկուսին՝ առողջությունը:

ԼԵՆՈՔՍ

Ձեր բարձրությունը թող հաճի նստել:

Բանքոյի ուրվականը դուրս է գալիս և նստում Մակբեթի տեղը:

ՄԱԿԲԵԹ

Երկրի բոլոր փառքն ամբողջ կլիներ այդ հարկի ներքո,

Եթե Բանքոյի շնորհալից անձը այժմ այստեղ լիներ:

Եվ երանի թե մեղադրեմ նրան անսիրության մեջ,

Քան թե ստիպվեմ մի փորձանք ողբալ:

ՌՈՍ

Տեր արքա, նրա բացակայությունն սրատ է դնում

Իր խոստման վրա: Թող բարեհաճի ձեր բարձրությունը

Իր արքայական սեղանակցությամբ մեզ պատիվ անել:

ՄԱԿԲԵԹ

Սեղանը լի է:

ԼԵՆՈՔՍ

Այստեղ մի աթոռ պահված կա, տեր իմ:

ՄԱԿԲԵԹ

Ո՞ւր:

ԼԵՆՈՔՍ

Այստեղ, տեր իմ: Բայց ի՞նչն է արդյոք ձեզ այդպես հուզում:

ՄԱԿԲԵԹ

Ձեզնից ո՞ր մեկն է արել այս բանը:

ԼՈՐԴԵՐ

Ի՞նչ բան, տեր արքա:

ՄԱԿԲԵԹ

Չես կարող ասել թե ես եմ արել:

Մի ցնցիր վրաս արյունաշաղախ այդ գանգուրների:

ՌՈՍ

Վեր կացեք, լորդեր, մեր տերը լավ չէ:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Նստեք, հարգելի իմ բարեկամներ,

Հաճախ ամուսինս այդպեսս է լինում

Եվ երիտասարդ տարիքից ի վեր այդպես է եղել:

Նստեցեք, ինդրեմ: Հիվանդությունը բույեական է,

Մի ակնթարթում նա կառողջանա:

Եթե շատ նայեք, կգրգռեք նրան,

Եվ նրա հույզը կերկարաձգվի:

Կերակուր կերեք, մի՛ նայեք նրան:– Մի՞ թե մարդ չես դու:

ՄԱԿԲԵԹ

Այո, և քաջ մարդ, որ հանդգնում է նայել մի բանի,

Որից դին անգամ պիտի զարհուրեր:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Ի՞նչ դատարկ խոսքեր:

Մա էլ քո վախի նկարած բանն է:

Մա էլ օդային դաշույնի պես է, որ ասում էիր

Քեզ դեպի Դունկանն առաջնորդում էր:

Օ՛, այս դողերը և խրտչումները,

Իսկական ահի այս կեղծիքները,

Այն հեքիաթներին միայն վայել են,

Որ կանայք, նսաած կրակի կողքին, սովոր են պատմել

Իրենց տատերի հեղինակությամբ: Ամո՛թ է, ամո՛թ:

Ինյո՞ւ ես այդպես կերպարանք առել:

Եվ, վերջ ի վերջո, այդ, որ տեսնում ես, մի պարզ աթոռ է:

ՄԱԿԲԵԹ

Մեկ նայիր, խնդրեմ, տես, նայիր, ահա:
– Հա՞, ի՞նչ ես ասում, ինձ ի՞նչ... ինձ ի՞նչ փույթ,
Եթե կարող ես գլուխդ շարժել, ապա և խոսիր:
Եթե այսուհետ դիականոցներն ու շիրիմները
Ետ են դարձնելու մեր թաղածներին,
Թող ուրուրների քարձիկը դառնա մեր դամբարանը:

Ուրվականն անհետանում է:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Վա՛հ, բոլորովին տմարդացե՞լ ես:

ՄԱԿԲԵԹ

Եթե հաստատ է, որ ես այստեղ եմ, ես տեսա նրան:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Բա՛հ, ամո՛թ, ամո՛թ:

ՄԱԿԲԵԹ

Սրանից առաջ էլ արյուն թափվել է.
Հին դարերի մեջ, նախքան մարդկային օրենսդրությունը
Հստակաձ լինելը ընկերությունը և մեղմափոխած:
Այս, հետո էլ սպանություններ շատ են կատարվել
Խիստ զարհուրելի ականջի համար: Բայց այն ժամանակ,
Երբ որ ուղեղը ցրվում էր գանգից, մարդը մեռնում էր,
Եվ այդ էր վերջը: Իսկ այժմ նրանք էլնում, կանգնում են
Քսան մահացու պատովածք գլխին
Եվ մեզ աթոռից դեն են շարտում:
Սա շատ ավելի այլանդակ բան է,
Քան թե այնպիսի մի սպանություն:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Իմ ազնիվ տերս, բարեկամներդ կարոտել են քեզ:

ՄԱԿԲԵԹ

Մոռացել էի:– Մի՛ ապշեք վրաս, իմ բարեկամներ:
Խիստ տարօրինակ մի տկարություն անեմ ես վաղուց,
Որ ոչինչ բան է ծանոթներիս մոտ:
Եկեք, ողջություն՝ ւն և սե՛ր բոլորիդ: Ուրեմն՝ նստեմ:
– Գինի տվեք ինձ, լցրեք լիուլի:
Ահա խմում եմ ամբողջ սեղանի ուրախությանս
Եվ շատ սիրելի մեր բարեկամի՝ Բանքոյի կենաց,
Որին կարոտ եմք: Շատ ցանկայի էր, որ այստեղ լիներ:
Բոլորի՛ն և նրան, ամենքս ամենքին:

Ուրվականը վեր է բարձրանում:

ԼՈՐԴԵՐ

Մեր հարգա՛նքը ձեզ, ամենքի կենա՛ց:

ՄԱԿԲԵԹ

Կորիր իմ աչքից, և թող գետինը քեզ ծածկի իր տակ,
Ոսկերքդ անծուծ են, արյունդ պաղ է,
Եվ տեսողություն դու չունես բնավ այդ աչքերի մեջ,
Որ խոժոռում ես:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Մր սովորական բան է այս, լորդեր,
Այլ բան չկարծեք, միայն թե ափսո՛ս,
Որ խանգարում է ներկա խնջույքը:

ՄԱԿԲԵԹ

Այն բոլորն, ինչ որ մի մարդ կարող է, կարող եմ և ե՛ս:
Դո՛ւրս եկ իմ առաջ որպես կոշտամազ Ռուսաստանի արջ,
Զինված ոնգեղջյուր կամ Հիրկանի վագր,
Առ որևէ ձև, բայց ո՛չ այդ մեկը,
Եվ պիրկ ջղերս չեն դողա երբեք: Կամ կենդանացիր

Եվ ինձ քո սրով ասպարեզ կանչիր անապատի մեջ:
Եթե դող ցույց տամ, հրապարակիր ինձ աղջկա տիկնիկ:
Կորի՛ր այստեղից, ահռելի ուրու:
Անկենդան խաբկանք, չքվի՛ր:

Ուրվականն անհետանում է:

Հա՛, այդպես:
Հիմա որ գնաց, ես մարդ եմ նորից:– Նստեցե՛ք խնդրեմ:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Դու վռնդեցիր ուրախությունը,
Մեր լավ խնջույքը տակնուվրա արիր
Խիստ զարմանալի այդ անկարգությամբ:

ՄԱԿԲԵԹ

Կարո՞ղ են լինել այսպիսի բաներ
Եվ ամառային մի ամպի նման պոռթկալ մեզ վրա
Եվ մեզ չապշեցնել: Ջարմացնում եք ինձ
Հենց իմ սեփական բնության վրա, երբ մտածում եմ,
Թե դուք կարող եք նայել այսպիսի տեսարանների
Եվ ձեր այտերի բնական հակինթն անաղարտ պահել,
Այնինչ իմ այտերն ահից դեղնել են:

ՌՈՍ

Ի՞նչ տեսարաններ, տեր իմ:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Խնդրում եմ, մի՛ խոսեք հետը:
Որքան խոսում եք, այնքան վիճակը վատթարանում է,
Հարցումը նրան կատաղեցնում է: Ձեզ բարի գիշեր:
Էլ մի սպասեք կարգով մեկնելու, հեռացե՛ք մեկնն:

ԼԵՆՈՔՍ

Ձեզ գիշեր բարի և առողջություն նորին բարձրություն:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Բարի գիշեր գա ամենքիդ վրա:

Լորդերը և սպասավորները դուրս են գնում:

ՄԱԿԲԵԹ

Արյուն է ուզում... Ասում են՝ արյունն արյուն է ուզում:
Շաա է պատահել, որ քարեր շարժվել, ծառեր խոսել են,
Կանխանշաններ և հասկանալի հարակցություններ,
Կաշաղակներով և անձողներով ու ագռավներով
Ամենից թաքուն արյունահեղին հայտնագործել են:
Արդյոք գիշերի ո՞ր Ժամանակն է:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Գրեթե մրցում է առավոտվա հետ, թե որն է որը:

ՄԱԿԲԵԹ

Լավ, ի՞նչ ես ասում, որ Մակդուֆ մերժեց ներկա գանվել
Մեր մեծ կոչունքին:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Մի՞ թե դու նրան հրավիրել էիր:

ՄԱԿԲԵԹ

Ես անուղղակի աեղեկացրել եմ, բայց մարդ կուղարկեմ:
Չկա ոչ մեկը այդ պարոններից,
Որի տան մեջ իսկ մի մարդ չունենամ:
Վաղը կգնամ, առավոտ կանուխ, վիուկների մոտ:
Ավելի որոշ պետք է ասեն ինձ:
Հիմա վճռել եմ վատթար միջոցով վատթարն իմանալ:
Իմ օգտի առաջ ամեն ուրիշ բան տեղի պետք է տա:
Արյան մեջ այնքան ես խորն եմ մխվել

Որ եթե չուզեմ առաջ ընթանալ,
Նահանջը նույնչափ դժվար է, որչափ առաջ դիմելը:
Ահավոր բաներ ունեմ գլխիս մեջ,
Որոնք ուզում են դիմել դեպի ձեռք,
Եվ որոնց պետք է դորձադրության տամ նախքան թե կշռեմ:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Քեզ պակասում է քունը, կազդուրիչն ամեն էակի:

ՄԱԿԲԵԹ

Եկ գնանք քնենք: Իմ տարօրինակ ինքնատանջումը
Համբակի վախ է, վարժության կարոտ:
Խակ ենք գործի մեջ:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆՔԵՐՈՐԴ

Յախադաշտը, որոտ:

Գալիս են երեք վհուկները՝ հանդիպելով Հեկատեին, դժոխքի դիցուհուն:

Ա. ՎՀՈՒԿ

Ինչո՞ւ ես, Հեկատ, այդպես բարկացել:

ՀԵԿԱՏ

Իրավունք չունե՞մ, պառավ վհուկներ,
Չափազանց հանդուգն, լպիրշ ջադուներ:
Ո՞վ թույլ տվեց ձեզ, որ Մակբեթի հետ
Դավակից դառնաք,
Մահու գործերը և խորհուրդները
Մարգարեանաք:
Եվ ինձ՝ տիրուհուն թովջությունների,
Գաղտնի նյութողին չարությունների,
Չիրավիրեցիք ձեզ հետ միանալ

Եվ մեր արվեստի մեծ փառքը ցույց տալ:
Եվ, որ դեռ վատն է, այդ դավերը չար
Գործ դրիք մի փուչ գավակի համար,
Ոխակալ, մաղձոտ, որ ձեզ չի սիրում,
Այլ, մյուս մարդկանց պես, իր շահն է փնտրում:
Դե՛հ, սխալներդ հիմա ուղղեցեք
Եվ շուտ այստեղից թռեք հեռացեք
Եվ Ախերոնի խորխորատի մոտ
Սպասեցեք ինձ դուք վաղն առավոտ:
Նա կգա այնտեղ ձեզ հարց անելու,
Իր ճակատագրին տեղեկանալու:
Պատրաստ պահեցեք ձեր անոթները,
Ձեր թովչանքները և հուռութիւնները:
Ես օդն եմ թռչում, և գիշերն այնտեղ
Մի դավ կնյութեմ, սուկալի, ահեղ:
Մի օրհասական գործ խորհրդավոր,
Որ կկատարվի մինչ վաղը կեսօր:
Մի գուրռշեղեն կաթիլ թունալից
Կախված է այնտեղ լուսնի եղջյուրից,
Դեռ գետին չընկած կբռնեմ ես այն,
Դյութքի արհեստով կգտեմ ես այն,
Եվ այն գործությամբ գետնից դուրս կգան
Ոգիներ պատրիչ և արվեստական,
Որոնք Մակբեթին խելքից կհանեն
Եվ նրան դեպի անկում կտանեն:
Եվ կարհամարհի նա օրհաս ու մահ,
Կանարգի ամեն սրբություն և ահ,
Եվ, ինչպես գիտեք, ամենայն բանում
Գոռոզությունն է մարդուն կործանում:

(*Երգ դրսից*) «Եկ ինձ մոտ, եկ ինձ մոտ»:

Ա՛հ, փոքրիկ ոգիս, տեսեք, կանչում է,
Մեզի մեջ նստած ինձ սպասում է:

Ա. ՎՀՈՒԿ

Եկեք շտապենք, շուտով ետ կգա:

Վհուկներն անհետանում են:

ՏԵՍԱՐԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Ֆորես: Մի սրահ պալատում:

Գալիս են Լենոքսը և մի ուրիշ լորդ:

ԼԵՆՈՔՍ

Իմ ասածները զուգադեպ եղան ձեր մտքերի հետ,

Մնացորդն իրենք թող մակաբերեն:

Միայն, ասում եմ, իրերն անսովոր ընթացք ստացան,

Մակբեթ շատ ողբաց ազնիվ Դունկանին. հարկավ, մեռած էր,

Եվ արի Բանքոն անժամ ման եկավ:

Նրան էլ, ուզեք, կարող եք ասել, թե Ֆլինսն սպանեց

Այն հիման վրա, որ Ֆլինսը փախավ:

Մարդիկ չպետք է տարածամ ման գան:

Ո՞վ չի մտածի, թե ինչ աստիճան հրեշավոր բան էր

Մւակոմի կողմից Դոնալդեյնի՝

Իրենց շնորհալից հորը սպանել: Դժոխային գործ...

Ինչպե՛ս Մակբեթին դա ցավ պատճառեց:

Չէ՞ որ նա իսկույն, բորբոքված ազնիվ կատաղությունից,

Պատռեց երկու չարագործներին,

Որոնք խմիչքի ստրուկներ էին և քնի գերի:

Ազնիվ գործ չէ՞ր այդ: Այո, և խոհեմ:

Քանի որ ո՞վ է, որ չկատաղեր,

Լսելով նրանց ուրացումները: Այսպես, ասում եմ,

Մակբեթ ամեն բան լավ է կարգադրել

Եվ, հաստատ գիտեմ, եթե Դունկանի որդիներին էլ
Կարենար դնել իր փականքի տակ,
Ինչ որ ասածով չի կարողանա,
Նրանց ցույց կտար, թե ինչ ասել է հայրասպան լինել:
Նույնպես և Ֆլինսին: Բայց սուս: Մակդուֆը, ինչպես լսում եմ,
Մի քանի ազատ խոսքերի համար,
Եվ այն պատճառով, որ բռնակալի խնջույքին չեկավ,
Զրկվել է շնորհից: Կարո՞ղ եք ասել, թե ո՞ւր է փախել:

ԼՈՐԴ

Դունկանի որդին, որի ծննդյան իրավունքները
Այս բռնակողը հափշաակել է,
Ապրում է Անգլիո արքունիքի մեջ,
Եվ աստվածասեր Էդվարդի կողմից
Այնպես շնորհով հյուրընկալված է,
Որ բնավ բախտի դժկամությունը չի նվազեցրել
Նրա հարգանքից: Մակդուֆն էլ հիմա այնտեղ է դիմել,
Սուրբ թագավորից խնդրելու համար,
Որ ոտքի հանի Նորթումբերլանդին և քաջ Միվարդին,
Որ նրանց ձեռքով և երկնավորի վավերացումով
Մնունդ տանք կրկին մեր սեղաններին
Եվ անխոռվ քուն՝ մեր գիշերներին,
Մեր կոչունքներից և խնջույքներից վանենք դաշույնը,
Տանք հավատարիմ հպատակություն,
Ստանանք ազատ պատիվ ու պարծանք,
Որոնց բոլորից զրկված ենք հիմա:
Եվ այս լուրերը այնպես հուզել են սուրբ թագավորին,
Որ պատրաստվում է նա պատերազմի:

ԼԵՆՈՔՍ

Մակբեթը կանչե՞լ էր Մակդուֆին իր մոտ:

ԼՈՐԴ

Այո, կանչել էր, բայց մոայլադեմ պատգամավորը
Լսելով մի չոր՝ «Չե՛մ գալիս, պարո՛ն», թողեց ետ դարձավ
Եվ մի հը՛մ արեց, որով կարծես թե ուզում էր ասել.
«Շատ ես գոջալու ինձ այս բիրտ կերպով ճամփելուդ համար»:

ԼԵՆՈՔՍ

Երանի թե դա թելադրի նրան շատ զգույշ լինել
Եվ հեռու մնալ որքան որ դրդի խոհեմությունը:
Ա՛խ, մի սուրբ հրեշտակ թռչեր Անգլիո այն արքունիքը,
Եվ նա չհասած՝ ինքը մատուցեր նրա պատգամը,
Որպեսզի արագ օրհնությունն ետ գար
Այն անիծյալի ձեռքի տակ տանջված մեր հայրենիքին:

ԼՈՐԴ

Իմ աղոթքները նրան ուղեկից:

Գնում են դուրս:

ԱՐԱՐՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Մի քարանձավ: Մեջտեղում մի կաթսա է եռ գալիս:

Որոտ: Գալիս են երեք վհուկները:

Ա. ՎՀՈՒԿ

Երեք անգամ զոլ-զոլ կատուն մլավեց:

Բ. ՎՀՈՒԿ

Երեք անգամ և մեկ՝ ոգնին ձայն հանեց:

Գ. ՎՀՈՒԿ

Հարպին ճչաց, «Ժամանակ է, ժամանակ»:

Ա. ՎՀՈՒԿ

Կաթսայի շուրջ պտույտ գործենք,
Թունոտ աղիք մեջն ածենք:
Գորտ, որ սառը քարի տակ
Տիվ ու գիշեր երեսունմեկ
Թույն ես թորել շարունակ,
Մեր կաթասյում նախ եռ եկ:

ԱՄԵՆՔԸ

Դյութվիր, դյութվիր, տաժանք, նյութվիր,
Կաթսա, փրփրա, բոց, վառվիր:

Բ. ՎՀՈՒԿ

Ճահճի օձի մեջքի միս,
Կաթսայի մեջ եռա դու,
Մողեսի աչք, գորտի բութ,
Չղջիկի բուրդ, շան լեզու,
Խլեզի ոտք, բուի թև,
Իժի լեզու երկժանի,
Կույր գեռունի խայթոցն էլ,
Որ թովչանքը պինդ լինի,
Որպես ապուր դժոխքի,
Լավ եռացեք, փրփրացեք,
Ամեն դյութքի, հուռութքի Չորեղ խառնուրդ կազմեցեք:

ԱՄԵՆՔԸ

Դյութվիր, դյութվիր, տաժանք, նյութվիր,
Կաթսա, փրփրա, բոց, վառվիր:

Գ. ՎՀՈՒԿ

Վիշապի թեփ, գայլի ատամ,
Վհուկների մումիաներ,
Ծովի անհազ շնաձկան
Կոկորդը և աղիքներ,

Մթության մեջ գետնից հանված
Մորսխինդի դառն արմատ,
Բոզ մոր ցկնած, փոսում թաղված
Երեխայի ձեռքի մատ,
Այծի լեղի, գեղձի ոստ,
Լյարդ հայհոյիչ հրեայի,
Թաթարի շուրթ, թուրքի քիթ,
Ածենք մեջը կաթսայի,
Եվ թանձրացնենք ապուրը
Ու հյութալի դարձնենք,
Իբրև համեմ բոլորին
Վագրի աղիք ավելցնենք:

ԱՄԵՆՔԸ

Դյութվիր, դյութվիր, տաժանք, նյութվիր,
Կաթսա, փրփրա, բոց, վառվիր:

Բ. ՎՀՈՒԿ

Եվ ապուրը սառեցնենք
Մի բաբունի արյունով,
Որ դյութանքը դարձնենք,
Զորավոր ու ապահով:

Գալիս է Հեկատը:

ՀԵԿԱՏ

Լավ եք գործել, ես գոհ եմ,
Պետք է ձեր ջանքը գովեմ:
Ամեն մեկդ առանձին
Կառնեք շահից ձեր բաժին:
Հիմա եկեք խմբվեցեք
Որպես էլֆեր, փերիներ,
Կլոր շրջան կազմեցեք,

Որ բոլորը շաղախվի,
Եվ դյուրանքը կատարվի:

Երգ:

Սև ու սպիտակ ոգիներ,
Գորշ ու կարմիր ոգիներ,
Լավ խառնեցեք, խառնեցեք
Որչափ կարող եք՝ խառնեցեք:

Բ. ՎՀՈՒԿ

Բութերս քոր են գալիս,
Եվ դա ինձ ցույց է տալիս,
Որ անպատճառ մի չար բան
Դեպի այս կողմն է գալիս:
Բացվիր, դուռ,
Ով էլ որ գա, ճամփա տուր:

Գալիս է Մակբեթը:

ՄԱԿԲԵԹ

Է՛յ, դուք գաղտնագործ, կեսգիշերային մռայլ ջադուներ,
Այդ ի՞նչ եք անում:

ԱՄԵՆՔԸ

Մի գործ անանուն:

ՄԱԿԲԵԹ

Երդվեցնում եմ ձեզ հանուն ի՛նչ բանի որ դավանում եք,
Ինչպես էլ որ այդ իմացած լինեք, պատասխան ավեք,
Թեկուզ հողմերը սանձարձակ անեք
Եվ մարտնչել տաք տաճարների դեմ,
Թեկուզ կոհակը կործանի, կուլ տա նավարկությունը,
Թեկուզ ցորենը ցրիվ գա հասկից, և ծառերն ընկնեն,
Թեկուզ դոյակներ պահապանների գլխին տապալվեն,

Թեկուզ բուրգերը և պալատները
Գլուխները ծռեն մինչև հիմքերը,
Թեկուզ բնության սերմերի գանձը թավազլոր թափվի,
Մինչ այն աստիճան, որ կործանումն էլ ուժասպառ դառնա,
Պատասխան տվեք իմ հարցումներին:

Ա. ՎՀՈՒԿ

Խոսի՛ր:

Բ. ՎՀՈՒԿ

Հարց արա:

Գ. ՎՀՈՒԿ

Պատասխան կտանք:

Ա. ՎՀՈՒԿ

Արդյոք մեր բերնից կուզեիր լսել, թե՞ մեր մեծերից:

ՄԱԿԲԵԹ

Կանչեցեք նրանց, թույլ տվեք տեսնեմ:

Ա. ՎՀՈՒԿ

Կաթսայի մեջ թող լցնենք
Մատակ խոզի արյունից,
Հենց այն խոզի, որ լափեց
Ինը հատ իր ձագերից:
Մարդասպանի կախադանից
Ծորած ճարպն էլ մեջն ածեց:

ԱՄԵՆՔԸ

Եկ վերնից կամ վարից
Ցույց տուր քեզ և շնորհքդ:

Որոտ: Ա. տեսիլ, մի գլուխ՝ սաղավարտով:

ՄԱԿԲԵԹ

Ասա ինձ, ո՛վ դու անհայտ գորություն...

Ա. ՎՀՈՒԿ

Նա գիտե միտքդ. դու լսիր միայն, ինքդ մի՛ խոսիր:

Ա. ՏԵՍԻԼ

Մակբե՛թ, Մակբե՛թ, Մակբե՛թ, զգույշ Մակդուֆից,
Զգույշ կաց Ֆայֆից: Բաց թող ինձ: Բավ է:

Իջնում է գետն ի տակ:

ՄԱԿԲԵԹ

Ինչ էլ որ լինես,
Քո տված բարի խորհուրդի համար շնորհակալություն:
Ճիշտ վախիս դիպար... Բայց մեկ բառ ևս...

Ա. ՎՀՈՒԿ

Նա չի ենթարկվի ոչ մի հրամանի:
Ահա մի ուրիշն՝ ավելի գորեղ, քան առաջինը:

Որոտ: Բ. տեսիլ, մի արյունաթաթախ երեխա:

Բ. ՏԵՍԻԼ

Մակբե՛թ, Մակբե՛թ, Մակբե՛թ...

ՄԱԿԲԵԹ

Երեք ականջ էլ որ ունենայի, քեզ կլսեի:

Բ. ՏԵՍԻԼ

Արյունոռուշտ եղիր, խիզախ, վճռական,
Ծաղրիր մարդկային ամեն գորություն,
Կնոջից ծնված ոչ ոք չի կարող Մակբեթին վերք տալ:

Իջնում է գետն ի տակ:

ՄԱԿԲԵԹ

Դե՛հ, ապրիր, Մակդուֆ, ի՞նչ կարիք ունեմ քեզնից սուկալու,
Բայց պետք է դարձյալ ապահովությունս կրկնապատկեմ
Եվ ճակատագրից մուրհակ ստանամ: Չպիտի ապրես,
Որ կարողանամ գունատսիրտ վախի երեսին ասել .
«Դու սուտ ես խոսում» և քնել անփույթ՝ ամպրոպից անվախ:

Որոտ: Գ. տեսիլ, մի թագակիր երեխա՝ ձեռքին մի ծառ:

Ո՞վ է սա արդյոք, որ բարձրանում է
Իբրև սերունդը մի թագավորի,
Մանուկ ճակատին թագն ու պսակը վեհապետության:

ԱՄԵՆՔԸ

Լսիր, մի՛ խոսիր:

Գ. ՏԵՍԻԼ

Մեծամիտ եղիր և առյուծասիրտ,
Եվ փույթ մի՛ անիր, թե ո՛վ է հուզվում, ո՛վ է բարկանում,
Կամ թե որտեղ են դավադիրները:
Մակբեթի համար չկա պարտություն
Մինչև Բիրնամի այն մեծ անտառը վեր չբարձրանա
Դուսինեյն լեռը՝ նրա դեմ կռվի:

Իջնում է գետնի տակ:

ՄԱԿԲԵԹ

Եվ այդպիսի բան չի լինի երբեք:
Ո՞վ արդյոք իշխել կկարողանա անտառի վրա, հրամայել ծառին,
Որ երկրաշաղկապ իր արմատները դուրս քաշի գետնից:
Լա՛վ գուշակումներ, շա՛տ բարի: Ուրեմն, ապստա՛մբ գլուխ,
Մի՛ ելիր, մինչև Բիրնամի անտառը ոտքի չելնի:
Եվ մեր բարձրագահ Մակբեթը կապրի
Մինչև լրումը կյանքի վարձագրի և շունչը կտա

Ծերության միայն և սովորական մահկանացության:
Բայց այնուհանդերձ սիրտս տրոփում է մի բան գիտնալու,
Այս մեկն էլ ասեք, եթե կարող է ձեր արվեստն ասել,
Բանքոյի գարմը կթագավորի՞ այս պետության մեջ:

ԱՄԵՆՔԸ

Մի՛ փորձիր գիտնալ ավելի, քան այս:

ՄԱԿԲԵԹ

Պետք է գիտենամ:

Եվ եթե մերժեք, հավիտենական անե՛ծք ձեր գլխին:
Հայտնեցեք ինձ այդ: Ինչո՞ւ է կաթսան իջնում գետնի տակ:

Երաժշտություն:

Ա. ՎՀՈՒԿ

Ցույց տվեք:

Բ. ՎՀՈՒԿ

Ցույց տվեք:

Գ. ՎՀՈՒԿ

Ցույց տվեք:

ԱՄԵՆՔԸ

Երևացեք իր աչքին
Եվ իր սիրտը խոցեցեք,
Եկեք որպես ոգիներ,
Եվ նույն ձևով հեռացեք:

*Երևում են ուրթ թագավոր, վերջինը մի հայելի ձեռքին բռնած: Նրանց
ետևից՝ Բանքոյի ոգին:*

ՄԱԿԲԵԹ

Դու շատ ես նման Բանքոյի ոգուն: Մտիր գետնի տակ:
Թագդ կիզում է աչքիս բիբերը:
Եվ դո՛ւ, մի ուրիշ ոսկեզարդ ճակատ,
Քո գանգուրներն էլ առաջինի պէս են:
Ահա երրորդը՝ նախորդների պէս:
Այ դուք գարշելի պառավ վիուկներ,
Ինչի՞ համար եք ցույց տալիս ինձ այս:
Ի՞նչ է, մի չորրո՞րդ:– Դո՛ւրս եկե՛ք, աչքեր: Մի՞ թե այս գիծը
Երկարվելու է մինչև աշխարհի ճարճատման օրը:
Դարձյալ մի նո՛րը, յոթերո՞րդն է այս, չեմ ուզում տեսնել. . .
Էլ բավակա՛ն է... Բայց ութերորդն է հիմա դուրս գալիս
Եվ մի հայելի բռնած է ձեռքին,
Որ դեռ շատ-շատեր ցույց է տալիս ինձ:
Ոմանք կրում են երեք գայիսոն և կրկնակի գունդ:
Սոսկալի՛ տեսիլ: Տեսնում եմ հիմա, որ ճշմարիտ է,
Արյունաշաղախ մազերով Բանքոն ժպտում է վրաս,
Մատնանշելով նրանց բոլորին որպէս իր զարմը:
Իրա՞վ այնպէս է:

Ա. ՎՀՈՒԿ

Այնպէս է, տեր իմ, բոլորն այնպէս է:
Բայց ինչո՞ւ Մակբեթ կանգնած է ապշած:
Եկեք, քույրեր, քովեքով,
Միրտ տանք նրան, զվարճացնենք
Եվ մեր սիրուն խաղերով
Նրա ոգին խնդացնենք:
Կհմայեմ ես օդը,
Որ ձայն հանի ներդաշնակ,
Իսկ դուք, եկեք պարեցեք
Ձեր հին պարը բոլորակ,
Որ գիտենա մեծ արքան,
Թե մենք պատվում ենք նրան:

Երաժշտություն: Վհուկները պարում են և անհետանում:

ՄԱԿԲԵԹ

Ո՞ւր են: Գնացի՞ն: Թող այս չար ժամը
Անիծյալ լինի օրացույցի մեջ հար ու հավիտյան:
– Ներս եկեք, Էհե՛յ:

Գալիս է Լենոքսը:

ԼԵՆՈՔՍ

Ի՞նչ է փափագում ձեր մեծությունը:

ՄԱԿԲԵԹ

Չտեսա՞ք արդյոք գուշակ քույրերին:

ԼԵՆՈՔՍ

Ոչ, տեր իմ:

ՄԱԿԲԵԹ

Ինչպե՞ս, ձեր մոտից չանցա՞ն:

ԼԵՆՈՔՍ

Իրավ, ոչ, տեր իմ:

ՄԱԿԲԵԹ

Նեխվի՛ այն օդը, որի վրա նրանք աշտանակում են,
Անիծվի՛ դրանց հավատացողը:
Ձիու վազքի ձայն եկավ ականջիս: Ո՞վ է եկողը:

ԼԵՆՈՔՍ

Մի քանի հոգի եկել են, տեր իմ, և լուր են բերել,
Թե Մակդոֆը փախավ դեպի Անգլիա:

ՄԱԿԲԵԹ

Դեպի Անգլիա՞:

ԼԵՆՈՔՍ

Այո, տեր արքա:

ՄԱԿԲԵԹ

Ժամանակ, դու իմ ահեղ գործերից առաջ ես վազում:

Անհնար բան է հասնել սրաթռիչ մի նպատակի,

Եթե չթռչի գործն էլ զուգընթաց:

Այսօրից սրտիս անդրանիկները

Թող լինեն ձեռքիս անդրանիկները:

Եվ իսկույն կեթ, որպեսզի խոհերս գործով պսակեմ,

Խորհելս ու գործել պետք է մեկ լինեն:

Խուժեմ Մակդուֆի դոյակի վրա և տիրեմ Ֆայֆին,

Ջարդեմ կնոջը և զավակներին

Եվ բոլոր անբախտ այն էակներին, որ նրա ցեղն են:

Բավ է հոխորտալ հիմարի նման:

Պետք է անեմ այս, քանի դիտումս դեռ չի սառնացել:

Կորչեն տեսիլներն:– Ո՞ւր են այդ մարդիկ:

Տար ինձ նրանց մոտ:

Դուրս են գնում:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Ֆայֆ: Մակդուֆի դոյակը:

Գալիս են լեղի Մակդուֆը, իր որդին և Ռոսը:

ԼԵՂԻ ՄԱԿԴՈՒՖ

Բայց ի՞նչ էր արել, որ հարկադրվեր իր երկրից փախչել:

ՌՈՍ

Դուք համբերություն պետք է ունենաք:

ԼԵՂԻ ՄԱԿԴՈՒՖ

Իսկ նա չունեցավ: Նրա փախուստը պարզ խենթություն էր,
Հաճախ մեր վախն է մեզ մատնիչ շինում, ոչ թե մեր գործը:

ՌՈՍ

Բայց դուք չգիտեք, թե վա՞խն էր արդյոք, թե՞ խոհեմություն:

ԼԵՂԻ ՄԱԿԴՈՒՑ

Ի՞նչ, խոհեմությո՞ւն: Լքել իր կնոջն ու մանուկներին,
Իր ապարանքը և ստացվածքը այնպիսի մի տեղ,
Որտեղից ինքը թողնում փախչում է: Նա մեզ չի սիրում,
Նրա մեջ չկա բնական գորով:
Խղճուկ սարեկը, այդ փոքրագույնը թոչունների մեջ,
Երբ իր բույնի մեջ ձագուկներ ունի,
Կռիվ է տալիս բուի հակառակ:
Վախն է դրդողը, ոչ սերը, ոչ էլ խոհեմությունը,
Երբ որ փախուստը ներհակ է ամեն խոհեմության:

ՌՈՍ

Ազնիվ զարմուհիս, չափավոր եղեք:
Ինչ ձեր ամուսնուն վերաբերում է,
Նա ազնիվ, ուշիմ և ճշտատես է
Եվ ժամանակի փոփոխումներին խորապես հմուտ:
Ավելին, քան այս, չեմ կարող ասել:
Բայց սաստիկ անգութ ժամանակներ են,
Երբ դավաճան ենք՝ առանց ինքներս գիտակ յինելու:
Երբ երկյուղալի լուրեր ենք լսում,
Բայց չենք իմանում ինչի՞ց երկնչենք,
Երբ որ ծփում ենք մի փոթորկահույզ գոռ ծովի վրա,
Շարժվում ամեն կողմ: Թույլ տվեք ձեզնից արձակուրդ խնդրեմ,
Երկար չի քաշի, և կգամ նորից:
Իրերն հասնելով վատթար վիճակին կամ վերջ են գտնում,
Կամ ետ են դառնում նախկին դրության:
Միրուն փոքրիկս, աստված պահի քեզ:

ԼԵՂԻ ՄԱԿԴՈՒՑ

Հայր ունի թեև, բայց և անհայր է:

ՌՈՍ

Հիմար կլինեմ, եթե դեռ մնամ,
Այլապես դա ինձ ամոթ կբերի և ձեզ՝ տրտմություն:
Լավ է, որ իսկույն արձակուրդ խնդրեմ:

Դուրս է գնում:

ԼԵՂԻ ՄԱԿԴՈՒՑ

Լսիր, փոքրիկս, հայրդ մեռել է:
Հիմա ի՞նչ կանես և ինչպե՞ս կապրես:

ՈՐԴԻՆ

Թռչունների պես, մայրիկ:

ԼԵՂԻ ՄԱԿԴՈՒՑ

Ճանճերով և ճիճուներով:

ՈՐԴԻՆ

Ինչով որ գտնեմ, ուզում եմ ասել, հենց նրանց նման:

ԼԵՂԻ ՄԱԿԴՈՒՑ

Իմ խեղճ թռչնիկս... և չե՞ս վախենա ցանցից, սոսնձից,
Վարմից, թակարդից:

ՈՐԴԻՆ

Ինչո՞ւ վախենամ, խեղճ թռչունների համար չեն դրանք:
Ինչ կուզես, ասա, հայրս մեռած չէ:

ԼԵՂԻ ՄԱԿԴՈՒՑ

Այո, մեռած է, հիմա ո՞ր տեղից քեզ հայր կգտնես:

ՈՐԴԻՆ

Իսկ դու ո՞րտեղից քեզ այր կգտնես:

ԼԵՂԻ ՄԱԿԴՈՒՑ

Բահ, ես քսան հատ կարող եմ գնել ամեն շուկայից:

ՈՐԴԻՆ

Ո՞րեմն՝ կգնես, որ նորից ծախես:

ԼԵՂԻ ՄԱԿԴՈՒՑ

Հիմա մոլոր խելքդ գործի ես դնում,
Եվ իրա՛վ, խելքդ բավական շատ է տարիքիդ համար:

ՈՐԴԻՆ

Հայրս դավաճա՞ն էր, մայրիկ:

ԼԵՂԻ ՄԱԿԴՈՒՑ

Այո, այդպես էր:

ՈՐԴԻՆ

Դավաճանն ի՞նչ է:

ԼԵՂԻ ՄԱԿԴՈՒՑ

Դավաճանը մի մարդ է, որ երդվում է և սուտ է խոսում:

ՈՐԴԻՆ

Ուրեմն՝ ով որ երդվի և սուտ խոսի, նա դավաճա՞ն է:

ԼԵՂԻ ՄԱԿԴՈՒՑ

Այո, ով որ այդպես անի, նա դավաճան է և արժանի է կախվելու:

ՈՐԴԻՆ

Եվ բոլոր նրանք, որոնք երդվում են և սուտ են խոսում, անպատճառ պետք է կախվե՞ն:

ԼԵՂԻ ՄԱԿԴՈՒՑ

Այո, ամենքը:

ՈՐԴԻՆ

Ո՞վ, պետք է նրանց կախադան հանի:

ԼԵՂԻ ՄԱԿԴՈՒՑ

Ո՞վ, պարկեշտ մարդիկ:

ՈՐԴԻՆ

Ուրեմն՝ երդվողները և սուտ ասողները պետք է շա՛տ հիմար մարդիկ լինեն, որովհետև այնքան երդվողներ և սուտ ասողներ կան աշխարհում, որ կարող են իրենք հաղթել պարկեշտներին և իրենք նրանց կախել:

ԼԵՂԻ ՄԱԿԴՈՒՑ

Աստված պահի քեզ, իսեղճ կապիկս, բայց ասա ատենեմ, ի՞նչ պիտի անես, որ մի հայր գտնես քեզ համար:

ՈՐԴԻՆ

Եթե հայրս մեռած ցիներ, դու լաց կլինեիր, եթե չես լալիս, դա լավ նշան է և ցույց է տալիս, որ շուտով նոր հայր եմ ունենալու:

ԼԵՂԻ ՄԱԿԴՈՒՑ

Խե՛ղճ շաղակրատս, ինչե՛ր ես ասքում:

Գալիս է մի լրաբեր:

ԼՐԱԲԵՐ

Աստված օրհնի ձեզ, գեղեցիկ տիկին, ես ծանոթ չեմ ձեզ, Թեև լավ գիտեմ ձեր բարձր դիրքը:

Կասկածներ անեմ, որ մի մեծ վտանգ մտնենում է ձեզ:

Թե մի պարզ մարդու խորհրդին լսեք, մի՛ կենաք այստեղ,

Այլ փախեք իսկույն ձեր փոքրիկներով:

Գիտեմ, ձեզ այսպես սարսափեցնելը վայրենություն է,

Բայց ձեզ ավելի չարիք հասցնել,

Կլիներ դաժան անողորմություն,
Ինչ որ շատ մոտ է հիմա ձեր անձին: Աստվա՛ծ ձեզ փրկի:
Չեմ համարձակվում ավելի մնալ:

Լրաբերը դուրս է գնում:

ԼԵՂԻ ՄԱԿԴՈՒՑ

Վա՛յ ինձ, ո՞ւր փախչեմ: Ես բան չեմ արել,
Բայց պետք է հիշեմ, որ գտնվում եմ այս հող աշխարհում,
Ուր չարիք գործելն ստեպ գովված է, իսկ բարիք գործե
Մերթ համարված է մի վտանգավոր խելագարություն:
Էլ ինչո՞ւ, ավա՛ղ, դիմեմ կանացի այս չքմեղանքին,
Ասել թե ոչինչ վատ բան չեմ արել:

Ներս են մանում մարդասպանները:

Այս ի՞նչ դեմքեր են:

Ա. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Ամուսինդ ո՞ւր է:

ԼԵՂԻ ՄԱԿԴՈՒՑ

Հուսամ ոչ մի տեղ՝ այնքան անիծյալ,
Որ քեզ պեսները գտնել կարենան:

Ա. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Դավաճա՞ն է նա:

ՈՐԴԻՆ

Դու սուտ ես խոսում, դու բրդոտականջ սրիկա:

Ա. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Ի՞նչ, ձո՛ւ:

Դաշույնով սպանում է:

Դավաճանի ձագ:

ՈՐԴԻՆ

Սպանեց ինձ, մա՛յր: Փախիր, խնդրում եմ:

*Մեռնում է, լեղի Մակդուֆը աղաղակում է. «Մարդասպանություն՝ ինձ»,
մարդասպանները վազում են ետևից:*

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Անզլիա: Թագավորի պալատի առաջ:

Գալիս Են Մակդուֆը և Մալկումը:

ՄԱԼԿՈՍ

Գնանք ամայի մի ստվեր գտնենք և արաասվելով

Դատարկենք այնտեղ մեր տխուր կուրծքը:

ՄԱԿՐՈՒՖ

Ոչ, այլ պինդ բռնենք մահացու սուրը և իբր ազնիվ մարդ
Թող պաշտպան կանգնենք մեր գետին ընկած ծննդավայրին:

Ամեն մի նոր օր նոր այրի կանայք գոռում են ցավից,

Նոր որբեր լալիս և նոր կսկիծներ

Այնպես զարկում են երկնքի դեմքին, որ թնդում է նա,

Որպես թե ինքն էլ Սկովտիայի հետ ցավակից լիներ

Եվ նույն վշտի վանկն արձակեր ինքն էլ:

ՄԱԼԿՈՍ

Ինչ որ հավատամ, ես պիտի ողբամ,

Եվ ինչ որ լսեմ, պիտի հավատամ,

Եվ ինչ որ ուղղել կարենամ, կանեմ,

Երբ որ առիթը ձեռնտու գտնեմ,

Ինչ որ պատմեցիք, այդպես է գուցե: Այն բռնակալը,

Որի անունը այսօր մեր լեզուն խոցոտացնում է,

Երբեմն ամենքին պարկեշտ էր թվում, սիրելի էր ձեզ,

Եվ մինչև այսօր նա ձեզ չի դիպել:
Ես դեռահաս եմ, բայց ինձ զոհելով
Գուցե նրանից շնորհ ստանաք:
Խելացության է զոհել մի անգոր, խեղճ, անմեղ գառնուկ
Մի չար աստծո կատաղությունը հանգստացնելու:

ՄԱԿՐՈՒՖ

Դավաճան չեմ ես:

ՄԱԼԿՈՍ

Դուք ոչ, Մակբեթն է:
Մի առաքինի և ազնիվ բնության կարող է շեղվել
Թագավորական հրամանի ներքո:
Բայց պետք է ձեզնից ես ներում խնդրեմ,
Ինչ որ կաք, այն եք, իմ կարծիքը ձեզ չի կարող փոխել
Եվ հրեշաակները միշտ պայծառ են,
Թեպետ և ընկավ պայծառագույնը,
Թեկուզ աշխարհի բոլոր պիղծերը սրբադեմ լինեն,
Սուրբը կմնա միևնույն դեմքով:

ՄԱԿՐՈՒՖ

Կորա՛ն հույսերս:

ՄԱԼԿՈՍ

Գուցե հենց այնտեղ, ուր որ ես գտա իմ կասկածները:
Ինչո՞ւ լքեցիք այնպես հապճեպով կին ու երեխա,
Միրո թանկագին այդ դրդիչները և պիրկ կապերը,
Առանց հրաժեշտի: Բայց աղաչում եմ,
Կասկածներիս մեջ մի տեսեք բնավ անարգանք ձեր դեմ,
Այլ սոսկ սեփական զգուշությունս,
Եվ դուք կարող եք ուղիղ մարդ լինել, ինչ էլ ես կարծեմ:

ՄԱԿՐՈՒՖ

Թափիր արյունդ, թափիր, խեղճ երկիր:
Հզոր բռնություն, հիմք ձգիր հաստատ,
Ազնվությունը չի համարձակվում քեզ դիմագրավել:
Ցույց տուր բացահայտ չարություններդ,
Տիտղոսդ հիմա վավերացված է: Մնաս բարով, տեր:
Ես չեի ուզի լինել այն սրիկան, որ դուք կարծում եք,
Թեկուզ այն բոլոր տարածությունը,
Որ բռնակալի ճիրանի մեջն է, ինձ պարզև տային,
Ճոխ Արևելքն էլ իբրև հավելված:

ՄԱԼԿՈՄ

Մի՛ վիրավորվեք,
Ես այդ չասացի իբրև բացարձակ կասկած ձեզ վրա:
Գիտեմ, մեր երկիրն անարգ լծի տակ հոգի է տալիս,
Արցունք է թափում, արյուն է հեղում,
Եվ ամեն նոր օր նոր վերք է բարդում վերքերի վրա:
Բայց և կարծում եմ, որ կլինեն ձեռքեր,
Որ կբարձրանան իբրև ջատագով իմ իրավունքի:
Եվ նույնիսկ այստեղ, այս Անգլիայի շնորհալից արքան
Հազարավորներ պատրաստ է սալ ինձ: Բայց, այսուհանդերձ,
Երբ բռնակալի գլուխը կոխոտած
Կամ սրիս ծայրին ցցած լինեմ, այն իմ հայրենիքը
Դեռ ավելի շատ մոլություններից պիտի տանջվի,
Ավելի տարբեր եղանակներով պիտի տառապի
Հաջորդի ձեռքից:

ՄԱԿՆՈՒՖ

Ո՞վ կլինի այդ:

ՄԱԼԿՈՄ

Ես ինձ եմ ասում:
Իմ մեջ տեսնում եմ մոլությունների բոլոր տեսակներն
Այնպես պատվաստված, որ երբ բողբոջեն,

Սև Մակբեթն ինձ մոտ ձյունի պես մաքուր պիտի երևա,
Եվ խեղճ երկիրը նրան մի գառնուկ պիտի համարի,
Համեմատելով իմ անձայրածիր չարաթյուններին:

ՄԱԿՐՈՒՖ

Ոչ իսկ ահռելի դժոխքի բոլոր լեգեոններից
Կարող է դուրս գալ չարություններով այնքան ժանտ մի դև,
Որ կարողանա Մակբեթից անցնել:

ՄԱԼԿՈՍ

Խոստովանում եմ, որ նա արյունոտուշտ, պագշոտ, ագահ է,
Խարդախ, խաբեբա, ցասկոտ, չարամիտ,
Որ բաժին ունի ամեն մի մեղքից, որ անուն ունի:
Բայց անհատակ է, այո, անհատակ իմ վավաշանքը:
Ձեր կանայք, դստերք, մայր տիկիհները, կույս աղջիկները
Չեն կարող լցնել տոփանքիս հորը, իմ ցանկությունը
Ոտնակոխ կանի ողջախոհության ամեն խոչընդոտ,
Որ իմ կամքի դեմ հակառակ կանգնի: Լավ է Մակբեթը,
Քան թե այդպիսին իբրև թագավոր:

ՄԱԿՐՈՒՖ

Անչափ տոփանքը, այո՛, բնության մի բռնությունն է,
Եվ շատ անգամներ վաղահասորեն թափուր է թողել
Երջանիկ գահը, շատ թագավորներ կործանել է նա:
Բայց մի՛ վախենաք ազատ վայելել այն, ինչ որ ձերն է:
Ձեր հաճույքներին կարող եք առատ հագուրդ ընծայել
Եվ այնուհանդերձ սառնարյուն թվալ
Եվ փոշի փչել աշխարհի աչքին:
Որքա՛ն շատ ունեք հոժար տիկիհներ:
Եվ դուք չեք այնպիսի մի անգղ ունենալ ձեր մեջ,
Որ կուլ տա այնքան հակամետներին,
Որոնք պատրաստ անձնտտար լինել մեծության կամքին,
Երբ որ նրա մեջ հակում նկատեն:

ՄԱԼԿՈՄ

Դրա հետ մեկտեղ իմ չարախմոր խառնվածքի մեջ
Այնպիսի անկուշտ ազահություն կա, որ թե իշխեի,
Ազնվականներին կկոտորեի
Նրանց հողերին տիրելու համար,
Մեկի գոհարին աչք կտնկեի և մյուսի տանը:
Ամեն մի նոր բան, որ ձեռք բերեի, համեմ կդառնար Քաղցս ավելի
գրգռելու համար:
Ամեն մի բարի, անկեղծ մարդու դեմ
Անարդար վեճեր կդարբնեի,
Ջարդելով նրանց՝ միայն ինչքերին տիրելու համար:

ՄԱԿՂՈՒՖ

Այդ ազահությունն ավելի խոր է,
Ավելի քանդիչ արմատներ ունի,
Քան ամառնաբույս շվայտությունը,
Դա է այն սուրբ, որ կոտորել է մեր արքաներին:
Բայց մի՛ վախենաք, Սկովտիան այնքան ճոխ ու հարուստ է,
Որ ձեր սեփական ստացվածքներով կլիացնի ձեզ:
Դրանք բոլորն էլ հանդուրժելի են,
Երբ զուգակշիռ հատկություններ կան:

ՄԱԼԿՈՄ

Ես մեկն էլ չունեմ: Արքայավայել հատկություններից,
Ինչպես գթություն, ճշմարտության սեր, չափավորություն,
Անհողդողդություն, բարեսրտություն, հարատևություն,
Հեզամտություն, բարեպաշտություն, համբերող ոգի,
Քաջասրտություն, կամք, արդարություն,
Դրանցից իմ մեջ նշույլ իսկ չկա,
Այլ հարուստ եմ ես ամեն մոլության ամեն ճյուղերով,
Որ գործ եմ դնում պես-պես ձևերով: Թե կարենայի,
Միաբանության քաղցրանուշ կաթը դժոխք կածեի,

Տիեզերական խաղաղությունը կվրդովեի,
Ամեն միություն աշխարհի վրա կկործանեի:

ՄԱԿՐՈՒՖ

Օ՛հ, Սկո՛վտիա, Սկո՛վտիա:

ՄԱԼԿՈՄ

Եթե արժան է այդպիսի մեկը թագավորելու, Խոսի՛ր, այնպես եմ, ինչպես
ասացի:

ՄԱԿՐՈՒՖ

Թագափրեւո՞ւ, ո՛չ իսկ ապրելու:

– Օ՛հ, ազգ տարաբախտ, ճնշված անտիտոդոս մի բռնակալի

Արյունաթաթախ գավազանի տակ,

Ե՞րբ պիտի նորից տեսնես քո նախկին առողջ օրերը,

Քանի որ գահիդ հարազատ զարմը

Ինքն իր սեփական բանադրանքի տակ կանգնած է նզովված

Եվ հայիտյում է ինքն իր ծագումը:

Վեհափառ հայրդ սուրբ թագավոր էր: Թագուհի մայրդ

Ավելի հաճախ ծնկի վրա էր, քան թե ոտքերի,

Մեռնում էր կյանքի ամեն մի օրը: Դե՛հ, աստված քեզ հե՛տ:

Այդ չարիքները, որ կուտակում ես ինքդ քեզ վրա,

Հենց դրանք էին, որ Սկովտիայից աքսորեցին ինձ:

– Ո՛վ կուրծք, քո հույսը վերջ գտավ այստեղ:

ՄԱԼԿՈՄ

Մակդո՛ֆ, այդ ազնիվ սրտմտությունդ, ուղղության զավակ,

Վանեց իմ հոգու սև կասկածները

Եվ հաշտեցրեց ինձ քո անկեղծության և ուղղության հետ:

Դիվային Մակբեթն այդպիսի ճարպիկ հրապուրանքներով

Հաճախ է փորձել ինձ ճանկը ձգել

Բայց միշտ իմ համեստ խոհեմությունը

Խիստ դյուրահավատ աճապարանքից կասեցրել է ինձ:

Բայց բարձրալն աստված թող վկա լինի քո և իմ միջև,
Ես այս բոլորից ենթարկում եմ ինձ քո վարչությանը,
Եվ ետ եմ կոչում ինձ վրա բարդած մեղադրանքներս:
Ես ուրանում եմ այն բոլոր ախտերն ու արատները,
Որոնցով ինքս ինձ ամբաստանեցի,
Նրանք օտար են իմ բնությանը:
Դեռ կին չգիտեմ, երբեք չեմ դրժել արած երդումս,
Հազիվ թե ինքս սեփական ինչքս ցանկացած լինեմ, Երբեք չեմ կոտրվ իմ
արած ուխտը,
Սատանային էլ ես չեի մատնի իր ընկերոջը,
Ճշմարտությունը նույնչափ քաղցր է ինձ, որչափ որ կյանքս:
Առաջին սուտը, որ ես ասել եմ, հենց այս էր, իմ դեմ:
Ինչ որ կամ, իրոք, պատկանում է քեզ և հայրենիքիս,
Դեպի ուր արդեն, քո գալուց առաջ,
Ծերուկ Սիվարդը, տասն հազար հոգի քաջ ռազմիկներով, Լավ կազմ ու
պատրաստ, մեկնելու վրա էր:
Այժմ միասին կերթանք ամենքս:
Երանի մեր բախտն այնչափ լավ լինի,
Որչափ մեր դատը արդարացի է: Բայց ինչո՞ւ ես լուռ:

ՄԱԿԴՈՒՖ

Դժվար է հանկարծ այդքան անախորժ և ախորժ բաներ
Հաշտեցնել իրար:

Գալիս է մի բժիշկ:

Կխոսենք հետո:

– Խնդրեմ, ինձ ասեք, արքան գալի՞ս է:

ԲԺԻՇԿ

Այո, ազնիվ տեր,

Մի խումբ թշվառներ դուրսն սպասում են, որ նրանց բուժի:

Այդ մարդկանց ախտը դերն է հանել արվեստի ճիգը:

Բայց նրա ձեռքին աստված այնպիսի շնորհ է ավել,
Որ բոյոր նրանք, որոնց դիպչում է, իսկույն բուժվում են:

ՄԱԼԿՈՄ

Շնորհակալ եմ:

Բժիշկը դուրս է գնում:

ՄԱԿՐՈՒՖ

Ինչպիսի՞ ախտ է սրա արածը:

ՄԱԼԿՈՄ

Ասում են «վատ ախտ»: Այս բարի արքան
Հրաշագործության մեծ շնորհք ունի, որին շատ անգամ
Այն օրից ի վեր, որ Անգլիա եմ, ականատես եմ,
Թե նա ինչպես է աստծուց խնդրում, այդ ինքը գիտե,
Բայց տարօրինակ ախտաժետ մարդկանց,
Լի ուռուցքներով և պալարներով, խիստ քստմնելի,
Վիրաբուծության անհուսությունը բժշկում է նա՝
Վզից կախելով մի ոսկե դրոշմ
Եվ սուրբ աղոթքներ արտասանելով: Եվ դեռ ասում են,
Թե նա կթողնի այս բուժիչ շնորհն իր հաջորդներին:
Բացի եզակի այս գորությանից,
Նա ունի նաև մարգարեական երկնատուր շնորհք:
Եվ դեռ շատ ձիրքեր, որոնք խմբված են իր գահի շարշը,
Հրատարակում են, թե օրհնյալ է նա:

ՄԱԿՐՈՒՖ

Այս ո՞վ է գալիս:

ՄԱԼԿՈՄ

Մի հայրենակից, բայց չեմ ճանաչում:

Գալիս է Ոռսը:

ՄԱԿԴՈՒՖ

Միրելի զարմիկ, գալուստդ բարի:

ՄԱԼԿՈՄ

Բարերա՛ր աստված, հեռացրու շուտով այն պատճառները,
Որ մեզ իրարուց օտարացնում են:

ՌՈՍ

Ամե՛ն, տե՛ր աստված:

ՄԱԿԴՈՒՖ

Արդյոք Սկսվաիան նո՞ւյն վիճակումն է:

ՌՈՍ

Ավա՛ղ, խեղճ երկիր, որ սարսափում է ինքն իրեն նայել,
Եվ որ չի կարող մեր մայրը կոչվել, այլ գերեզմանը,
Ուր ժպիտ չկա ոչ ոքի դեմքին,
Եթե ոչ նրա, որ ոչինչ գիտե,
Ուր ճիչ ու հառաչ, ողբ ու վայնասուն պատռում են օդը,
Սակայն անցնում են աննկատելի,
Ուր բուռն կսկիծն առօրյա վիշտ է,
Ուր, երբ հնչում է մեռելազանգը,
Ոչ ոք չի հարցնում, թե ո՛ւմ համար է,
Ուր բարի մարդկանց կյանքը խամրում է,
Նախքան ծաղկունքը իրենց գլխարկի,
Մեռնելով՝ նախքան հիվանդանային:

ՄԱԿԴՈՒՖ

Նկարագրություն, խիստ ճարտարաբերան, սակայն ճշմարիտ:

ՄԱԼԿՈՄ

Ո՞րն է նոր վիշտը:

ՌՈՍ

Մի ժամ առաջվա վիշտը ծաղրում է իրեն պատմողին,
Ամեն մի բռպե նոր վիշտ է ծնում:

ՄԱԿԴՈՒՖ

Ինչպե՞ս է կինս:

ՌՈՍ

Է՛հ, այնպես, լավ է:

ՄԱԿԴՈՒՖ

Եվ գավակնե՞րս:

ՌՈՍ

Նրանք էլ լավ են:

ՄԱԿԴՈՒՖ

Իսկ բռնակալը չխռովե՞ց նրանց խաղաղությունը:

ՌՈՍ

Ոչ, խաղաղ էին, երբ ես հեռացա:

ՄԱԿԴՈՒՖ

Ժլատ մի՛ լինիր քո խոսքերի մեջ, ի՞նչ է վիճակը:

ՌՈՍ

Երբ գալիս էի, բերելով լուրեր, խի՛ստ ծանր ինձ համար,
Շշուկներ կային, թե շատ քաջ մարդիկ ոտքի են կանգնել,
Ինչ որ ավելի հավատացրեց ինձ, այն է մանավանդ,
Որ բռնակալի գորությունն ամբողջ ոտքի վրա տեսա:
Ժամանակ է այժմ օգնության գնալու:
Ձեր մի ակնարկը գորքեր կոտեղծի Սկովտիայի մեջ,
Մեր կանանց անգամ մարտնչել կտա
Իրենց սուկալի անձկություններին վերջ տալու համար:

ՄԱԼԿՈՄ

Թող իրախույս առնեն, գնում ենք այնտեղ:
Բարի Անգլիան արի Սիվարդին մեզ փոխ է տվել
Տասն հազար զորքով, ավելի վարձված և սրտոտ զինվոր
Չկա քրիստոնյա ամբողջ աշխարհում:

ՌՈՍ

Ա՛խ, կարենայի ավետիքի տեղ ավետիք տալ ձեզ,
Բայց իմ բառերը անապատ օդում պետք է արձակվեն,
Որ լսելիքը չբռնի նրանց:

ՄԱԿՂՈՒՖ

Ո՞ւմ են պատկանում:
Ընդհանուր դատի՞ն, թե՞ հատուկ վիշտ են՝
Մի անհատական կրծքի վիճակված:

ՌՈՍ

Չկա մի հոգի,
Որ ազնիվ լինի և այդ կսկիծից բաժին չունենա,
Թեև մեծ մասը քեզ է պատկանում:

ՄԱԿՂՈՒՖ

Եթե իմս է,
Մի պահիր ինձնից, այլ հանձնիր իսկույն:

ՌՈՍ

Թող ականջներդ չանիծեն լեզուս մինչև հավիտյան,
Որ նրանց այնպես անգութ բառերով խոշտանգելու է,
Որոնց նմանը չեն լսել երբե՞ք:

ՄԱԿՂՈՒՖ

Ո՛ւֆ, գուշակում եմ:

ՌՈՍ

Հանկարծ խուժել են դոյակիդ վրա

Եվ վայրագորեն մորթել են կնոջդ ու մանուկներիդ:

Պատմեի թե ինչպե՛ս, կլիներ դնել այն եղնիկների նախճիրքի վրա նաև քո մահը:

ՄԱԼԿՈՄ

Ողորմա՛ծ երկինք: Վա՛հ, մարդ աստծո,

Մի՛ քաշիր գլխարկդ աչքերիդ վրա, բառեր տուր ցավիդ,

Անխոս կսկիծդ խիստ ուռած սրտին գաղտնի փսփսում,

Դրդում է պայթել:

ՄԱԿԴՈՒՖ

Զավակների՞ս էլ:

ՌՈՍ

Կին, մանուկ, ծառա, ով որ կար-չկար:

ՄԱԿԴՈՒՖ

Եվ ես այնտեղից բացակա՞ լինեմ, կի՞նս էլ սպանվեց...

ՌՈՍ

Ասացի:

ՄԱԼԿՈՄ

Միրտ առ, թող մեր մեծ վրեժը մեզ դարման դարձնենք

Այս անհուն ցավից մեզ բժշկելու:

ՄԱԿԴՈՒՖ

Զավակներ չունի՛:

– Բոլո՞ր սիրուններս, բոլո՞րն, ասացիր:– Օ՛հ, դժոխքի անգղ,

Բոլո՞րը, բոլոր սիրուն ճուաերս և մա՞յրն էլ հետը,

Մեկ ժանտ հարվածով:

ՄԱԼԿՈՄ

Տոկա, ինչպես մարդ:

ՄԱԿԴՈՒՖ

Այո, կտոկամ, բայց պետք է նաև զգամ ինչպես մարդ:

Ինչպե՞ս չհիշեմ, թե ապրում էին այն էակները,

Որ ամեն բանից թանկ էին սրտիս:

Եվ աստված տեսավ և չպաշտպանեց:

Մեղավո՛ր Մակդուֆ, քո պատճառով է, որ կոտորվեցին:

Ա՛խ, ես ոչի՛նչս: Ոչ նրանց, այլ ի՛մ մեղքի համար է,

Որ ամենաժանտ սպանությունը խուժեց նրանց վրա:

Երկինքը նրանց հանգիստ պարգևի:

ՄԱԼԿՈՍ

Թող դա քո սրի հեսանը լինի

Եվ քո մորմոքը զայրույթի փոխի:

Թող դա քո սիրտը չբթացնի, այլ կատաղեցնի:

ՄԱԿԴՈՒՖ

Օ՛հ, կարող էի աչքով կին լինել և լեզվով հոխորտ,

Բայց, գթած երկինք, կարճիր այսուհետ ամեն հապաղում,

Բե՛ր Սկովտիայի այդ դևին և ինձ ճակատ առ ճակատ,

Մոտ բեր իմ սրի երկարության չափ,

Եվ եթե խույս տա, ապա երկինքն էլ թող ների նրան:

ՄԱԼԿՈՍ

Դա է առնացին: Եկեք, թող գնանք թագավորի մոտ,

Ջորքը պատրաստ է, ոչինչ պակաս չէ, բացի հրաժեշտից:

Մակբեթ պատրաստ է ցնցվելու համար,

Եվ արդեն վերին գորությունները

Իրենց գործիքներն առաջ են մղում: Սփոփեցեք ձեզ,

Չկա մի գիշեր, որչափ էլ երկար, որ չլուսանա:

Գնում են:

ԱՐԱՐՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Դունսիներն են: Մի սենյակ դռնակում:

Գալիս են մի բժիշկ և մի պալատական տիկին:

ԲԺԻՇԿ

Երկու գիշեր է, որ ձեզ հետ հսկում եմ, բայց ձեր ասածը չի ստուգվում:
Ե՞րբ է վերջին անգամ ման եկել:

ՏԻԿԻՆ

Այն օրվանից, որ նորին վեհափառությունը կռվի է գնացել, աչքովս տեսել եմ, ինչպես թագուհին անկողնից ելնում է, գիշերազգեստը հագնում, գրասեղանը բաց է անում, թուղթ է վերցնում, ծալում է, վրան մի բան գրում, կարդում, հետո կնքելով նորից դառնամ է իր անկողինը և ամբողջ ժամանակ խոր քնի մեջ է:

ԲԺԻՇԿ

Դա ցույց է տալիս մի մեծ հոգեկան խանգարում, որով թե քնի բարիքն է վայելում և թե արթնության գործեր կատարում: Այս քնային հուզմունքի մեջ, բացի շրջելուց և ուրիշ շարժումներից լսե՞լ եք երբևիցե, որ մի բան էլ ասած լինի:

ՏԻԿԻՆ

Բաներ, պարոն, որ չեմ ուզում կրկնել:

ԲԺԻՇԿ

Բայց ինձ կարող եք, և շատ հարմար է, որ ասեք:

ՏԻԿԻՆ

Ոչ ձեզ կարող եմ ասել, ոչ էլ որևէ մարդու, քանի որ վկա չունեմ ասածս հաստատեր:

Գալիս է լեղի Մակբեթը՝ ձեռքին մի ճրագ:

Նայեցեք, ահա գալիս է, ճիշտ իր սովորական ձևով, և, հավատացեք, խոր քնի մեջ է: Նայեցեք, անշարժ կանգնեցեք:

ԲԺԻՇԿ

Ո՞րտեղից ձեռք ձգեց այս ճրագը:

ՏԻԿԻՆ

Դրված էր մոտը: Միշտ իր կողքին ճրագ կա դրված, ինքն է պատվիրել:

ԲԺԻՇԿ

Տեսնո՞ւմ եք, աչքերը բաց են:

ՏԻԿԻՆ

Այո, բայց տեսողությունը գոց է:

ԲԺԻՇԿ

Ի՞նչ է անում հիմա: Տեսեք, ինչպես է ձեռքերը տրորում:

ՏԻԿԻՆ

Նրա սովորությունն է այդ, որպես թե ձեռք է լվանում: Շատ անգամ տեսել եմ, որ մի քառորդ ժամ շարունակ այդպես է արել:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Դեռ մի բիծ կա:

ԲԺԻՇԿ

Ականջ դրեք, խոսում է: Ասածները գրի կառնեմ, որ ուժեղ կերպով հիշողությանս մեջ տպավորվեն:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Չքվիր, անիծյա՛լ բիծ, չքվիր, ասում եմ: Մեկ... երկու... Դե՞հ, ժամանակն է... Դժոխքը մուրճն է: Ամո՛թ, տեր իմ, ամո՛թ... զինվոր և վա՛խ... Ինչո՞ւ վախենանք, թե ո՛վ կգիտենա, քանի որ ոչ ոք չի կարող հաշիվ պահանջել

մեր կարողությունից: Բայց որի՞ մտքով կանցնեք, թե այն ծեր մարդը
այնքան արյուն կունենար երակների մեջ:

ԲԺԻՇԿ

Լսեցի՞ք:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Տայֆի թենը կին ուներ, ո՞ւր է նա հիմա... վա՛հ, այս ձեռքերը երբեք
չպիտի՞ մաքրվեն:– Բավական է, տեր իմ, բավական է, ամեն բան
փչացնում ես այդ սարսուժովդ:

ԲԺԻՇԿ

Է՛հ, է՛հ, դու բաներ գիտես, որ չպետք է գիտենայիր:

ՏԻԿԻՆ

Բաներ է ասել, որ չպետք է ասեր, հաստատ գիտեմ, բայց երկինքն է
գիտակ, թե նա ինչե՛ր գիտե:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Արյան հոտը դեռ գալիս է: Արաբիայի բոլոր անուշ բույրերը չե՞ն կարող
երբեք այս վտքրիկ ձեռքը հոտավետ դարձնել: Ա՛խ, ա՛խ, ա՛խ...

ԲԺԻՇԿ

Ինչպիսի՛ հառաչանք: Շա՛տ ծանր բեռ ունի իր սրտի վրա:

ՏԻԿԻՆ

Չէի ուզենա այդպիսի մի սիրտ ունենալ կրծքիս մեջ, թեկուզ այն մարմնի
բոլոր փառքերը ինձ պարզև տային:

ԲԺԻՇԿ

Լավ, լավ...

ՏԻԿԻՆ

Տա՛ր աստված, որ լավ լինեք:

ԲԺԻՇԿ

Այս հիվանդությունը բարձր է իմ արհեստից, թեև շատ եմ տեսել հիվանդներ, որոնք շրջել են քնի մեջ, բայց նրանք սրբությամբ մեռել են իրենց անկողնում:

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Լվա ձեռքերդ, գիշերազգեստդ հազիր: Այդպես գունաթափ մի երևա: Նորից ասում եմ քեզ. Բանքոն թաղված է, գերեզմանից հո չի՞ կարող դուրս գալ:

ԲԺԻՇԿ

Այդպե՞ս, հա՞...

ԼԵՂԻ ՄԱԿԲԵԹ

Եկ անկողին: Մեծ դուռը զարկում են: Ե՛կ, ե՛կ, ե՛կ, ե՛կ: Ձեռքդ ինձ տուր: Եղածը չի կտրելի ետ տանել: Ե՛կ անկողին, ե՛կ, ե՛կ:

Գնում է:

ԲԺԻՇԿ

Հիմա անկողի՞ն է մտնում:

ՏԻԿԻՆ

Ուղղակի:

ԲԺԻՇԿ

Վատ շշուկներ կան. հրեշավոր գործեր ծնունդ են տալիս Նույնչափ հրեշավոր խանգարումների:

Վարակված հոգին խուլ բարձերին է գաղտնիք ավանդում, Քահանա է պետք սրան, ոչ բժիշկ:

Աստվա՛ծ իմ, աստված, ների՛ր բոլորիս: Հսկեցե՛ք վրան,

Հեռացրե՛ք մոտից ինչ որ կարող է նրան վնասել:

Եվ միշտ ձեր աչքը վրան պահեցե՛ք: Դեհ, գիշեր բարի,

Դա հոգիս հուզեց և տեսողությունս ահաբեկ արեց:
Շատ բան եմ խորհում, ասել չեմ կարող:

ՏԻԿԻՆ

Դե՛հ, բարի գիշեր, հարգելի բժիշկ:

Գնում եմ:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Դաշտի մեջ Դունսինեյնի շրջակայքում:

*Գալիս եմ թմբուկներով և դրոշներով՝ Մենտեթը, Կաթնեսը, Անգուսը,
Լենոքսը, և զինվորներ:*

ՄԵՆՏԵԹ

Անգլիական զորքն առաջանում է
Մալկոմի և իր Միվարդ մորեղբոր
Եվ քաջ Մակդուֆի առաջնորդությամբ:
Վրեժը վառվում է նրանց սրտի մեջ,
Նրանց մեծ դատը ճգնավորին իսկ կորդեր զենքի
Եվ անագորույն արյունահեղության:

ԱՆԳՈՒՍ

Կարծեմ Բիրնամի անտառի առաջ պիտի հանդիպենք,
Նրանք այն կողմից առաջանում են:

ԿԱԹՆԵՍ

Արդյո՞ք Դոնալդեյն իր եղբոր հետ է:

ԼԵՆՈՔՍ

Հաստատ գիտեմ, տեր, որ նրա հետ չէ:
Ես ցուցակն ունեմ այն բոլոր ազնիվ պատանիների,
Նրանց թվում կան Միվարդի որդին

Եվ շատ փափկերես երիտասարդներ,
Որ այսօր իրենց տղամարդկության փորձը պիտի տան:

ՄԵՆԹԵՏ

Իսկ բռնակալը ինչո՞վ է զբաղված:

ԿԱԹՆԵՍ

Մեծ Դունսինեյնը ամրացնում է նա:

Ոմանք ասում են՝ իսելագարվել է,

Իսկ ուրիշները, որ այնքան սաստիկ չեն ատում նրան,

Անվանում են այդ քաջության մոլուցք: Ճիշտն այն է, որ նա անգոր է այլևս

իր խարխուլ դատը

Տիրապետության գոտիով պրկել:

ԱՆԳՈՒՍ

Հիմա է գոում, թե ինչպես թաքուն իր ոճիրները

Ձեռքիդ են փակչում: Այժմ ամեն բոպե նոր ապստամբներ

Զարկում են նրա խարդախությունը նրա երեսին:

Եվ նրանք, որոնց հրամայում է նա,

Շարժվում են միայն հրամանի ներքո, ոչ սիրո համար:

Հիմա է գգում, որ իր տիտղոսը թույլ կախ է վրան,

Ինչպես հսկայի մի մեծ պատմուճան գաճաճ գոգի վրա:

ՄԵՆՏԵԹ

Ո՞վ կմեղադրի. նրա քայքայված զգայարանքը,

Որ այնպես խրտնում և վեր են թռչում,

Երբ ամեն մի բան, որ կա նրա մեջ,

Դատապարտում է ինքնիրեն՝ այնտեղ լինելու համար:

ԿԱԹՆԵՍ

Դե՛հ, քայլենք առաջ, հպատակության հայտնենք, ում պարտ ենք:

Դիմենք բժշկին այս հիվանդ երկրի

Եվ հայրենիքի բուժումի համար
Թափենք նրա հետ մեր երակների վերջին կաթիլը:

ԼԵՆՈՔՍ

Կամ որքան պետք է վեհապետական վարդը ցողելու
Եվ մոլի խոտը խողդելու համար:
Դե՛հ, դեպի Բիրնամ ուղղենք մեր երթը:

Դուրս են գնում զինվորական քայլով:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Դունսինեյն: Մի սրահ դոյակում:

Գալիս են Մակբեթը, մի բժիշկ և ծառաներ:

ՄԱԿԲԵԹ

Էլ լուր մի՛ բերեք: Թող փախչեն բոլորը:
Մինչև որ չգա Բիրնամի անտառն այստեղ Դունսինեյն,
Ինձ համար վախից վարակում չկա:
Մի՛ թե կինարմատ չի ծնել նրան: Այն ոգիները,
Որոնք գիտակ են բոլոր մարդկային լինելիքներին,
Ինձ համար այսպես հայտարարեցին.
«Մի՛ վախիր, Մակբեթ, երբեք ոչ մի մարդ, կնոջից ծնված,
Չի նվաճի քեզ»: Փախեք, ուրեմն, կեղծավոր թեներ,
Եվ խառնվեցեք այն անգլիացի զեխասերներին:
Այն ոգին, որ ինձ ղեկավարում է,
Եվ այնպիսի սիրտ, որ կրծքումս ունեմ,
Ոչ տարակույսից սասանվել գիտեն, ոչ վախից սարսել:

Գալիս է մի ծառա:

Դեն անիծի քեզ, կաթնադեմ լակոտ:
Որտեղի՞ց առար սագի նայվածքդ:

ԾԱՌԱ

Տեր իմ, տասն հազար...

ՄԱԿԲԵԹ

Մազե՞ր, սրիկա՛:

ԾԱՌԱ

Զինվորներ, տեր իմ:

ՄԱԿԲԵԹ

Գնա, ծածկիր երեսդ և կարմիր քսիր երկյուղիդ վրա:

Շուշանյա՛րդ լակոտ: Ի՞նչ զինվոր, քոտոտ:

Մահն առնի հոգիդ, այդ քաթան թշերդ ահ են ներշնչում:

Ի՞նչ գորք, թաներե՛ս:

ԾԱՌԱ

Անզլիո գորքը, ողորմած տեր իմ:

ՄԱԿԲԵԹ

Դուրս տար այդ դեմքդ:

Ծառան դուրս է գնում:

Սեյտո՛ն, հե՛յ, Սեյտո՛ն...

Միրոս խառնում է, երբ որ տեսնում եմ... Սեյտո՛ն, ասում եմ...

Այս հարձակումը կամ ինձ հավիտյան բախտավոր կանի,

Կամ իսկույն ևեթ ինձ կկործանի:

Բավական երկար ապրել եմ արդեն. կյանքիս ընթացքը

Եկել հասել է դեղնած տերևի և թառամության:

Եվ ամեն ինչ, որ պետք է ծերության ուղեկից լիներ,

Ինչպես սեր, պատիվ, հնազանդություն, շատ բարեկամներ,

Չպիտի հուսամ: Դրանց տեղ՝ անեծք, ոչ բարձր, այլ խոր,

Բերանի պատիվ, շունչ, տր խեղճ սիրտը պիտի զլանար,

Եթե հանդգներ:

Գալիս է Սեյտոնը:

ՄԵՅՏՈՆ

Ի՞նչ է հրամայում ձեր մեծությունը:

ՄԱԿԲԵԹ

Ի՞նչ նոր լուր, Սէյտոն:

ՄԵՅՏՈՆ

Այն բոլորն, ինչ որ զեկուցել էին. ստուգվեց, տեր իմ:

ՄԱԿԲԵԹ

Կկոպեմ մինչև միսս հոշոսովի իմ ոկորներից:

Տուր ինձ զրահս:

ՄԵՅՏՈՆ

Դեռ կարիք չկա:

ՄԱԿԲԵԹ

Ուզում եմ հագնել: Նոր ձիավորներ ուղարկիր դաշտը,

Շրջակաները լավ խուզարկել տուր:

Ով վախից խոսի, կախել տուր նրան: Բեր ինձ զրահս,

Հիվանդն ինչպե՞ս է, բժիշկ:

ԲԺԻՇԿ

Տեր արքա, ոչ այնքան հիվանդ,

Որքան չարչարված հոճ առ հոճ հրոսող իր ցնորքներից,

Որոնք զրկում են նրան հանգստից:

ՄԱԿԲԵԹ

Դրանից բուժիր:

Չե՞ս կարող դեղ տալ միի հիվանդ մտքի,

Եվ արմատացած մի վիշտ դուրս քաշել հիշողությունից,

Ջնջել ուղեղից նրա մեջ դրված վրդովումները

Եվ մոռացաբեր քաղցր դեղթափով

Հստակել նրա խճողված կուրծքը այն նեխված նյութից,
Որ ծանրանում է նրա սրտի վրա:

ԲԺԻՇԿ

Այդպիսի դեպքում պետք է հիվանդը ինքն իրեն բուժի:

ՄԱԿԲԵԹ

Նետիր դեղերը շների առաջ: Էլ ինչի՞ս են պետք:

– Եկ, գրահս հազցրու:– Բժիշկ, թեները փախչում են ինձնից:

– Եկ, մարդ, շուտ արա:– Թե կարենայիր, բժիշկ վերլուծել

Իմ երկրի ջուրը, որոշել ախտը և մաքրող դեղով

Տալ նրան կրկին իր նախկին ստույգ առողջությունը,

Ես քեզ այնպես խիստ կծափահարեի,

Որ արձագանքը թնդար և նորից ծափահարեր քեզ:

– Քաշի՛ր, ասում եմ:– Ի՞նչ լուծողական, խավարծիլ, աճալ,

Կարո՞ղ է արդյոք մաքրել այստեղը անգլիացիներից:

Լսե՛լ ես արդյոք այդ մարդկանց մասին:

ԲԺԻՇԿ

Այո, բարի տեր. ձեր արքայական պատրաստությունից

Մի բան հասել է մեր ականջներին:

ՄԱԿԲԵԹ

Բեր իմ ետնից:

Վախ չունեմ մահից ու կործանումից

Մինչև Բիրնամի անտառը չգա Դունսինեյնի վրա:

Դուրս է գնում:

ԲԺԻՇԿ

Եթե կարենամ այս Դունսինեյնից օձիքս ազատել,

Աշխարհն էլ ինձ տան, ետ չեմ գա մեկ էլ:

Գնում է դուրս:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Մի դաշտ Բիրնամի անտառների մոտ:

*Գալիս են թմբուկներով և դրոշակներով՝ Մալկումը, Միվարդը, իր որդին,
Մակդուֆը, Մենտեթը, Կաթնեսը, Անգուսը, Լենոքսը, Ռոսը և զինվորներ՝
ռազմաքայլով:*

ՄԱԼԿՈՍ

Զարմիկներ, հուսանք, թե մոտ է օրը, երբ մեր տները
Ապահովություն կտեսնեն նորից:

ՄԵՆՏԵԹ

Տարակույս չունենք:

ՄԻՎԱՐԴ

Ի՞նչ անտառ է այս, որ մեր առջևն է:

ՄԵՆՏԵԹ

Բիրնամի անտառը:

ՄԻՎԱՐԴ

Ամեն մի զինվոր թող մի ճյուղ կտրի և բռնի իր դեմ:
Այդպես կծածկենք մեր գորքի թիվը
Եվ լրտեսներին կսխալեցնենք:

ԶԻՆՎՈՐ

Լավ, այդպես կանենք:

ՄԻՎԱՐԴ

Լուրն այն է միայն, որ բռնակալը՝ ինքն իր վրա վսասահ՝
Հանգիստ նստել է Դունսինեյնի մեջ
Եվ պիտի սպասի մեր պաշարելուն:

ՄԱԼԿՈՍ

Իր մեծ հույսն այդ է:
Քանզի ամեն տեղ, ուր որ հնար կար,
Թե՛ մեծ և թե՛ փոքր ապստամբել են:
Եվ ոչ ոք չկա նրան ծառայող,
Եթե ոչ միայն հարկադրվածներ, բացակա սրտով:

ՄԱԿԴՈՒՖ

Թող մեր կարծիքը սպասի մինչև բուն պատահարը:
Այժմ գոտեպինդ զինվորներ լինենք:

ՄԻՎԱՐԴ

Մոտ է այն ժամը, որ իր վճիռով մեզ հայտնի կանի,
Որքա՛ն ենք շահել և որքա՛ն տուժել
Տեսական խոհերն անհաստատ հույսեր կարող են բաշխել:
Սրերը միայն կարող են վճռել վերջնական ելքը,
Որին թող դիմի ճակատամարտը:

Գնում են ռազմի քայլերով:

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆՔԵՐՈՐԴ

Դունսինեյն: Ամբոցի ներսը:

*Գալիս են Մակբեթը, Սեյտոնը և զինվորներ՝ թմբուկներով և
դրոշակներով:*

ՄԱԿԲԵԹ

Մեր դրոշակները կախեցեք դրսի պատնեշի վրա:
Նույն աղաղակն է. «Ահա գալիս են»:
Մեր ամուր դրյակն ամեն պաշարում կարող է ծաղրել
Եվ արհամարհել: Թող նստեն այնտեղ,
Մինչև որ սովը և ջերմը լափի նրանց բոլորին:
Եվ եթե նրանք, որ պետք է հիմա մեզ հետ լինեին,
Չօգնեին նրանց, մենք կարող էինք

Արձակ-համարձակ դուրս գալ նրանց դեմ, ճակատ առ ճակատ
Եվ քշել նրանց մինչև տները:

Կանանց վայնասուն ներսից:

Ի՞նչ աղմակ է այս:

ՄԵՅՏՈՆ

Կանանց ճիչեր են, իմ բարի տերս:

Դուրս է գնում:

ՄԱԿԲԵԹ

Ես մոռացել եմ երկյուղի համը:

Կար մի ժամանակ, որ երբ գիշերանց մի ճիչ լսեի,
Զգայարանքս սարսուռ կզգային, մազերիս կաշին
Զարհուրանք ազդող մի պատմությունից վեր կբարձրանար
Եվ կդողդողար, որպես թե իրավ կյանք լիներ մեջը,
Այժմ ընթրել եմ կուշտ արհավիրքներով, և զարհուրելին,
Այժմ ընտելացած մարդասպանական խորհուրդներիս հետ,
Մի ցնցում անգամ չի կարող տալ ինձ:

Գալիս է Մեյտոնը:

Ի՞նչ աղաղակ էր:

ՄԵՅՏՈՆ

Թագուհին, տեր իմ, մեռավ:

ՄԱԿԲԵԹ

Հետո էլ կարող էր մեռնել.

Կգար ժամանաա այդ բառի համար
Վաղը, և վաղը, և դարձյալ վաղը Սողոմ է այսպես, հուշիկ, օրեցօր,
Մինչ վերջին վանկը հիշատակագրած գալիք դարերի:
Եվ այսպես բոլոր մեր երեկներս
Լուսավորել են խենթերի ուղին գեպի փոշոտ մահ:

Հանգիր դու, կարճ մոմ: Կյանքը մի քայլող ստվեր է միայն,
Մի խեղճ դերասան, որ բեմի վրա իր ժամին փքվում
Եվ բորբոքվում է, ու այնուհետև ձայնը չի լսվում.
Մի հեքիաթ է նա, հիմարի պատմած,
Լցված շառաչով և կատաղությամբ, առանց իմաստի:

Գալիս է մի լրաբեր:

Ի՞նչ է, գալիս ես լեզուդ բանեցնե՞ս, շուտ, պատմություն՝ ւնդ:

ԼՐԱԲԵՐ

Ողորմած տեր իմ, կուզեի մի բան հայտնել և ասել,
Թե այքով տեսա, բայց չեմ իմանում, թե ինչպե՛ս ասեմ:

ՄԱԿԲԵԹ

Դե լավ, մարդ, խոսի՛ր:

ԼՐԱԲԵՐ

Երբ հսկում էի բլուրի վրա,
Աչքս ընկավ դեպի Բիրնամի կողմը և հանկարծ թվաց,
Թե այն անտառը սկսեց շարժվել:

ՄԱԿԲԵԹ

Ստախո՛ւ սրիկա:

Զարկում է նրան:

ԼՐԱԲԵՐ

Թափեցեք գլխիս ձեր բարկությունը, եթե ճիշտ չէ այդ:
Երեք մղոնից կարող եք տեսնել առաջանալը:
Մի շարժուն անտա՛ռ, ասում եմ, տեր իմ:

ՄԱԿԲԵԹ

Եթե սուտ է այդ, առաջին ծառից քեզ կախել կտամ,
Մինչև որ քաղցը կոնծացնի քեզ: Իսկ եթե ճիշտ է,

Փուլթս չէ, եթէ ցու ինձ նույնն անես:

Պետք է ետ քաշեմ վստահությունս: Ես սկսում եմ
Կասկած հղանա չար սատանայի երկմիտ խոսքի վրա,
Որ սուտ է ասում ճշմարտի նման.

«Մի՛ վախիր, մինչև Բիրնամի անտառը չգա Դունսինեյն:

Եվ այժմ մի անտառ գալիս է իրոք մինչև Դունսինեյն:

– Ի զե՛ն, ի զե՛ն, դո՛ւրս: Եթէ երևա սրա ասածը,

Փախչելն էլ գուր է, այստեղ մնալն էլ:

Օ՛հ, սկսում են հոգնել արևից,

Երանի՛ ամբողջ աշխարհի կազմը քայքայվեր տեղից:

Հնչեցրեք զանգը:– Փչիր, հո՛ղմ: Եկ, ճա՛յթ:

Գոնե՛ գրահապատ ուզում ենք մեռնել:

Գնում են:

Տեսարան վեցերորդ

Դունսինեյն: Տափարակ մի դաշտ դոյակի առջև:

*Գալիս են փողերով և թմբուկներով՝ Մալկունը, ծեր Միվարդը. Մակդուֆը
և այլն: Հետո բանակը՝ ամեն զինվոր մի ճյուղ ձեռքին բռնած:*

ՄԱԼԿՈՄ

Բավական մոտ ենք:

Ձեր սաղարթային վարագույրները

Նետեցեք գետին և երևացեք այնպես, ինչպես կաք:

– Հարգո՛ մորեղբայր, դուք, ձեր քաջասիրա ազնիվ որդու հետ,

Կառավարեցեք, և մենք կվարենք մնացած գործը

Ըստ մեր ծրագրի:

ՄԻՎԱՐԴ

Բարի հաջողո՛ւմ:

Եթէ այս գիշեր մենք բռնակալի զորքին հանդիպենք

Եվ լավ չկռվենք, ծեծի ենք արժան:

ՄԱԿԴՈՒՑ

Հնչեցրեք բոլոր մեր շեփորները. ազատ շունչ տվեք
Մահու և արյան այդ ահեղաձայն մունետիկներին:

Դուրս են գնում: Երկարատև փողահարություն:

Տեսարան յոթերորդ

Դաշտի մի այլ մասը: Կռվի աղմուկ:

Գալիս է Մակբեթը:

ՄԱԿԲԵԹ

Կարծես մի ձողի կապած լինեն ինձ. չեմ կարող փախչել:

Այլ արջի նման պեաք է դեմ դնեմ ամբողջ գրոհին:

Ո՞վ է այն մարդը, որ մի կնոջից ծնված չլինի:

Նրանից միայն պետք է վախենամ, ուրիշ ոչ ոքից:

Գալիս է կրտսեր Սիվարդը:

ԿՐՏ. ՍԻՎԱՐԴ

Ի՞նչ է անունդ:

ՄԱԿԲԵԹ

Լսես, կսոսկաս:

ԿՐՏ. ՍԻՎԱՐԴ

Ո՛չ, եթե նույնիսկ ավելի այրող անուն ունենաս,

Քան կա դժոխքում:

ՄԱԿԲԵԹ

Անունս է Մակբե՛թ:

ԿՐՏ. ՍԻՎԱՐԴ

Դե՛ն էլ չէր կարող հնչել մի տիտղոս
Ականջիս համար այդքան ատելի:

ՄԱԿԲԵԹ

Եվ զարհուրելի:

ԿՐՏ. ՄԻՎԱՐԴ

Այդ մեկը սուտ է, անա՛րգ բռնակալ:
Հիմա այս սրով ցույց կտաամ սուտդ:

Մենամարտում են: Միվարդը սպանվում է:

ՄԱԿԲԵԹ

Կին է քեզ ծնել: Իսկ ես ժպտում եմ այն սրերի վրա
Եվ արհամարհում այնպիսի զենքեր,
Որ մի կնածին շողացնի իմ դեմ:

Գնում է: Կռվի աղմուկ: Գալիս է Մակդուֆը:

ՄԱԿՂՈՒՖ

Աղմուկն այս կողմն էր: –Բռնակա՛լ, դո՛ւրս եկ, ցո՛ւյց տուր երեսդ:
Եթե սպանվես, բայց ոչ իմ ձեռքով,
Ապա իմ կնոջ և զավակների ուրվականները
Հանգիստ չե՛ն տա ինձ: Չեմ կարող զարկել թշվառ քերներին,
Որոնց բազուկը վարձի համար է նիզակ ձեռք առել:
Կամ դո՛ւ, ով Մակբեթ, և կամ այս սուրս իր հատու սայրով
Պատյան կդնեմ ոչ մի գործ չարած:
Այս կողմն ես, կարծես, այս մեծ շաչունը ապացուցում է,
Որ մի մեծ ռազմիկ կռվում է այստեղ:
Ո՛վ բախտ, թույլ տուր ինձ, որ գտնեմ նրան,
Եվ ուրիշ ոչինչ չեմ խնդրում քեզնից:

Դուրս է գնում: Գալիս են Մակկոմը և Միվարդը:

ՄԻՎԱՐԴ

Ա՛յս կողմ, ազնիվ տեր, բերդը կամովին անձնատուր եղավ,
Նրանց մարդկանցից շատերն են անցել մեր բանակի մեջ:
Ազնիվ թեները շատ քաջ են կովում,
Հաղթությունն ինքը խոստովանում է, որ ձերն է արդեն:
Քիչ է մնացել:

ՄԱԼԿՈՄ

Մենք հանդիպեցինք թշնամիների,
Որոնք մեր կողքին պատերազմում են:

ՄԱԼԿՈՄ

Մտնենք դոյակը:

Դուրս են գնում, աղմուկ:

Գալիս է նորից Մակբեթը:

ՄԱԿԲԵԹ

Բա՛հ, ինչո՞ւ խաղամ այն հռովմայեցի հիմարի դերը
Եվ մեռնեմ ինքս իմ սրի վրա:
Քանի որ շուրջս կյանքեր եմ տեսնում,
Սրիս վերքերը նրանց են վայել:

Գալիս է Մակդուֆը:

ՄԱԿՂՈՒՖ

Եկ, դժոխքի շո՛ւն, դարձիր դեպի ինձ:

ՄԱԿԲԵԹ

Բոլոր մարդկանց մեջ քեզնից եմ խորշել: Ե՛տ գնա ինձնից:
Հոգիս արդեն շա՛տ ծանրաբեռնված է տոհմիդ արյունով:

ՄԱԿՂՈՒՖ

Ես բառեր չունեմ, ձայնս սրիս մեջ է, արյունախո՛ւմ շուն,
Ավելի անգութ, քան թե բառերը կարող են հայտնել:

Մենամարտում են:

ՄԱԿԲԵԹ

Ջանքդ իդուր է: Ավելի դյուրավ անխոցելի օդն
Այդ սուր սրովդ կարող ես ճեղքել, քան թե ինձ վերք տալ:
Վիրավորելի՛ գանգերի վրա իջեցրու սուրդ:
Կյանքս թովված է և տեղի չի տա
Կնոջից ծնված մի մարդու առաջ:

ՄԱԿԴՈՒՖ

Այդ թովչանքից էլ կտրիր քո հույսը:
Թող չար հրեշտակը, որին մշտապես ծառայել ես դու,
Հայտնի, թե Մակդուֆն իր մոր արգանդից վաղաժամ հատված
Եվ դուրս է բերված:

ՄԱԿԲԵԹ

Անե՛ճք այն լեզվին, որ ասաց ինձ այդ:
Դա իմ մարդկության լավագույն մասը ահաբեկ արեց:
Թող ոչ ոք այլևս հավատ չընձայի
Այն աճապարար սատանաներին,
Որ երկմիտ խոսքով մեզ ծաղր են անում:
Նրանք պահում են խոստումի բառը ականջի հանդեպ,
Բայց բեկանում են մեր հույսի հանդեպ: Չեմ կովի քեզ հետ:

ՄԱԿԴՈՒՖ

Անձնատուր եղիր, ուրեմն, ո՛վ տմարդ,
Եվ ապրիր որպես ցույց և տեսարան աշխարհի համար:
Քեզ կնկարենք, որպես հազվագյուտ մեր հրեշներին՝
Ցուցանակի վրա, տակն էլ կգրենք.
«Այստեղ կտեսնեք չար բռնակալին»:

ՄԱԿԲԵԹ

Ոչ, ես անձնատուր չե՛մ լինի երբեք:
Տղա Մակդուֆի ոտքերի առաջ հող համբուրելու,
Անարգ խուժանի հայհոյանքները կրելու համար:
Թեև Բիրնամի անտառն էլ եկավ մինչև Դունսինեյն,
Եվ դու, ոսոխս, թեև չլինես կնոջից ծնված,
Դարձյալ կվարձեմ իմ վերջին ուժը:
Ռազմափորձ վահանս դեմս կբռնեմ: Դեհ, զարկիր, Մակդուֆ:
Եվ դժո՛խք գնա, ով առաջինը «բավական» գոչի:

Դուրս են գնում մենամարտելով:

*Գալիս են փողերով, թմբուկներով և դրոշակներով՝ Մալկոմը, ձեր
Միվարդը, Ռոսը, թեներ և զինվորներ:*

ՄԱԼԿՈՄ

Տա՛ր աստված, որ այն բարեկամները, որոնք պակաս են,
Ողջամբ ետ գալին:

ՄԻՎԱՐԴ

Կան և մեկնածներ:
Մակայն դատելով այս ներկաներից,
Այսչափ մեծ մի օր էժան է նստել:

ՄԱԼԿՈՄ

Մակդուֆն է պակաս և ձեր քաջ որդին:

ՌՈՍ

Ձեր որդին, տեր իմ, վճարեց արդեն զինվորի պարաքը:
Նա ապրեց մինչև տղամարդ դարձավ,
Եվ հազիվ թե նա իր քաջությունով ապացուցեց այդ,
Աննահանջ դիրքում, ուր կռվում էր նա, մեռավ որպես մարդ:

ՄԻՎԱՐԴ

Մեռա՛վ, ուրեմն:

ՌՈՍ

Այո, և դաշտից վերցրին նրան:

Ձեր սրտի ցավը չպետք է չափվի նրա արժեքով,

Այլապես պետք է վախճան չունենա:

ՄԻՎԱՐԴ

Իր վերքերն արդյոք առջևի՞ց էին:

ՌՈՍ

Այո, ճակատից:

ՄԻՎԱՐԴ

Ուրեմն՝ աստծո թող զինվոր դառնա:

Հերքիս համրանքով եթե որդիներ ունենայի իսկ,

Նրանց ավելի գեղեցիկ մի մահ չէի ցանկանա:

Նրա մահազանգն այսքանով բավ է:

ՄԱԼԿՈՍ

Ավելի սուգի արժանի է նա. ե՛ս կհատուցեմ:

ՄԻՎԱՐԴ

Այսքանի՛ն միայն արժանի է նա:

Ահա ասում են, թե նա լավ մեկնեց և պարտքը տվեց:

Աստված նրա հետ: Տեսեք, գալիս է մեզ նոր սփոփանք:

Գալիս է Մակդուֆը՝ Մակբեթի գլուխը բերելով:

ՄԱԿՆՈՒՖ

Ողջո՛ւյն, թագավո՛ր, քանզի այդ ես դու:

Նայիր, թե ո՛ւր է հափշտակողի անիծյալ գլուխը:

Աշխարհն ազատվեց: Ահա տեսնում եմ քեզ շրջապատված

Թագավորությանդ մարգարիտներով,

Որոնք կրկնում են իմ այս ողջույնը իրենց մտքի մեջ:

Խնդրում եմ ինձ հետ բարձրաձայն գոչեն,
Ողջո՛ւյն, թագավո՛ր Սկովտիայի:

ԱՄԵՆՔԸ

Ողջո՛ւյն, թագավո՛ր Սկովտիայի:

Փողահարություն:

ՄԱԼԿՈՄ

Պետք չէ, որ երկար ժամանակ վատնենք
Զատ-զատ փակելու սիրո հաշիվը ամեն մեկիդ հետ
Եվ հատուցելու ինչ որ պարտ ենք ձեզ:
Իմ հարգի թեներ և ազգականներ, կոմս եք այսօրից,
Առաջինները, որոնց Սկովտիան արժանացրել է
Այսպիսի պատվի: Ինչ որ մնում է գեռևս անելու
Եվ ժամանակով նորից ցանելու,
Ինչպես, տուն կանչել մեր վտարանդի բարեկամներին,
Որոնք մշտաբար բռնակալության որոգայթներից
Փախել են դուրսը, դատել անողորմ պաշտոնյաներին՝
Այս մսագործի և դիվահոգի նրա թագուհու,
Որ իր սեփական և, բռնի ձեռքով, ինչպես կարծվում է,
Իր կյանքը կարճեց: Այս և այսպիսի անհրաժեշտ գործեր,
Որոնք մեզ վրա պարտադրված են շնորհիվ Շնորհի,
Մենք կկատարենք ըստ չափի, տեղի և ժամանակի:
Այսպես, ամենքիդ և ամեն մեկիդ շնորհակալություն:
Հրավիրում ենք ձեզ բոլորիդ Սկոն՝ մեր թագադրության:

Փողեր: Գնում են: